



Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ բնակավայրի տարածքում նախատեսվող 5ՄՎտ հզորությամբ արևային կայանի կառուցման

ՇՄԱԳ հաշվետվություն

2025թ. հունվար


**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾ ՄԱՍՐԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ 5ՄՎՏ ՀԶՈՐՈՒԹՅԱՄԲ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ**



**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ (ՇՄԱԳ) ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Կատարող՝

«Քոնսեկոարդ» ՍՊԸ տնօրեն՝



Երևան, 2025թ.





## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

|       |   |
|-------|---|
| ՇԿ    | Շինարարության կապալառու                                 |
| ԲՀՏ   | Բնապահպանության և հանքարդյունաբերության տեսչություն     |
| ՇՄՍԱԳ | Շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատում |
| ԲՍԿՊ  | Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան              |
| ԱԱՇՄ  | Առողջություն, անվտանգություն, շրջակա միջավայր           |
| ԻԳ    | Իրականացնող գործակալություն                             |
| ԿՎ    | Կիլովոլիտ   |
| ԿՎտժ  | Կիլովատտ-ժամ  |
| ՏԻՄ   | Տեղական ինքնակառավարման մարմին                          |
| ՄՎտժ  | Մեգավատտ-ժամ  |
| ԲՆ    | Բնապահպանության նախարարություն                          |
| ՍԿ    | Սպասարկման (շահագործման) կապալառու                      |
| ՕՀԳ   | Օդային հաղորդման գիծ                                    |
| ԾԱԱ   | Ծրագրի ազդակիր անձինք                                   |
| ՖՄՌ   | Ֆիզիկական մշակութային ռեսուրսներ                        |
| ԱՊՄ   | Անհատական պաշտպանության միջոցներ                        |
| ՀՀ    | Հայաստանի Հանրապետություն                               |
| ՊՈԱԿ  | Պետական ոչ առևտրային կազմակերպություն                   |



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|        |  |    |
|--------|--|----|
| 1.     | ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ .....  | 5  |
| 2.     | ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ.....   | 5  |
| 3.     | ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ .....                                 | 6  |
| 3.1.   | ՀՀ ազգային օրենսդրությունը.....  | 6  |
| 3.2.   | Հայաստանի Հանրապետության մասնակցությունը միջազգային նապահպանական կոնվենցիաներին..... | 13 |
| 3.3.   | Վարչական (կազմակերպական) շրջանակը.....   | 15 |
| 4.     | ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ .....                             | 18 |
| 5.     | ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....  | 22 |
| 5.1.   | Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը և երկրաբանական կառուցվածքը.....                         | 22 |
| 5.2.   | Սեյսմիկ պայմանների բնութագիրը.....   | 24 |
| 5.3.   | Հիդրոերկրաբանություն .....   | 29 |
| 5.4.   | Կլիմա և օդային ավազան .....  | 30 |
| 5.5.   | Մթնոլորտային օդ.....   | 33 |
| 5.6.   | Աղմուկ և թրթռում .....   | 34 |
| 5.7.   | Մակերևութային ջրերի որակի բնութագիրը .....   | 35 |
| 5.8.   | Ջրային ռեսուրսներ.....   | 35 |
| 5.9.   | Հողային ռեսուրսներ.....  | 40 |
| 5.10.  | Կենսաբազմազանություն.....  | 42 |
| 5.10.1 | Բուսական աշխարհ .....  | 43 |
| 5.10.2 | Կենդանական աշխարհ.....   | 46 |
| 5.11.  | Բնության հատուկ պահպանվող տարածքներ .....  | 48 |
| 5.12.  | Պատմամշակութային և բնության հուշարձաններ.....  | 49 |
| 5.13.  | Բնության հուշարձաններ .....  | 55 |
| 5.14.  | Սոցիալական և մշակութային ռեսուրսներ.....   | 56 |
| 6.     | ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ.....   | 61 |
| 6.1.   | Նախատեսվող գործունեության բնութագիրը.....  | 61 |
| 6.2.   | Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ.....   | 61 |
| 6.3.   | Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակացույցը.....                            | 69 |
| 7.     | ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ .....  | 70 |
| 7.1.   | <<Ոչ մի գործողություն>> այլընտրանքային տարբերակ.....                                 | 70 |
| 7.2.   | Ծրագրի առավելությունները .....   | 71 |



|         |  |    |
|---------|--|----|
| 8.      | ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՄՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ .....   | 71 |
| 8.1.    | Զուր.....  | 71 |
| 8.2.    | Օգտագործվող նյութեր, .....   | 72 |
| 9.      | ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՄՎՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ<br>ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ.....  | 73 |
| 9.1.    | Շինարարական փուլի ազդեցությունը և մեղմող միջոցառումները .....  | 73 |
| 9.1.1.  | Օդային ավազան.....   | 73 |
| 9.1.2.  | Զրային ավազան .....  | 76 |
| 9.1.3.  | Թափոնների կառավարում .....   | 76 |
| 9.1.4.  | Հողային ռեսուրսներ .....   | 77 |
| 9.1.5.  | Կենսաբազմազանություն .....   | 78 |
| 9.1.6.  | Պատմամշակութային հուշարձաններ .....  | 79 |
| 9.1.7.  | Էկոլոգիապես զգայուն տարածքներ .....  | 79 |
| 9.1.8.  | Արտակարգ իրավիճակներ. ....   | 80 |
| 9.1.9.  | Աղմուկ և թրթռում .....   | 80 |
| 9.1.10. | Սոցիալական ազդեցությունների մեղմացումը շինարարության փուլում .....   | 81 |
| 9.1.11. | Աշխատանքի անվտանգություն և առողջություն .....  | 82 |
| 9.1.12. | Հակահրդեհային միջոցառումներ.....   | 83 |
| 9.1.13. | Բարեկարգում և կանաչապատում .....   | 83 |
| 9.2.    | Բնապահպանական ազդեցությունները և դրանք մեղմող միջոցառումները կայանի<br>շահագործման փուլում .....   | 84 |
| 9.2.1.  | Օդային ավազան. ....  | 84 |
| 9.2.2.  | Զրային ռեսուրսներ.....   | 84 |
| 9.2.3.  | Թափոնների կառավարում .....   | 84 |
| 9.2.4.  | Հողային ռեսուրսներ .....   | 85 |
| 9.2.5.  | Կենսաբազմազանություն.....  | 85 |
| 9.2.6.  | Աղմուկ.....  | 85 |
| 9.3.    | Տարածքի վերականգնում կայանի շահագործումից հետո.....  | 86 |
| 9.4.    | Սոցիալական ծրագիր.....   | 86 |
| 10.     | ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՀԱՍՑՎՈՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ .....  | 86 |
| 11.     | ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ.....   | 88 |
| 12.     | ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ<br>ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅԱՆ<br>ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ..... | 89 |





|   |     |
|---|-----|
| ՀԱՎԵԼՎԱԾ 1՝ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ.<br>ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ..... | 91  |
| ՀԱՎԵԼՎԱԾ 2՝ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ<br>ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ .....        | 108 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 3՝ «ՀԷՑ»ՓԲԸ-Ի ՏԵԽՆԻԿԱԿԱՆԱՆ ՊԱՅՄԱՆ .....  | 110 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 4՝ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ.....                                   | 111 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 5՝ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՎԿԱՅԱԿԱՆ.....  | 119 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 6՝ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ                              | 121 |



## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

|   |   |
|---|---|
| Ձեռնարկող                                   | «ՄԵԾ ՄԱՍՐԻԿ» ՍՊԸ<br>Տնօրեն՝ Կարեն Հայկի Արաբյան   |
| Ձեռնարկողի իրավաբանական հասցեն              | ՀՀ ք. Երևան, Վ. Սարգսյան փ. / 2 / 10 / 98<br>տարածք Կենտրոն   |
| Ձեռնարկողի էլեկտրոնային հասցե               | karen.arabyan@ambercapital.am   |
| Պետական ռեգիստրի գրանցման համարը            | 52.110.1312527  |
| Գրանցման տարեթիվը                           | 19.04.2023թ.  |
| Նախատեսվող գործունեության անվանումը         | Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ բնակավայրի տարածքում նախատեսվող 5ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցում (արևային էլեկտրակայաններ՝ 3 հա եւ ավելի տարածք զբաղեցնող) |
| Նախատեսվող գործունեության նպատակը           | Արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցում  |
| Նախատեսվող գործունեության իրականացման վայրը | ՀՀ Գեղարքունիքի մարզ, համայնք Վարդենիս, Մեծ Մասրիկ բնակավայր  |
| ՇՄԱԳ հաշվետվության մշակող                   | «Քոնսեկոարդ» ՍՊԸ  |

## 2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Նախատեսվող կայանը կառուցվելու է սեփականության իրավունքով «ՄԵԾ ՄԱՍՐԻԿ» ՍՊԸ պատկանող հողամասում, որը գտնվում է Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ բնակավայրի 1-ին փողոց 12-րդ նրբանցք, 2-րդ հողամաս հասցեում: Տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 6 հա (վկայականը ներկայացված է Հավելված 2-ում): Նշված տարածքում նախատեսվում է կառուցել 5ՄՎտ հզորության արևային ֆոտովոլտային էլեկտրակայան: Նշված տարածքի հարևանությամբ առկա է արդեն իսկ շահագործվող ևս մեկ արևային կայան:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2023թ. հուլիսի 19-ի, №238-Ա որոշման համաձայն՝ «ՄԵԾ ՄԱՍՐԻԿ» ՍՊ ընկերությանը տրամադրվել է ԼԷ№0747 էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիա՝ մինչև 2045թ. հուլիսի 20-ը գործողության ժամկետով (Հավելված 4): «ՄԵԾ ՄԱՍՐԻԿ» ՍՊ ընկերությունը դիտարկում է արևային էլեկտրակայանի արտադրած էներգիայի վաճառք՝ երկարաժամկետ ժամանակահատվածում: Այն էներգետիկ համակարգի կայունությանը նպաստող ծրագիր է, ինչպես նաև այլընտրանքային էներգետիկայի ոլորտում ներդրում, որը դրական ազդեցություն կունենա երկրում տնտեսական,





բնապահպանական, էներգետիկ և ռազմավարական ուղղությունների զարգացման վրա:

Ներկայումս, նշված տարածքում չի իրականացվում որևէ գործունեություն:

### 3. ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Սույն գլուխը ներկայացնում է արևային կայանների շինարարությանն ու շահագործմանն առնչվող շրջակա միջավայրի վրա ազդեցությունը կարգավորող ազգային և միջազգային իրավական և մեթոդական փաստաթղթերը, ներառյալ բնապահպանական քաղաքականությունը, շրջանակային և ճյուղային օրենսդրական ակտերը՝ հողային հարաբերությունների, առողջության և անվտանգության հարցերով:

#### 3.1. ՀՀ ազգային օրենսդրությունը

##### *Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն*

Ըստ ՀՀ Սահմանադրության (ընդունվել է 1995թ., փոփոխվել 2005 և 2015 թվականներին) 10-րդ հոդվածի «Պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը»:

Հոդված 33.2-ով սահմանված է որ. «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը»:

1991 թվականից առ այսօր ավելի քան 25 օրենսգրքեր և օրենքներ են ընդունվել, որոնք կարգավորում են շրջակա միջավայրի հետ կապված իրավահարաբերությունները:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և պաշտպանության մասին համապատասխան ազգային օրենքը հետևյալն է.

✓ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ Օրենք (հունիսի 21, 2014): Սույն հաշվետվությունը մշակվել է համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին (մայիսի 3, 2023) օրենքի դրույթների և պահանջների:

Կարևոր է նաև հաշվի առնել բնապահպանական որոշող կարգավորող հետևյալ իրավական ակտերը.

- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (1991, թարմացված 2006-ին),
- ՀՀ բնակչության սանիտարահամաձարակային անվտանգությունն ապահովող օրենք (1992),
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին օրենք» (1994 թ.),
- «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998),



- «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենք (1998),
- «Բուսական աշխարհի մասին» (1999) օրենք,
- «Կենդանական աշխարհի մասին» օրենք (2000),
- «ՀՀ հողային օրենսգիրք» (2001),
- «Հիդրոօթերևութաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքը (2001),
- «Բնապահպանական կրթության մասին» ՀՀ օրենք (2001),
- «Ընդերքի մասին օրենսգիրքը» (2002),
- «ՀՀ ջրային օրենսգիրք» (2002),
- «Սելյամիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (2002),
- «Թափոնների մասին» օրենք (2004),
- «Ջրօգտագործողների միությունների և ընկերությունների մասին» օրենքը (2002),
- «Բնապահպանական վերահսկողության մասին» օրենք (2005),
- «Անտառային օրենսգիրքը» (2005),
- «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքը (2006),
- «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենք (1998),
- «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենք (1996),
- «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքը (2006),
- «Սևանա լճի մասին ՀՀ օրենքը (2001),
- «Հողօգտագործման հսկողության և պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (2008 թ.),
- «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2014 թ. նոյեմբերի 19-ի N 1325-N որոշում,
- 2002 թվականի մայիսի 30-ի՝ «Սևան ազգային պարկ» պետական հիմնարկը վերակազմակերպելու, «Սևան ազգային պարկի և «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կանոնադրությունը հաստատելու մասին 927-Ն որոշում,
- 2014 թվականի սեպտեմբերի 25-ի՝ ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին 1059-Ա որոշում,
- «Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 71-Ն որոշում,
- «Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 72-Ն որոշում,
- «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2014 թվականի





հուլիսի 31-ի N 781 որոշում,

➤ ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում,

➤ ՀՀ Առողջապահության նախարարի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնները եվ նորմերը հաստատելու մասին հրաման,

➤ «Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման եվ օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշում:

Գնահատման ընթացքում հաշվի են առնվել նաև բնապահպանական այլ օրենքների որոշ դրույթներ: Դրանք առնչվում են օդի պահպանությանը, մշակութային և պատմության հուշարձաններին, բուսական և կենդանական աշխարհներին, ջրօգտագործմանը, սեյսմիկ պաշտպանությանը, թափոններին, հիգիենային և աշխատողների պաշտպանությանը, ինչպիսիք են`

***Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք***

Հողօգտագործման և հողի աղտոտման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքով (ընդունված 02.05.2001): Ելնելով օրենսգրքի պահանջներից ՀՀ կառավարության կողմից ընդունվել են “Հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջների և ռեկուլտիվացման ենթակա` խախտված հողերի դասակարգման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին” (29.05.2006 թիվ 750-Ն), “Հողերն աղտոտումից պահպանելու ընդհանուր պահանջների, հողն աղտոտող վնասակար նյութերի ցանկի և հողերի աղտոտվածության աստիճանի գնահատման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին” (24.08.2006 թիվ 1277-Ն), “Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին” (02.11.2017 թիվ 1404-Ն), ինչպես նաև 02.11.2017 N1404-Ն որոշումները:

ՀՀ Կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգը» ընդունվել է ՀՀ փոխվարչապետի N1352-Ն հրամանով:

***Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգիրք***

Ջրօգտագործման, ջրահեռացման, մակերեսային և ստորգետնյա ավազանների օգտագործման և պահպանության հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով (ընդունված 04.06.2002) և Հայաստանի Հանրապետության «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» օրենքով:

ՀՀ մակերևութային ջրերի էկոլոգիական նորմերը սահմանվել են ՀՀ



կառավարության 27.01.2011թ. N75-Ն որոշմամբ հաստատված “Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմեր”-ով:

***Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգիրք***

ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պահպանության խնդիրները, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերք օգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության 2011թ. նոյեմբերի 28 ընդերքի մասին օրենսգրքով:

***Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք***

Սույն օրենսգիրքը ընդունվել է 2004 թվականի նոյեմբերի 9-ին, այն կարգավորում է կոլեկտիվ եւ անհատական աշխատանքային հարաբերությունները, սահմանում է այդ հարաբերությունների ծագման, փոփոխման եւ դադարման հիմքերն ու իրականացման կարգը, աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվությունը, ինչպես նաև աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանները:

Աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է աշխատողի եւ գործատուի միջև, կազմված համաձայն ածխատանքային օրենսգրքի, այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների հիման վրա:

***“Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին” Հայաստանի Հանրապետության օրենք (2014)***

Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության, համաձայն “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” 2014թ.-ի Հայաստանի Հանրապետության օրենքի: Վերը նշված օրենքի 12-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրությամբ փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները:

Օրենքը դասակարգում է գործունեության տեսակները ըստ ծավալների և ազդեցության մակարդակի՝ “Ա” և ”Բ” կատեգորիաների: Կատեգորիաները որոշված են





ելնելով գործունեության ծավալներից և շրջակա միջավայրի վրա ազդեցության մակարդակից:

Փորձաքննությունն իրանացվում է մեկ փուլով՝ երկու հանրային լսումներով: Առաջին հանրային լսումը կազմակերպվում է ազդակիր համայնքի կողմից: Հանրային լսումից և քննարկումից հետո, քննարկման նյութերը, ՇՄԱԳ հաշվետվությունը և օրենքով պահանջով այլ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվում են ՀՀ շրջակա մջավայրի նախարարություն:

“Ա” կատեգորիայի համար փորձաքննությունը տևում է 80 աշխատանքային օր, իսկ “Բ” կատեգորիայի համար՝ 40 աշխատանքային օր, որի ընթացքում կազմակերպվում են երկրորդ հանրային քննարկումները: Գործընթացի ավարտին տրվում է փորձաքննական եզրակացություն:

***“Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին” ՀՀ օրենք /12.12.1992թ./***

Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման իրավական, տնտեսական եւ կազմակերպական հիմքերը, ինչպես նաեւ պետության կողմից նախատեսվող այն երաշխիքները, որոնք բացառում են մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար եւ վտանգավոր գործոնների ազդեցությունը եւ բարենպաստ պայմաններ ապահովում նրա եւ ապագա սերունդների կենսունակության համար:

***“Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին” ՀՀ օրենք /04.03.1996թ./***

Սույն օրենքը սահմանում է մարդու առողջության պահպանման սահմանադրական իրավունքի իրականացումն ապահովող բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման, իրավական, տնտեսական եւ ֆինանսական հիմունքները:

***«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք***

Օրենքն ընդունվել է 1998 թվականի նոյեմբերի 11-ին:

Սույն օրենքը սահմանում է հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառի իրավական հիմքերը: Այն կարգավորում է գործունեության ընթացքում ծագող հարաբերությունները:

Հոդված 15-ում ներկայացվում է Հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության ապահովման միջոցառումների համակարգը, այդ թվում՝ հուշարձանների հայտնաբերումը և պետական հաշվառումը, հուշարձանների պահպանության գոտիների սահմանումը:

Հոդված 22-ում ներկայացվում է հուշարձաններ ներառող տարածքներում շինարարական և այլ աշխատանքների համար հողի հատկացումները, նախագծերի



համաձայնեցումը և այդ աշխատանքների ընթացքում հուշարձանների պահպանության ու անվթարության ապահովումը:

***Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի մասին օրենք***

ՀՀ պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում սահմանում է «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքը (ընդունված 23.11.1999 թ.):

***Հայաստանի Հանրապետության կենդանական աշխարհի մասին օրենք***

ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը սահմանում է «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքը (ընդունված 03.04.2000թ.):

Այս օրենքների պահանջների կատարումը ապահովելու համար ՀՀ կառավարության կողմից 29.01.2010 թ. թիվ 71-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ կենդանիների կարմիր գիրքը և 29.01.2010 թ. թիվ 72-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ բույսերի կարմիր գիրքը:

***Հայաստանի Հանրապետության թափոնների մասին օրենք***

Թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը կարգավորվում են «Թափոնների մասին» ՀՀ օրենքով (ընդունված 24.11.2004):

ՀՀ բնապահպանության նախարարի 26.11.2006 թ. N 342-Ն հրամանով հաստատել է «ՀՀ տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկը»:

ՀՀ բնապահպանության նախարարի 25.12.2006 թ. N 430-Ն հրամանով հաստատել է «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը»:

***Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենք (2005)***

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման խնդիրները եւ սահմանում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, կարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների եւ բնապահպանական վերահսկողության իրավական ու տնտեսական հիմքերը:





**Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենք**

Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները կարգավորում է «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (ընդունված 27.11.2006 թ.):

**Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին»**

Նշված սանիտարական նորմերով սահմանվել են արտադրական, սպասարկման և այլ տեսակի գործունեության արդյունքում առաջացող աղմուկի ազդեցության մակարդակը և ցուցանիշները:

**Առողջապահության նախարարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներ:**

**Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 17 մայիսի 2006 թվականի N533-Ն հրաման «Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին»**

Հիգիենիկ նորմերը սահմանում են թրթռման դասակարգումը, նորմավորվող չափորոշիչները, աշխատատեղում թրթռման սահմանային թույլատրելի մակարդակները ու բնակելի և հասարակական շենքերում թրթռման թույլատրելի մակարդակները:

**«Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգը» (հաստատվել ՀՀ նախագահի կողմից 23.10.2013թ.)**

Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգը (այսուհետ՝ Հայեցակարգ) նպատակաուղղված է ապահովելու Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգությունը՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության դրույթներին համահունչ:

Էներգետիկ անվտանգությունը քաղաքական, տնտեսական, իրավական, կազմակերպական, մեթոդական և այլ բնույթի միջոցառումների համալիր է, որն ապահովում է պետության կարիքների բավարարման համար մատչելի գներով,



որակյալ և հուսալի էներգամատակարարում ամենօրյա պայմաններում, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում և պատերազմի ժամանակ:

Այս փաստաթուղթը նաև նպատակ ունի երաշխավորել, որ ՀՀ ներգրավվելու է միջազգային կազմակերպությունների, Եվրամիության, Ռուսաստանի Դաշնության և ԱՄՆ կողմից կազմակերպվող տարածաշրջանային ծրագրերին և ընդգծում է էներգետիկ ռեսուրսների և վառելիքի երկարաժամկետ ռազմավարական ծրագրերի կարևորությունը:

### 3.2. Հայաստանի Հանրապետության մասնակցությունը միջազգային նապահպանական կոնվենցիաներին

Հայաստանի Հանրապետությունը ստորագրել և վավերացրել է մի շարք միջազգային կոնվենցիաներ և արձանագրություններ՝ առաջինը ստորագրելով Ռամսարի կոնվենցիան 1993 թ.-ին՝ խոնավ տարածքների պահպանության մասին: Այս ծրագրի համար առանձնահատուկ կարևորություն ունի այն փաստը, որ ՀՀ-ն փոխարինել է նախկին ԽՍՀՄ սահմանումներով մշակված բույսերի և կենդանիների Կարմիր գրքերը՝ ԲՊՄՄ չափորոշիչներին համապատասխան: Սույն ՇՄԱԳ հաշվետվությունը հիմնված է ԲՊՄՄ Կարմիր գրքերի վրա: Աղյուսակ 1-ում թվարկվում են համաշխարհային և տարածաշրջանային նշանակության բնապահպանական և մշակութային միջազգային այն կոնվենցիաներն ու համաձայնագրերը, որոնք ստորագրվել և/կամ վավերացվել են Հայաստանի Հանրապետության կողմից:

Աղյուսակ 1: Միջազգային բազմակողմանի բնապահպանական համաձայնագրեր, որոնք ստորագրվել և վավերացվել են Հայաստանի Հանրապետության կողմից:

|   | Կոնվենցիա կամ արձանագրություն. ընդունման օրն ու վայրը  | Ուժի մեջ է մտել | Ստորագրվել է | Վավերացվել է  | Մեկնաբանություն               |
|---|--|-----------------|--------------|---|-------------------------------|
| 1 | Միջազգային նշանակության խոնավ տարածքների, հատկապես՝ ջրլող թռչունների բնադրավայրերի մասին, (Ռամսար, 1971) | 1993            | 1993         | Որպես իրավահաջորդ անդամա կցվել է ՀՀ ԱԳՆ պահանջով, 1993 թ. |                               |
| 2 | Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա (Ռիո դե Ժանեյրո, 1992)                                       | 1993            | 1992         | 1993  | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1993 թ |
| 3 | Կենսաբանական անվտանգության մասին կարթագենյան արձանագրություն (Կարթեգենյա, 2000)                          | 2004            | 2000         | 2004  |                               |



|    | Կոնվենցիա կամ արձանագրություն. ընդունման օրն ու վայրը  | Ուժի մեջ է մտել | Ստորագրվել է | Վավերացվել է | Մեկնաբանություն               |
|----|--|-----------------|--------------|--------------|-------------------------------|
| 4  | Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք, 1992)  | 1994            | 1992         | 1993         | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1993 թ |
| 5  | Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997)  | 2005            | 1997         | 2002         | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1993 թ |
| 6  | Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին կոնվենցիա (ժնև, 1979)   | 1997            | 1979         | 1996         | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ |
| 7  | ՄԱԿ-ի ԵՏՀ «Անդրսահմանյան համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիա (Էսպու, 1991թ.)  | 1997            | 1991         | 1996         | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ |
|    | «Ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին» արձանագրություն (Կիև 2003թ.)  | 2011            | 2003         | 2010         |                               |
| 8  | ՄԱԿ-ի ԵՏՀ «Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցության մասին» կոնվենցիա (Յելսինկի, 1992թ.)   | 1997            | 1992         | 1996         | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ |
|    | Աղտոտիչների արտանետման և տեղափոխման ռեգիստրների մասին արձանագրություն (Կիև, 2003)  |                 | 2003         |              |                               |
| 9  | Անապատացման դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի կոնվենցիա (Փարիզ, 1994)  | 1997            | 1994         | 1997         | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ |
| 10 | Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանման մասին կոնվենցիա (Բազել, 1989)  | 1999            | 1989         | 1999         | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1999 թ |
| 11 | Օզոնային շերտի պահպանության մասին կոնվենցիա (Վիեննա, 1985)   | 1999            | 1989         | 1999         | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1999 թ |
|    | Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին Մոնրեալի արձանագրություն (Մոնրեալ, 1987)  | 1999            | 1987         | 1999         | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1999 թ |
| 12 | ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրհուս 1998թ.) | 2001            | 1998         | 2001         |                               |
|    | Միջազգային առևտրում առանձին  | 2003            | 1998         | 2003         |                               |





|    | Կոնվենցիա կամ արձանագրություն. ընդունման օրն ու վայրը   | Ուժի մեջ է մտել | Ստորագրվել է | Վավերացվել է | Մեկնաբանություն  |
|----|---|-----------------|--------------|--------------|--|
| 13 | վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի կիրառման մասին կոնվենցիա (Ռոտերդամ, 1998) |                 |              |              |  |
| 14 | ՄԱԿ-ի ԵՏՀ «Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցության մասին» կոնվենցիա (Հելսինկի, 1992թ.)  | 1997            | 1992         | 1996         |  |
|    | Ջրի և առողջության մասին արձանագրություն (Լոնդոն, 1999)  |                 |              |              | Վավերացման գործընթացում է                                |
| 15 | Կայուն օրգանական ադոտոտիչների մասին Ստոկհոլմի կոնվենցիա (Ստոկհոլմ, 2001)  | 2004            | 2001         | 2003         |  |
| 16 | Շրջակա միջավայրի փոխակերպման տեխնիկական միջոցների ռազմական կամ այլ կարգի թշնամական օգտագործումն արգելելու մասին կոնվենցիա (Ժնև, 1976)           | 2002            | 1976         | 2001         | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 2002 թ                            |
| 17 | Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենսիա, 2000)  | 2004            | 2000         | 2004         |  |
| 18 | Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին կոնվենցիա (Փարիզ, 1972)  | 1993            | 1972         | 1993         | Որպես իրավահաջորդ անդամակցվել է ՀՀ ԱԳՆ պահանջով, 1993 թ. |
| 19 | Էներգետիկ կանոնադրության պայմանագիր (Լիսաբոն, 1994 թ.)  |                 | 1994         |              |  |
|    | Էներգախնայողության և հարակից բնապահպանական ասպեկտների վերաբերյալ Էներգիայի կանոնադրության արձանագրություն (Լիսաբոն, 1994)                       |                 | 1994         |              |  |
| 20 | Բեռնի կոնվենցիա- Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին Եվրոխորհրդի կոնվենցիա (Բեռն, 1979)                               | 2008            | 1979         | 2008         |  |

### 3.3. Վարչական (կազմակերպական) շրջանակը

Այս բաժնում ներկայացված են նախագծի իրականացման մեջ ներառված հիմնական մասնակիցները և ամփոփվում է դրանց դերը եւ պարտականությունները, առաջնահերթ, բայց ոչ բացառապես բնապահպանական տեսանկյունից:



**Իրականացնող գործակալություն (ԻԳ)**

Ներկայացվող գործունեության ձեռնարկող է հանդիսանում՝ «ՄԵԾ ՄԱՍՐԻԿ» ՍՊԸ-ն (Գրանցաման համար – 52.110.1312527), որի գրասենյակի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Վ. Սարգսյան փ. / 2 / 10 / 98 տարածք, Կենտրոն:

Մասնավորապես ՇՄԱԳ շրջանակներում, ԻԳ-ն պատասխանատու է լինելու ամբողջ նախագծի իրականացման մոնիթորինգի համար, որը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով՝

➤ Հետևել, որ բնապահպանական կառավարման պլանի բոլոր պահանջները՝ (ներառյալ բնական միջավայրի պահպանության պլանավորումը և մեղմացնող միջոցառումները), կապված նախագծի իրականացման հետ, պատշաճորեն ներառվեն ծրագրի մրցութային փաստաթղթերի մեջ:

➤ Հետևել, որ բոլոր անհրաժեշտ թույլտվությունները և/կամ համաձայնությունները, որոնք պահանջվում են համապատասխան կառավարական մարմինների կողմից, կայանը կառուցողը ստանա նախքան նախագծի շրջանակներում որևէ շինարարական աշխատանքների մեկնարկը:

➤ Համոզվել, որ կայանը կառուցողները (կապալառուներ) լիարժեք կերպով պատկերացնում են իրենց պարտականությունները՝ շրջակա միջավայրի պահպանության խնդիրների մեղմացման հարցում՝ կապված ԲԿՊ իրականացման ընթացքում աշխատակազմի հավաքագրման և վերապատրաստման հետ:

➤ Կայանը կառուցողի կողմից ԲԿՊ իրականացման մոնիթորինգ, համաձայն մոնիթորինգի պլանի:

**Կայանը կառուցող**

Կայանը կառուցելու է շինարարական կապալառու ընկերությունը:

Կայանը կառուցողը պատասխանատու է բնապահպանական կառավարման համար, որը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով՝

- համապատասխան օրենքների, կանոնակարգերի եւ ստանդարտների պահանջների ապահովում
- անհրաժեշտ թույլտվությունների եւ / կամ համաձայնությունների ձեռք բերում
- իրականացնել մեղմացնող միջոցառումներ՝ շինարարական փուլի ազդեցությունները նվազեցնելու համար
- ապահովել բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի միջոցառումների իրականացումը
- հետևել, որ պահպանվեն առողջության և անվտանգության պահանջները:

**ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն**

ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր իրավասությունների սահմանում իրականացնում է շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական ու բուսական աշխարհի, բնության հատուկ



պահպանվող տարածքների վրա վնասակար ներգործությունների կանխարգելման կամ նվազեցման, ինչպես նաև բնական պաշարների ողջամիտ օգտագործման ու վերականգնման պետական քաղաքականության ձևավորումն ու կառավարումը:

Նախարարությունն իր պարտականությունները կատարում է աշխատակազմի և առանձնացված ստորաբաժանումների միջոցով:

ՇՄՆ իրականացնում է գործառույթներ մի քանի առանձնացված ստորաբաժանումների միջոցով.

✓ Նախատեսվող գործունեության բնապահպանական փորձաքննության ընթացակարգը իրականացվում է “Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն” ՊՈԱԿ կողմից: «ՍՈԼԱՐ ՖԱՐՄ» ՍՊԸ ՖՎ կայանը ենթակա է բնապահպանական փորձաքննության, որն իրականացնում է սույն կազմակերպությունը:

***ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն***

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը ՀՀ գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է ՀՀ կառավարության քաղաքականությունը, էներգետիկայի եւ բնական պաշարների կառավարման բնագավառում:

Նախարարությունն իր պարտականությունները կատարում է աշխատակազմի և առանձնացված ստորաբաժանումների միջոցով.

- Օգտակար հանածոների պաշարների գործակալություն,
- Ընդերքի տրամադրման գործակալություն,
- Էներգետիկայի պետական տեսչություն, որը տրամադրում է եզրակացություն կայանի գործարկման համար,
- Ընդերքի պետական տեսչություն,
- Ջրային տնտեսության պետական կոմիտե:

***ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին***

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը ստեղծվել է համաձայն «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության և ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության հիման վրա: Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը իրականացնում է վերահսկողական և (կամ) օրենքով սահմանված այլ գործառույթներ, ինչպես նաև կիրառում է պատասխանատվության միջոցներ շրջակա միջավայրի պահպանության, բնական ռեսուրսների օգտագործման, վերարտադրության և ընդերքօգտագործման բնագավառներում՝ հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից:



**Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (ՀԾԿՀ)**

Արևային կայանի շինարարության և շահագործման պայմանները սահմանվում են Էներգիայի արտադրության լիցենզիայով: Ըստ ՀՀ օրենսդրության ՀԾԿՀ էներգիա արտադրող կազմակերպությանը տրամադրում է Էներգիայի արտադրության լիցենզիա համաձայն ՀԾԿՀ 1.11.2013 թ. N374 որոշման:

**Առողջապահության նախարարություն**

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում է իրականացնում է առողջապահության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:

Նախարարության կազմում գործում են.

Աշխատակազմի մասնագիտացված ստորաբաժանումները.

- Բժշկական օգնության քաղաքականության վարչություն,
- Մոր և մանկան առողջության պահպանման վարչություն,
- Դեղորայքային քաղաքականության և բժշկական տեխնոլոգիաների վարչություն,
- Հանրային առողջության բաժին,
- և այլն:

**4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

Արևային ֆոտովոլտային կայանը նախատեսվում է տեղակայել ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս խոշորացված համայնքի Մեծ Մասրիկ բնակավայրի վարչական տարածքում՝ 1-ին փողոց 12-րդ նրբանցք 2-րդ հողամաս: Տարածքը զբաղեցնելու է 6հա:

Համաձայն անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման վկայականի՝ հողի նպատակային նշանակությունը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների է, գործառնական նշանակությունը՝ էներգետիկայի:

**Հողատարածքների առանձին մակերեսները և կադաստրային ծածկագրերը ներկայացված են ստորև.**

Աղյուսակ 2: Տեղամասի տվյալները

| N | Բնակավայր  | Կադաստրային ծածկագիր | Մակերես (հա) |
|---|------------|----------------------|--------------|
| 1 | Մեծ Մասրիկ | 05-065-0145-0013     | 6            |





|           |   |
|-----------|---|
| Ընդհանուր | 6 |
|-----------|---|

Արևային կայանի տեղաբաշխման վայրն ընտրված է տեղական ինքնակառավարման մարմինների և հողատարածքի սեփականատիրոջ որոշմամբ՝ հաշվի առնելով տվյալ տարածքում արևային ճառագայթման տվյալները, ընկերության զարգացման պլանները, տեղանքում առկա ենթակառուցվածքները և այլն:

Տեղակայման աշխարհագրական կոորդինատներն են՝

- հյուսիսային լայնության 40°13'27.13"
- արևելյան երկայնության 45°44'41.02"
- Բարձրությունը ծովի մակարդակից կազմում է 1937 մետր:

Տարածքը տեղակայված է Մեծ Մասրիկ բնակավայրի վարչական սահմաններում, մոտակա բնակելի շինություններից մոտ 1կմ հեռավորության վրա, Սևանա լճի արևելյան մասում՝ լճից մոտ 8,6կմ հեռավորության վրա:

Նշված տարածքի հեռավորությունը ամենամոտ բնակավայրերից կազմում է՝

- Մեծ Մասրիկ բնակավայր – մոտ 1կմ,
- Փոքր Մասրիկ բնակավայր – մոտ 3.3կմ,
- Վարդենիս բնակավայր – մոտ 3.6կմ:

Դիտարկվող տարածքի հեռավորությունը ամենամոտ Մասրիկ գետից կազմում է մոտ 650մ դեպի հարավ:

Տարածքի հեռավորությունը գործող Վարդենիս-Ծովագյուղ (Մ14) ավտոմայրուղուց կազմում է մոտ 860մ, Մ11 ավտոճանապարհից՝ 4.1կմ:

Տարածքի իրադրային սխեման և գլխավոր հատակագիծը ներկայացված են ստորև:




Պատկեր 1: Նախատեսվող գործունեության տարածքի իրադրության սխեման



Պատկեր 2: Հատակագիծ







## 5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

### 5.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը և երկրաբանական կառուցվածքը

Տեղանքը գտնվում է Սևանի ավազանի հարավարևելյան մասում՝ Սևանի, Արևելյան Սևանի և Վարդենիսի լեռնաշղթաների միջև: Ընդհանուր առմամբ տարածաշրջանում գերակշռում է լեռնային ռելիեֆը: Տիրապետում են լեռնատափաստանային և լեռնամարգագետնային լանդշաֆտները:

Վարդենիսի լեռնաշղթաների դեպի Սևանա լիճ նայող լանջերը համեմատաբար մեղմաթեք են, որտեղ այդ լեռների բազմաթիվ հրաբխային կոներից դուրս ժայթքած լավան հրաբխային լեռնալանջերից բացի առաջացրել է նաև սարավանդներ, քարակարկառներ: Հենց այս հատվածներում էլ՝ Վարդենիսի լեռնաշղթաների ու Սևանա լճի միջև գտնվող վայրերում զգալի հարթ տարածություններ կան, որոնք շատ հարմար են հողագործության համար: Դա հատկապես Մասրիկ գետի հովիտն է և համեմատաբար ընդարձակ Մասրիկի դաշտն է: Այդ հարթ տարածությունները ծովի մակերևույթից ունեն 1900-2200մ բարձրություն: Սևանա լճի արևելյան, հարավային և արևմտյան առափնյա հարթ տարածությունները բնութագրվում են լեռնատափաստանային բերրի սևահողերով, իսկ համեմատաբար բարձրադիր մասերը՝ լեռնամարգագետնային հողերով:

Մասրիկի դաշտը զբաղեցնում է Մասրիկ գետի ստորին հոսանքի ավազանը: Բարձրությունը 1900-2000 մ է: Հարթ մակերևույթն ունի թեքություն դեպի արևմուտք, ծածկված է լճագետաբերուկային նստվածքների հզոր շերտով: Արևմուտքում՝ նախկին Գիլի լճի տեղում, կան տորֆի պաշարներ: Մշակում են կարտոֆիլ, հացահատիկ, ծխախոտ, բանջարեղեն և այլն: Արևային կայանի համար հայցվող տարածքի ռելիեֆը հարթ է: Գարնանային ամիսներին տեղումներից և ձնհալից առաջացած ջրերը հիմնականում ներծծվում են կամ մասնակիորեն առաջացնում են աննշան ժամանակավոր լճակներ, որոնք տեղ տեղ ճահճացնում են գետինը: Ամռան ժամանակ այս ճահճացումներից միայն հետքեր են մնում՝ ավելի փարթամ կանաչով ծածկված մինչև կես մետր խորության փոսորակներ:

Մասրիկի դաշտավայրը դեպի արևմուտք /դեպի Սևանա լիճ/ փոքր թեքություն ունեցող գոգավորություն է շրջապատված Սևանի /հյուսիս-արևելքից/, Արևելյան Սևանի /հարավ-արևելքից/ և Վարդենիսի /հարավից/ լեռնաշղթաներով:

*Արևելյան Սևանի* կամ Կոնգուրի լեռնաշղթան գտնվում է է ՀՀ Գեղարքունիքի մարզի և ԼՂՀ-ի սահմանագլխին: Եզրավորում է Սևանա լիճը հարավ արևելքից 40 կմ երկարությամբ: Այն ջրբաժան է հանդիսանում Թարթառ գետի և Սևանա լճի միջև:





Լեռնաշղթայի միջին բարձրությունը կազմում է 2700 մ: Առավել բարձրադիր է հարավային հատվածը, որտեղ գտնվում է *Մեծ Ծարասար* գագաթը (3441 մ): Բարձր գագաթներից են նաև *Փոքր Ծարասարը*՝ 3427 մ, *Գոմբը*՝ 3052 մ, *Սոխրասարը*՝ 3037 մ, *Կատարածայրը*՝ 3008 մ, *Թրասարը*՝ 2869 մ: Արևելյան Սևանի լեռնաշղթայում է Սոթքը լեռնանցքը /2366 մ/: Մեծ Ծարասարի տեղամասում լանջերի թեքությունը հասնում է առավելագույնի (ավելի քան 30°): Շատ հատվածներում տարածվում են քարացրոններ: Արևելյան Սևանի միջին հատվածներում բարձրությունները նվազում են, բայց ավելանում է լեռնաշղթայի ասիմետրիկությունը:

*Սևանի լեռնաշղթան* ձգվում է Սևանի գոգավորության արևելյան հատվածով, հյուսիս արևմուտքից հարավ արևելք աստիճանաբար բարձրանում է, ամենաբարձր կետը՝ *Քոչասար (Սատանախաչ)* լեռն է (3319 մ) է Ադրբեջանի տարածքում, իսկ ՀՀ-ում՝ *Փերեզակ լեռը* (3290): Լանջերը միմյանցից տարբերվում են թե՛ բուսապատվածությամբ, թե՛ թեքությամբ: Հյուսիս արևելյան լանջերն անտառապատ են, հարավ արևմտյանը՝ պատված տափաստանային բուսականությամբ: Դեպի Սևան իջնող գետերը տարվա մեջ գործում են 3-4 ամիս: Այս լանջերին կան ժանմանակավոր գործող հոսքեր, որոնք պարբերաբար վերածվում են սելավների: Լանջերին նկատվում է տափակ արտաբերման կոներ, որի պատճառը մի դեպքում լեռնաշղթայի բարձրացումն է, մյուս դեպքում՝ Սևանա լճի մակարդակի տատանումները:

*Վարդենիսի լեռնաշղթան* սահմանագատում է Հայաստանի Գեղարքունիքի, վայոց ձորի մարզերը և Արցախի հանրապետությունը: Ձգվում է Գեղամա լեռների Գնդասար գագաթից մինչև Մեծ Ծարասարի լեռնահանգույցը: Երկարությունը 60 կմ է, առավելագույն բարձրությունը Վարդենիս լեռն է /3552 մ/: Լեռնագագաթներից են *Սանդուխտասարը* /3454 մ/ և *Փորակ* լեռը /3047 մ/, որը երիտասարդ հրաբուխ է և որի լավայի հոսքը հասնում է մինչև Վարդենիս քաղաքը:

Մասրիկի դաշտը շրջապատող լեռնաշղթաները կազմված են կավճի, պալեոգենի և միոցենի ապարներից, ունեն ծալքաբեկորավոր կառուցվածք: Կազմված է հրաբխածին, մասամբ՝ նստվածքային /կրաքարային/ ապարներից: Այս ապարները տարավազցվել են դեպի Սևանա լիճ և կազմում են Մասրիկի դաշտի հիմքի բերուկային ապարները:

Դեպի լեռնալանջերը Մասրիկի դաշտի թեքությունը մեծանում է: Արևային կայանի համար հայցվող տարածքում դաշտը ունի աննշան թեքություն դեպի Սևանա լիճը: Մասրիկի դաշտի ցածրադիր մասերում տիրապետում են սևահողերը, իսկ բարձրադիր, շրջաններում՝ լեռնամարգագետնային հողերը:

Բուսատեսակների մեջ գերակշռում են լեռնատափաստանային, ենթալպյան և ալպյան բուսատեսակները, որոնք էլ հանդիսանում են ամառային




արտավայրեր ու խոտհարքներ: Գեղարքունիքի մարզում շատ քիչ է անտառային բուսականությունը, կաղնու, գիհու և որոշ այլ ծառատեսակների նոսր, թփուտային պուրակներ կան հյուսիս-արևելյան լեռնալանջերին, իսկ լճի մակարդակի իջեցման հետևանքով առաջացած տարածքներում աճեցվել են արհեստական անտառաշերտեր: Այստեղ զգալի տարածքներ են զբաղեցնում փշարմավի պուրակները: Կենդանական աշխարհը հարուստ չէ, լճի մակարդակի իջեցման հետևանքով խիստ կրճատվել են թռչունների ու ձկների տեսակները:

## 5.2. Սեյսմիկ պայմանների բնութագիրը

ՀՀ գտնվում է ակտիվ երկրաշարժային գոտում; Հյուսիսից հարավ առանձնացվում են հետևյալ սեյսմիկ գոնաները. Մերձքուռյան, Սոմխեթա-Ղարաբաղի, Մերձսևանյան, Կապան-Գոգորանի, Ծաղկունյաց-Զանգեզուրի, Երևան-Օրդուբադի, Ուրծ-Վայքի: Հիմնականում նշված գոնաների սահմաններով է անցնում երկրկեղևի խորքային բեկվածքները, որոնցից ամենախոշորն են Սևան-Աքերայի, Շիրակ – Զանգեզուրի և Միջին Արաքսյան /Երևանյան/ բեկվածքները: Բեկվածքների այս գոնաները թափանցում են երկրկեղևի 40-50 մետր խորություններ, իսկ երկրկեղևի մակերեսին արտահայտվում են 5-10 կմ լայնություն ունեցող գոտիներով, որոնց բնորոշ է օֆիոլիթային զուգորդության ձևափոխված ապարներ:


*Պատկեր 3: Երկրկեղևի հիմնական խորքային բեկվածքները*



Պատկեր 4: ՀՀ սեյսմիկ շրջանացման սխեմատիկ քարտեզը /նկարը վերցված է ՀՀ Պետական վիճակագրական վարձության կայքից:  $a=0.2g$ , մինչև 3 բալ,  $a=0.3g$ , 3-ից 9 բալ,  $a=0.4g$ , 9 և ավելի բալ,  $a=0.5g$ , կործանարար երկրաշարժ/



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՑՄԱԿ ԵՐԶԱՆՑՄԱՆ ՔԱՐՏԵԶ  
SEISMIC ZONATION MAP OF THE REPUBLIC OF ARMENIA



Կազմված է ՀՀ սեյսմիկ գոտիավորման սխեմատիկ քարտեզը, որով երկրի տարածքը ստորաբաժանված է գոտիների՝ ըստ միևնույն մեծության սեյսմիկ վտանգի աստիճանի: Համաձայն այդ քարտեզի արևային կայանի համար հայցվող տարածքին վերագրվում է գրունտի հորիզոնական արագացում  $v=30$  սմ/սմ<sup>2</sup>  $a=0.4g$  /գրունտային ստվարաշերտի վերին մակերևույթի վրա երկրաշարժի ժամանակ առաջացած արագացման մեծությունը հորիզոնական ուղղությամբ/, որը համարժեք է 3-9 բալ երկրաշարժի ուժգնության:

Համաձայն 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04- «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմերում» ներառված և ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի հաստատված քարտեզի՝ տեղազննվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների  $A_{max}= 0.4g$  արագացմամբ:

Պատկեր 5: Սեյսմիկ գոտիների քարտեզ



Սևանա լճի ավազանի երկրաբանական կառուցվածքում առկա են տարբեր ապարներ՝ վերին կավճից մինչև ժամանակակից նստվածքներ:

Արեգունու լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջերը, որոնք զառիթափ իջնում են դեպի լճի մակերևույթը, հիմնականում կազմված են մինչև 1500 մ հզորությամբ միջին եոցենի հրաբխային-տեքրիզեն ֆլիշից և միայն մասամբ նույն հասակի հրաբխային ֆլիշից (500 մ հզորությամբ): Սևանի լեռնաշղթան տարբերվում է Արեգունու լեռնաշղթայից ոչ միայն ապարների կազմությամբ, այլև հասակով: Սևանի լեռնաշղթան կազմված է նստվածքային ապարներով՝ կրաքարեր, մերգելներ, ալեվրոլիտներ, կոնգլոմերատներ և հրաբխային ապարներով՝ բազալտներ, անդեզիտաբազալտներ և տուֆեր: Սևանի լեռնաշղթայի հարավային լանջն առանձնանում է -հրաբխային ապարների տարածված մերկացումներով, որոնցում ներդրված են հիպերբազիտներ և գաբրոններ: Լեռնաշղթայի հարավային մասում Արտանիշ թերակղզու մոտ հայտնի են օֆիոլիտային ասոցիացիայի շերտավոր ապարների մերկացումներ: Գեղամա լեռնազանգվածի արևելյան լանջերը կազմված են հիմնականում չորրորդական լավաներից (ստորին չորրորդական բազալտներ, անդեզիտներ, անդեզիտային դացիտներ, դացիտներ և հոլոցենի անդեզիտային





բազալտներ և անդեզիտներ): Վարդենիսի լեռնազանգվածի հյուսիսային լանջերը կազմված են ստորին պլիոցենի հրաբխային ապարներից (անդեզիտային բազալտներ, անդեզիտներ, անդեզիտային դաջիտներ, ռիոդաջիտներ), ինչպես նաև ստորին չորրորդական լավային հոսքերից և բազալտներից, անդեզիտային բազալտներից, անդեզիտներից, անդեզիտային դաջիտներից, դաջիտներից: Դեպի Սևանա լիճ կուտակված առաջացումները ներկայացված են՝ ավազաքարերով, կավերով, տուֆոավազաքարերով, գլաքարա-կոնգլոմերատային, լճային գոյացումներով՝ ճալաքարերի ջրատար շերտերով: Ճալաքարային շերտերի հետ են կապված Սևանի ավազանի արտեզիան և ճնշունային ջրերը:

Պատկեր 6: Երկրաբանական քարտեզ



Մեծ տարածում ունեն տուֆոկոնգլոմերատները, տուֆոբրեկչիաները, պորֆիրիտները և դրանք հատող ինտրուզիաները: Բարձրադիր լանջերը և ջրբաժանները ներկայացված են մերգելներով և կրաքարերով, որոնք աններդաշնակ կերպով տարածված են հրաբխա-նստվածքային կոմպլեքսի վրա: Տարածաշրջանը բնութագրվում է կտրուկ կտրտված բլրային ռելիեֆով, խորը ձորակներով:

Ապարները պրոյուվիալ, դեյուվիալ առաջացումներ են: Այուվիալ-դեյուվիալ



առաջացումների հետ կապված՝ գրունտային ջրեր, որոնք փոքր բնական աղբյուրների տեսքով դուրս են գալիս Դրախտիկ գետի միջին և վերին հոսանքներում, ունեն սեզոնային բնույթ: Շրջանում մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը չի գերազանցում 600մմ, որոնց մի մասը ներծծվելով ապարների շեղքերով ու ծակոտիկներով, բեռնաթափում են սեզոնային բնույթի աղբյուրների տեսքով, իսկ մյուսը՝ ժամանակավոր հոսքերի տեսքով հոսում են դեպի Սևանա լիճ:

### 5.3. Հիդրոերկրաբանություն

Ստորգետնյա ջրերը մինչև 4,0 մետր խորությունը բացահայտված չեն: Տարածաշրջանի ստորգետնյա ջրերը հիմնականում կապված են վերին կավձի հասակի կրաքարերի և ուլտրահիմքային ու հիմքային ապարների կոնտակտի հետ, որոնք բնական աղբյուրների տեսքով դուրս են գալիս երկրի մակերես: Ջրամերժ շերտերը հանդիսանում են ուլտրահիմքային ապարների կոտրատված մասսան (մագնետիզացված և սերպենտինիտիզացված դունիտները ու սերպենտինիտները), որոնք վերածվել են կավանման առաջացումների:

Ապարները պրոյուվիալ, դեյուվիալ առաջացումներ են, որոնց հետ կապված գրունտային ջրերը սեզոնային հոսքերի տեսքով դուրս են գալիս գետերի միջին և վերին հոսանքներում:

Դեպի Սևանա լիճ կուտակված առաջացումները ներկայացված են՝ ավազաքարերով, կավերով, տուֆոավազաքարերով, գլաքարա-կոնգլոմերատային, լճային գոյացումներով՝ ճալաքարերի ջրատար շերտերով: Ճալաքարային շերտերի հետ են կապված Սևանի ավազանի արտեզիան և ճնշունային ջրերը: Երկրաբանա-գեոմորֆոլոգիական տեսակետից Սևանա լճի հյուսիս-արևելյան հատվածն իրենից ներկայացնում է փոքր խորդուբորդություններով պլատո, լցված լավաների բեկորներով և քարակտորներով (չինգիլներով), տեղ-տեղ ծածկված էյուվիալ-դեյուվիալ և այլուվիալ առաջացումների ծածկոցով: Հիդրոերկրաբանական տեսակետից վերը նշված նստվածքները մեծ հետաքրքրություն են ներկայացնում, քանի որ իրենց մեջ պարունակում են ճալաքարերի ջրատար շերտեր: Այս ճալաքարային շերտերի հետ են կապված Սևանի ավազանի արտեզիան և ճնշունային ջրերը:

Տիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում բացակայում են: Ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:



#### 5.4. Կլիմա և օդային ավազան

Կլիմայական բնութագրի համար հիմք է ծառայել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և համապատասխան կլիմայական ցուցանիշները:

Այդ փաստաթղթով սահմանում են կլիմայական պարամետրերը, որոնք կիրառվում են շենքերի և շինությունների, ջեռուցման, օդափոխության, օդի լուսավորման, ջրամատակարարման համակարգերի նախագծման, ինչպես նաև քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծման և կառուցապատման ժամանակ: Կլիմայական ցուցանիշները հիմնականում հաշվարկված են Հայաստանի Հանրապետության այն բնակավայրերի համար, որտեղ տեղակայված օդերևութաբանական կայանները ունեն դիտարկումների բավականին երկար (30 տարուց ոչ պակաս) շարք: Ցուցանիշները սրբագրված են վերջին տասնամյակի (2009թ. ներառյալ) տվյալների հաշվառումով: Տեղումների որոշ հարաչափերի հաշվարկման համար օգտագործվել են նաև կարճ շարք ունեցող օդերևութաբանական դիտակետերի տվյալները: Տարածքի կլիմայի բնորոշման համար հիմք է վերցրվել մոտակայքում գտնվող օդերևութաբանական կայանի երկարատև դիտարկման արդյունքները:

Կլիմայական պայմանների մանրամասն ցուցանիշները ներկայացված են ստորև՝ աղյուսակներում: Ընդհանուր առմամբ Ծրագրի համար հայցվող տարածքը գտնվում է լեռնային կլիմայական շրջանում, որտեղ գերակայում են ցուրտ ցուցանիշները. Ամառ՝ զով, քամոտ, օպտիմալ խոնավությամբ, միջին ջերմաստիճանը հուլիսին 16°C, հարաբերական խոնավությունը (ժ 15-ին) 45-60%, քամու միջին արագությունը՝ 3.0-6.0 մ/վ: Ներկայացված Ծրագրի իրականացման ամենմոտ օդերևութաբանական ցուցանիշները վերլուծելով, կարելի է նշել, որ դիտարկվել է -29°C օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճան և 30°C բացարձակ առավելագույն ջերմաստիճան («Վարդենիս» դիտակետ) / դիտարկվել է -38°C օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճան և 34°C բացարձակ առավելագույն ջերմաստիճան («Մասրիկ» դիտակետ), ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը կազմել է 61% և ամենաշոգ ամսվանը՝ 54%, մթնոլորտային միջին տարեկան տեղումները կազմում են 522մմ («Մարտունի» դիտակետ) / ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը կազմել է 66% և ամենաշոգ ամսվանը՝ 47%, մթնոլորտային միջին տարեկան տեղումները կազմում են 432մմ («Մասրիկ» դիտակետ), իսկ տարվա մեջ միջին ձնածածկ օրերի քանակը՝ 103 («Մարտունի» դիտակետ) / միջին ձնածածկ օրերի քանակը՝ 107 («Մասրիկ» դիտակետ): Առանց արևի օրերի քանակը կազմում է տարեկան 25օր (2552ժ.):

Օդերևութաբանական տվյալների ցուցանիշները վերցված են «Վարդենիս», «Մարտունի» և «Մասրիկ» օդերևութաբանական դիտակետերից:



Աղյուսակ 3: Օդի ջերմաստիճանը, °C

| Բնակավայրի անվանումը | Օդի միջին ամսական, ըստ ամիսների °C |      |      |     |     |      |      |      |      |     |     |      | Միջին տարեկան | Բացարձակ նվազագույն | Բացարձակ առավելագույն |
|----------------------|------------------------------------|------|------|-----|-----|------|------|------|------|-----|-----|------|---------------|---------------------|-----------------------|
|                      | I                                  | II   | III  | IV  | V   | VI   | VII  | VIII | IX   | X   | XI  | XII  |               |                     |                       |
| Մարտունի             | 5,2                                | -4,9 | -1,3 | 5,0 | 9,8 | 13,4 | 16,4 | 16,3 | 13,2 | 8,4 | 2,5 | -2,6 | 5,9           | -31.7               | 33.6                  |
|                      | I                                  | II   | III  | IV  | V   | VI   | VII  | VIII | IX   | X   | XI  | XII  |               |                     |                       |
| Վարդենիս             | -8,3                               | -6,8 | -2,7 | 4,1 | 9,5 | 12,9 | 16,3 | 16,1 | 12,2 | 6,7 | 0,9 | -5,1 | 4,7           | -29                 | 30                    |
|                      | I                                  | II   | III  | IV  | V   | VI   | VII  | VIII | IX   | X   | XI  | XII  |               |                     |                       |
| Մասրիկ               | -8,5                               | -7,9 | -3,1 | 4,2 | 9,4 | 12,9 | 16,2 | 16,0 | 12,5 | 6,7 | 0,6 | -5,9 | 4,4           | -38                 | 34                    |
|                      | I                                  | II   | III  | IV  | V   | VI   | VII  | VIII | IX   | X   | XI  | XII  |               |                     |                       |

Աղյուսակ 4: Օդի հարաբերական խոնավությունը (%)

| Բնակավայրի անվանումը | Օդի հարաբերական խոնավությունը. % |    |     |    |    |    |     |      |    |    |    |     |               |                   |                |
|----------------------|----------------------------------|----|-----|----|----|----|-----|------|----|----|----|-----|---------------|-------------------|----------------|
|                      | ըստ ամիսների                     |    |     |    |    |    |     |      |    |    |    |     | Միջին տարեկան | միջինը ժամը 15-ին |                |
|                      | I                                | II | III | IV | V  | VI | VII | VIII | IX | X  | XI | XII |               | Ամենա-ցուրտ ամսվա | Ամենաշոգ ամսվա |
| Մարտունի             | 68                               | 69 | 68  | 66 | 67 | 70 | 73  | 71   | 66 | 64 | 65 | 66  | 68            | 61                | 54             |
| Մասրիկ               | 76                               | 77 | 75  | 69 | 68 | 69 | 67  | 68   | 66 | 70 | 74 | 76  | 71            | 66                | 47             |

Աղյուսակ 5: Մթնոլորտային տեղումները

| Բնակավայրի անվանումը | Տեղումների քանակը միջին ամսական մմ օրական առավելագույնը |    |     |    |    |    |     |       |    |    |     |     |     |         |
|----------------------|---|----|-----|----|----|----|-----|-------|----|----|-----|-----|-----|---------|
|                      | ըստ ամիսների  |    |     |    |    |    |     |       |    |    |     |     |     | Տարեկան |
|                      | I   | II | III | IV | V  | VI | VII | VII I | IX | X  | X I | XII |     |         |
| Մարտունի             | 27  | 31 | 47  | 59 | 74 | 69 | 46  | 31    | 32 | 43 | 38  | 25  | 522 |         |
|                      | 51  | 34 | 40  | 46 | 41 | 69 | 65  | 43    | 59 | 49 | 84  | 41  | 84  |         |
| Վարդենիս             | 43  | 53 | 62  | 69 | 88 | 65 | 47  | 36    | 28 | 48 | 47  | 53  | 639 |         |
|                      | 38  | 42 | 42  | 36 | 43 | 69 | 42  | 42    | 28 | 41 | 45  | 47  | 69  |         |
| Մասրիկ               | 19  | 19 | 27  | 37 | 62 | 65 | 43  | 35    | 29 | 43 | 21  | 22  | 432 |         |
|                      | 23  | 29 | 32  | 30 | 44 | 48 | 54  | 72    | 36 | 40 | 35  | 18  | 72  |         |



Աղյուսակ 6: Ձյան ծածկույթ

| Բնակավայրի անվանումը | Ձյան ծածկույթը                               |  |                                      |  |
|----------------------|--|--|--------------------------------------|--|
|                      | Առավելագույն տասնորյակային բարձրությունը, սմ | Տարվա մեջ ձյան ծածկույթով օրերի քանակը | Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ | Գրունտի սառչման առավելագույն խորությունը |
| 1                    | 2  | 3                                      | 4                                    | 5  |
| Մարտունի             | 75   | 103                                    | 151                                  | 114                                      |
| Մասրիկ               | 73   | 107                                    | 154                                  | 75                                       |

Աղյուսակ 7: Քամի

| Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը | Միջին տարեկան մթնոլորտային ձեռքում, (ՌՄտ) | Ամիսներ   | Կրկնելիությունը, %<br>իսկ ուղղությունների Միջին արագությունը, մ/վ |                              |                   |                            |            |                          |                 |                            | Անհողմությունների կրկնելիությունը, % | Միջին ամսական արտառաջում, մ/վ | Միջին տարեկան արագությունը, մ/վ | Ուժեղ քամիներով (□15մ/վ □ օրերի քանակը) | Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "ո" տարիների ընթացքում |    |     |
|---|---|-----------|---|------------------------------|-------------------|----------------------------|------------|--------------------------|-----------------|----------------------------|--------------------------------------|-------------------------------|---------------------------------|---|--|----|-----|
|   |   |           | Հյուսիսային (Հս)  | Հյուսիս- Արև- վելյան (ՀսԱրև) | Արև- վելյան (Արև) | Հարավ- Արև- վելյան (ՀվԱրև) | Հարավ (Հվ) | Հարավ- Արև մտյան (ՀվԱրև) | Արև մտյան (Արև) | Հյուսիս- Արև մտյան (ՀսԱրև) |                                      |                               |                                 |   | 20   | 50 | 100 |
|   |   |           |   |                              |                   |                            |            |                          |                 |                            |                                      |                               |                                 |   |  |    |     |
| 1   | 2   | 3         | 4   | 5                            | 6                 | 7                          | 8          | 9                        | 10              | 11                         | 12                                   | 13                            | 14                              | 15                                      | 16   | 17 | 18  |
| Մարտունի                                      | 805,3                                     | Հունվար   | 5   | 1                            | 1                 | 2                          | 49         | 37                       | 3               | 2                          | 85                                   | 3,7                           | 2,6                             | 47                                      | 25   | 27 | 28  |
|   |   |           | 1,7   | 1,7                          | 1,6               | 2,2                        | 3,6        | 4,0                      | 2,4             | 2,2                        |                                      |                               |                                 |   |  |    |     |
|   |   | Ապրիլ     | 11  | 5                            | 3                 | 2                          | 40         | 30                       | 5               | 4                          | 78                                   | 2,9                           |                                 |   |  |    |     |
|   |   |           | 1,9   | 2,0                          | 1,7               | 2,2                        | 3,4        | 3,8                      | 2,4             | 2,0                        |                                      |                               |                                 |   |  |    |     |
|   |   | Հուլիս    | 30  | 12                           | 4                 | 1                          | 20         | 17                       | 5               | 11                         | 71                                   | 1,6                           |                                 |   |  |    |     |
|   |   |           | 2,0   | 2,1                          | 1,8               | 1,5                        | 1,7        | 1,9                      | 1,8             | 2,0                        |                                      |                               |                                 |   |  |    |     |
|   |   | Հոկտեմբեր | 9   | 5                            | 2                 | 2                          | 40         | 35                       | 4               | 3                          | 83                                   | 2,5                           |                                 |   |  |    |     |
|   |   |           | 1,8   | 1,7                          | 1,6               | 1,7                        | 2,6        | 3,1                      | 2,3             | 1,9                        |                                      |                               |                                 |   |  |    |     |
| Մասրիկ  | 805,6                                     | Հունվար   | 3   | 3                            | 57                | 3                          | 7          | 6                        | 19              | 2                          | 55                                   | 2,3                           | 3,1                             | 84                                      | 27   | 30 | 32  |
|   |   |           | 2,2   | 2,6                          | 3,0               | 3,4                        | 5,0        | 4,6                      | 5,2             | 3,5                        |                                      |                               |                                 |   |  |    |     |
|   |   | Ապրիլ     | 3   | 2                            | 43                | 3                          | 8          | 6                        | 32              | 3                          | 64                                   | 3,0                           |                                 |   |  |    |     |
|   |   |           | 3,5   | 3,0                          | 4,2               | 4,3                        | 6,1        | 4,4                      | 4,6             | 3,6                        |                                      |                               |                                 |   |  |    |     |
|   |   | Հուլիս    | 3   | 2                            | 84                | 2                          | 1          | 1                        | 6               | 1                          | 77                                   | 5,0                           |                                 |   |  |    |     |
|   |   |           | 2,9   | 4,6                          | 6,4               | 5,1                        | 3,6        | 3,0                      | 3,3             | 3,1                        |                                      |                               |                                 |   |  |    |     |
|   |   | Հոկտեմբեր | 2   | 2                            | 53                | 3                          | 4          | 4                        | 29              | 3                          | 59                                   | 2,4                           |                                 |   |  |    |     |
|   |   |           | 2,1   | 2,9                          | 3,9               | 3,8                        | 4,6        | 4,2                      | 4,2             | 3,5                        |                                      |                               |                                 |   |  |    |     |

Աղյուսակ 8: Ձնոտան սկիզբը, վերջը և տևողությունը

| Բնակավայրի անվանումը | Սկիզբ       | Վերջ    | Տևողություն, օր |
|----------------------|-------------|---------|-----------------|
| 1                    | 2           | 3       | 4               |
| Մարտունի             | 30 նոյեմբեր | 23 մարտ | 114             |

Աղյուսակ 9: Արևափայլի տևողություն (ժ) և առնաց արևի օրերի քանակ (օր)

| Բնակավայրի անվանումը | Արևափայլի տրոհությունը և առնաց արևի օրերի քանակը |   |
|----------------------|--|---|
|                      | Տ  | Ս |
|                      | ըստ ամիսների                                     |   |
|                      | Տ  | Ս |





|          |    | I   | II  | III | IV  | V   | VI  | VII | VII I | IX  | X   | X I | XII |      |
|----------|----|-----|-----|-----|-----|-----|-----|-----|-------|-----|-----|-----|-----|------|
| Մարտունի | ժ  | 144 | 150 | 178 | 184 | 237 | 289 | 306 | 299   | 258 | 200 | 161 | 146 | 2552 |
|          | օր | 4   | 3   | 3   | 3   | 2   | 0.3 | 0.3 | 0.3   | 1   | 1   | 3   | 4   | 25   |

### 5.5. Մթնոլորտային օդ

Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ կարող են արտանետվել տարատեսակ գազեր և տարբեր չափերի մասնիկներ:

Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշման: Մթնոլորտային օդի որակի ուսումնասիրությունները կատարվում է «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից դիտակետերի միջոցով: Աղբերքի և մոտակա բնակավայրերի տարածքում չկան էկոմոնիթորինգի դիտակետեր և բնակավայրի օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշները որոշվում են հաշվարկային եղանակով՝ ըստ բնակչության թվաքանակի:

Ըստ ՊՈԱԿ պաշտոնական կայքէջի<sup>1</sup> մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշները ներկայացվում են ստորև, որոնց թվին է պատկանում նաև Մեծ Մասրիկ բնակավայրը /2612/:

- Փոշի՝ 0.071 մգ/մ<sup>3</sup>;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.006 մգ/մ<sup>3</sup>;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.023 մգ/մ<sup>3</sup>;
- Ածխածնի օքսիդ՝ 0.8 մգ/մ<sup>3</sup>:

*Պատկեր 7: ՀՀ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց*

<sup>1</sup> <https://meteomonitoring.am/page/1591>



### 5.6. Աղմուկ և թրթռում

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմերով:

Աղմուկի առավելագույն թույլատրելի ցուցանիշները ըստ այդ բերված են աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10: ՀՀ սահմանված աղմուկի նորմերը

| Ընկալիչ                           | Ժամերը      | Աղմուկի առավելագույն թույլատրելի մակարդակը |                     |
|-----------------------------------|-------------|--|---------------------|
|                                   |             | dBL <sub>Aeq</sub>                         | dBL <sub>AMAX</sub> |
| Բնակելի և հասարակական շենքերի մոտ | 06:00-22:00 | 55   | 70                  |
|                                   | 22:00-06:00 | 45   | 60                  |

Աղյուսակ 11: Լարվածության ել ծանրության տարբեր կատեգորիաների աշխատանքային գործունեության աշխատատեղերում ձայնի սահմանային թույլատրելի մակարդակները ել ձայնի սահմանային մակարդակները դԲա-ով

|             |   |
|-------------|---|
| Աշխատանքայի | Աշխատանքային գործընթացի ծանրության կարգ |
|-------------|---|



| ն գործընթացի լարվածության կարգ     | թեթև ֆիզիկական ծանրաբեռն - վածություն | միջին ֆիզիկական ծանրաբեռն - վածություն | 1 աստիճանի ծանր աշխատանքի | 2 աստիճանի ծանր աշխատանքի | 3 աստիճանի ծանր աշխատանքի |
|------------------------------------|---------------------------------------|--|---------------------------|---------------------------|---------------------------|
| Թեթև աստիճանի լարվածություն        | 80                                    | 80                                     | 75                        | 75                        | 75                        |
| Միջին աստիճանի լարվածություն       | 70                                    | 70                                     | 65                        | 65                        | 65                        |
| Աշխատանքի 1 աստիճանի լարվածություն | 60                                    | 60                                     |                           |                           |                           |
| Աշխատանքի 2 աստիճանի լարվածություն | 50                                    | 50                                     |                           |                           |                           |

Ներկայացվող տեղանքում աղմուկի և տատանումների աղբյուր կարող են հանդիսանալ ավտոտրանսպորտային միջոցները: Ելակետային իրավիճակում արևային կայանի համար հայցվող տարածքում աղմուկի մակարդակը ցածր է, գործնականում աղմուկի աղբյուրները մարդածին չեն /բնական ձայներ են/:

### 5.7. Մակերևութային ջրերի որակի բնութագիրը

Տարածաշրջանի հիմնական ջրագրական միավորը Մասրիկ գետն է ու Սևանա լիճը: ՀՀ կառավարության կողմից “Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին” որոշման (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշում) սահմանված է ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար: Տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ գերազանց (1-ին դաս), լավ (2-րդ դաս), միջակ (3-րդ դաս), անբավարար (4-րդ դաս) և վատ (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

### 5.8. Ջրային ռեսուրսներ

Մասրիկ (Մագրա, Մագրի, Մեզրե, Մյագրաչայ, Սոդ) գետը գտնում է Հայաստանի Գեղարքունիքի մարզում: Սկիզբ է առնում Արևելյան Սևանի լեռների հարավարևմտյան լանջերից և Ծովակ գյուղից հյուսիսում թափվում Սևանա լիճ: Երկարությունը՝ 45 կմ: Ակունքները աղբյուրներից սնվող մանր ու արագահոս



առվակներ են, որ միանում և գետ են դառնում լճամերձ հարթավայր հասնելուց միայն: Միջին և ստորին հոսանքում դանդաղահոս է և գալարուն: Նախկինում Մասրիկ դեպի Սևան էր հոսում Գիլլի ծանծաղ ու ճահճապատ լճի միջով: Այժմ՝ Սևանի մակարդակի իջեցման հետևանքով, Գիլլի փոքրիկ լիճն ու նրա ճահճուտները չորացել են և գետը դանդաղ հոսքով թափվում է ուղղակի Սևանա լիճը, ջրհավաք ավազանը՝ 682 կմ<sup>2</sup>, տարեկան հոսքը՝ 131 մլն մ<sup>3</sup>: Հորդանում է գարնանը, ջրերն օգտագործվում են ոռոգման համար:

Ծրագրի իրականացման շրջանակներում ազդեցություն Մասրիկ գետի վրա չի ակնկալվում քանի որ այն գտնվում է Ծրագրի իրականացման տարածքից ավելի քան 800մ հեռավորության վրա:

Սևանի ջրավազանային տարածքը ներառում է Ձկնագետ, Մասրիկ, Սոթք գետերի գետավազանները, Վարդենիսի ու Գեղամա լեռներից սկսվող գետերը:

Ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունալ-ենցաղային և արտադրական կեղտաջրերը: Մարզի արտանետվող կեղտաջրերի շուրջ 80%-ը չեն մաքրվում: Սևանի ջրավազանային տարածքում ստորերկրյա ջրերի քանակի և որակի նշանակալի փոփոխություններն աննշան են, պայմանավորված բնական պայմաններով՝ ամռան ամիսներին ոռոգման նպատակով հորերի ջրածախսի ավելացմամբ:

Հիդրոերկրաբանական տեսակետից վերը նշված նստվածքները մեծ հետաքրքրություն են ներկայացնում, քանի որ իրենց մեջ պարունակում են ճալաքարերի ջրատար շերտեր: Այս ճալաքարային շերտերի հետ են կապված Սևանի ավազանի արտեզիան և ճնշունային ջրերը:

Սևանա լճում կուտակված առաջացումները ներկայացված են ավազաքարերով, կավերով, տուֆոավազաքարերով, գլաքարա-կոնգլոմերատային, լճային գոյացումներով:

Տարածաշրջանի ամենամեծ ջրային ռեսուրսը Սևանա լիճն է:

**Սևանա լիճ.** Սևանա լիճը գտնվում է ծովի մակարդակից մոտ 1900 մետր բարձրության վրա: Այն աշխարհի քաղցրահամ ջուր ունեցող 2-րդ բարձրադիր լիճն է: Հնում հայտնի է եղել Գեղամա ծով, Գեղարքունյաց ծով անուններով:

Սևանը Հարավային Կովկասի խոշորագույն, բարձրադիր քաղցրահամ լիճն է, որի ծավալը 33.2 կմ<sup>3</sup> է, մակերեսը՝ 1238 կմ<sup>2</sup>: Երկարությունը 70 կմ է, առավելագույն լայնությունը՝ 55 կմ: Լիճը Արտանիշի և Նորատուսի հրվանդանների միջև ձգված



ստորջրյա պատնեշով՝ Շողակաթի թմբով, բաժանվում է երկու մասի՝ հարավ-արևելյան կամ Մեծ Սևան (20.4 կմ<sup>3</sup>), հյուսիս-արևելյան կամ Փոքր Սևան (12.8 կմ<sup>3</sup>): Լճի առավելագույն խորությունը 79.4 մ է (Փոքր Սևան), միջին խորությունը՝ 26.2 մ, ավի շրջագիծը մոտ 230 կմ:

Սևանա լիճ են թափվում 28 գետեր և գետակներ, որոնցից 4-ը՝ Փոքր Սևան, 24-ը՝ Մեծ Սևան: Գետերի ավազանների մակերեսների գումարը կազմում է 2780 կմ<sup>2</sup>, իսկ միջավազանային տարածությունը՝ 696.0 կմ<sup>2</sup>:

Սևանը հոսուն լիճ է և ունի քաղցրահամ ջուր: Լիճ են թափվում 28 մեծ ու փոքր գետակներ, սակայն սկիզբ է առնում միայն մեկը՝ Հրազդանը: Վերջինիս շնորհիվ ջրերի տարեկան արտահոսքը կազմում է 0.05ից մինչև 1.5 կմ<sup>3</sup>:

«Սևանա լճի մասին» օրենքը ընդունելուց հետո (2001թ.) լճից տարեկան արտահոսքը չի գերազանցել 0.34 կմ<sup>3</sup>: Լճի ծագումնաբանական վարկածներից մեկի համաձայն՝ այն առաջացել է չորրորդական ժամանակաշրջանում: Այն գոյացել է հրաբխային գործունեության հետևանքով՝ միջլեռնային տեկտոնական իջվածքում սառցադաշտային և ձնհալոցքային ջրեր լցվելու արդյունքում: Չորս կողմում առանձնակի շրջապատում են Արեգունու, Սևանի, Վարդենիսի և Գեղամա լեռները: Խորհրդային կառավարման տարիներին լճի մակարդակը զգալիորեն իջել է /18 մ/, ինչի հետևանքով տարածաշրջանում առաջացել է էկոլոգիական խնդիր: 1978 թվականին ստեղծվում է Սևան ազգային պարկը: Ջրի մակարդակի բարձրությունը վերականգնելու համար կառուցվել է Արփա – Սևան (48.3 կմ, 1963-81 թվականներ), ապա՝ Որոտան – Արփա դերիվատացիոն ջրատարները (21.6 կմ, 2004 թվական): Հարկ է նշել, որ նախատեսվող գործունեությունը իր ազդեցության ոլորտով չի կարող որևէ ազդեցություն ունենալ տարածքի ջրագրական ֆոնի վրա: Հատկապես, որ այն Սևանա լճից հեռու է ավելի քան 8.6կմ:

Ըստ 2021թ. -ի տեղեկագրի՝ 2021թ. -ի հունվարի 1-ի դրությամբ Սևանա լճի մակերեսը կազմել է 1278.701կմ<sup>2</sup>, իսկ լճի ծավալը կազմել է՝ 38.2022կմ<sup>3</sup>, դեկտեմբերի 31-ի դրությամբ լճի մակերեսը կազմել է 1277.845 կմ<sup>2</sup>, իսկ ծավալը՝ 38.0875կմ<sup>3</sup>:

*Պատկեր 8: Սևանի ջրավազանային կառավարման տարածք*





Լիճը գտնվում է Երևան քաղաքից մոտ 60 կմ հեռավորության վրա: Լճի պահպանական գոտու տարածքը կազմում է 342,920 հա: Սևանա լիճ են թափվում 28 գետ և գետակ, որոնցից 4-ը՝ Փոքր Սևան, 24-ը՝ Մեծ Սևան: Լճից սկիզբ է առնում միայն Հրազդան գետը: Վերջինիս շնորհիվ ջրերի տարեկան արտահոսքը կազմում է 0.7կմ3: Լիճը գոյացել է հրաբխային գործունեության հետևանքով՝ միջլեռնային տեկտոնական իջվածքում սառցադաշտային և ձնհալոցքային ջրեր լցվելու արդյունքում:

Սևանա լճի ավազանի տարբեր հատվածներ աչքի են ընկնում տարբեր կլիմայական պայմաններով: Սևանա լճի ավազանում ձնածածկը ձևավորվում է նոյեմբերի կեսերին, կայուն ծածկը՝ դեկտեմբերի սկզբին, իսկ նրա հալոցքը սկսվում է մարտի սկզբից և վերջանում ապրիլի վերջին: Օդի հարաբերական խոնավությունը ենթակա է օրական և սեզոնային տատանումների: Ձմռանը միջին հարաբերական խոնավությունը Փոքր Սևանում կազմում է 70-75%, Մեծ Սևանում՝ 80-85%, ամռանը՝ համապատասխանաբար Փոքր Սևանում՝ 65%, Մեծ Սևանում՝ 75%: Սևանա լճի ջրահավաք ավազանում տարեկան գումարային տեղումների բաշխումը ընդհանուր առմամբ համապատասխանում է նրա լեռնագրությանը:

Լճի ջրահավաք ավազանում մթնոլորտային տեղումները կախված են տեղանքի բարձրությունից՝ տարեկան 400մմ-ից (լճի առափնյա շրջանում) մինչև 900 մմ-ի (շրջապատի լեռների մերձգագաթային շրջանում), միջինը՝ 500-600 մմ: Տարվա ընթացքում լճի հայելու վրա տեղումների միջին քանակը կազմում է 390 մմ: Խորհրդային կառավարման տարիներին լճի մակարդակը զգալիորեն իջել է (18 մ), ինչի հետևանքով տարածաշրջանում առաջացել է էկոլոգիական խնդիր: Ջրի մակարդակի բարձրությունը վերականգնելու համար կառուցվել է Արփա- Սևան (48.3 կմ, 1963-81 թվականներ), ապա՝ Որոտան-Արփա դերիվատացիոն ջրատարները (21.6 կմ, 2004թ.-



ին):

Համաձայն 2014թ.-ի «Կենսաբանական բազմազանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 5-րդ ազգային զեկույցի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվել և իրականացվում են Սևանա լճի և ջրհավաք ավազանի էկոհամակարգերի պահպանության, էկոլոգիական հավասարակշռության վերականգնման և կենսաբազմազանության բնականոն զարգացման ու բնական պաշարների կայուն օգտագործման միջոցառումներ:

Սևանա լճի ավազանի համայնքների զգալի մասում ոռոգման նպատակով հիմնականում օգագործվում են Սևանա լիճ թափվող գետերի ջրերը, որոնց մեծ մասը անկանոն և չվերահսկվող ոռոգման հետևանքով ամառային ամիսներին ցամաքում են՝ զգալի վնաս հասցնելով գետերում ձվադրող ձկնատեսակներին՝ Սևանի կողակին, Ամառային իշխանին, Գեղարքունիքին և Սևանի բեղլուին, որոնք կորցնում են բազմացման համար անհրաժեշտ միջավայրը և պայմանները: Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով լճի ափամերձ տարածքները ջրածածկվում են, ինչի հետևանքով ջրի տակ են մնում անտառածածկ հատվածներ՝ հսկայական ծառեր, թփեր, ծառերի արմատներ, շենքեր, շինություններ, ճանապարհներ և տարբեր ենթակառուցվածքներ: Պետբյուջեի միջոցներով ջրածածկ անտառաթփային տարածքները շարունակաբար մաքրվում են:

Սևանա լճի համար գերխնդիր է նաև հարակից բնակավայրերից, արտադրական օբյեկտներից և լճի շուրջը կառուցապատված հանգստյան տներից լիճ թափվող կեղտաջրերի խնդիրը: Մաքման կայանների նախատեսումը և ափամերձ ջրածածկ հատվածների մաքրումը Սևանա լճի համար խիստ անհրաժեշտություն է:

Հայաստանի հանրապետությունում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացվում է շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Սևանա լճի ջրի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման 12.1 հավելվածի համաձայն՝ լճի մակերևույթից և տարբեր խորություններից: Մոնիթորինգն իրականացվում է տարին 2 անգամ՝ 18 դիտակետերում՝ հիմնականում անիոնների և կատիոնների, սնուցող նյութերի և ծանր մետաղների առկայությունը որոշելու համար:

ՀՀ և միջազգային պահանջների համաձայն մակերևութային ջրերի որակի դասը ձևավորվում է հիմնական անիոնների և կատիոնների, սնուցող նյութերի, ծանր մետաղների, առաջնային օրգանական աղտոտիչների համալիր գնահատմամբ:



Համաձայն «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2021թ.-ին հրապարակված տեղեկագրում ներառված Սևանա լճի մոնիթորինգի արդյունքների՝ 2021 թվականին Սևանի ՋԿՏ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 17 դիտակետում, որոնցից 17.6%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս, 58.8%-ում՝ 3-րդ դաս, 23.5%- ում՝ 4-րդ դաս: Նախորդ տարվա համեմատ 2021 թվականին ջրի որակի փոփոխություն է նկատվել: Համաձայն Գլխավոր ([www.armmonitoring.am](http://www.armmonitoring.am)) էլեկտրոնային էջի՝ 2022թ օգոստոս ամսին Սևանա լճի տարբեր հատվածներում կատարված ջրի որակի մոնիթորինգի արդյունքների՝ Սևան լճի ջրի որակն ընդհանրական դասով գնահատվում է 4-5-րդ դասի՝ ըստ նիտրիտ, ամոնիում, ֆոսֆատ իոնների և ԹՔՊ ցուցանիշների:

### 5.9. Հողային ռեսուրսներ

Վարդենիսի տարածաշրջանին առավել բնորոշ են լեռնամարգագետնային հողերը: Այստեղ ցածր ջերմաստիճանը և ուժեղ խոնավացումը նպաստել են գաճաճ, ուժեղ ճիւղ առաջացնող հացազգի տարախոտային և ընդավոր բուսական խմբավորումների զարգացմանը: Լեռնամարգագետնային հողերի մեծ մասի բուսածածկը հիմնականում օգտագործվում է անասնապահության համար՝ որպես արոտավայրեր: Լեռնամարգագետնային հողերի հումուսի պարունակությունը 13-20% է, ունեն թեթև մեխանիկական կազմ ու փխրուն կառուցվածք, միջինից ցածր կատիոնային փոխանակության ունակություն (15-20 մգ/էկվ) և թթվային ռեակցիա (pH=4,8-5,5), բարենպաստ ջրաֆիզիկական հատկություններ:

Մարգագետնային սևահողերը որպես ոչ գոտիական հողատիպ՝ ձևավորվել են բարձրլեռնային հարթավայրերում և առանձին, ոչ մեծ տարածքներով հանդիպում են Աշոցքում, Լոռիում, Շիրակում, Ապարանում և Սևանի ավազանում: Այդ հողերի զարգացումն ընթանում է 11,5-3 մ խորության ստորերկրյա քաղցրահամ ջրերի մշտական ազդեցությամբ: Մարգագետնասևահողային հողերին բնորոշ են կրազերծվածությունը, կնձիկահատիկային կառուցվածքը, հումուսի պարունակությունը բարձր է՝ մինչև 15 %, ունեն թույլ թթվային ռեակցիա, կատիոնային փոխանակության մեծ կլանունակություն (մինչև 57 մգ/էկվ), մեխանիկական կազմը՝ ծանր կավավազային և կավային է: Օգտագործվում են որպես վարելահողեր և խոտհարքներ:

Արևային կայանի համար հայցվող տարածքի հողի բերրի շերտի հզորությունը մեծ է՝ 0.4 – 0.6 m: Հայցվող տարածքում կատարվել է հողի բերրի շերտի հզորության չափում՝ երկու տեղամասում՝ տարածքի ցածրադիր և բարձրադիր հատվածներում, հաշվարկվել է հողի բերրի շերտի միջին հզորությունը /մոտովրապես 48 սմ/:

Համաձայն ՀՀ կառավարության 02.1.2017 “Հողի բերրի շերտի հանման նորմերի



որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին՝ թիվ 1404-Ն որոշման պահանջների հողի բերրի շերտը կառուցապատումից առաջ օգտահանվում և պահեստավորվում է:

Հողային աշխատանքներ կատարելիս հողի բերրի շերտն անհրաժեշտ է օգտահանել ապարներից առանձին: Հողի բերրի շերտը հանվում է տարվա տաք և չոր ժամանակաշրջանում: Նախքան բերրի շերտը հանելը՝ կատարվում են հողի մակերեսից կոճղերի, թփերի և խոշոր քարերի մաքրման նախապատրաստական աշխատանքներ:

Օգտահանված բերրի հողի պահպանման պահանջները հետևյալն են.

ա/ Հողային աշխատանքների կատարման ընթացքում չօգտագործված հողի հանված բերրի շերտն անմիջապես պետք է դարսվի լայնակույտերով:

բ/ Լայնակույտերի բարձրությունը և ձևը պետք է բացառի հողատարման գործընթացների զարգացումը:

դ/ Եթե հողի հանված բերրի շերտը նախատեսվում է պահել 2 տարին գերազանցող ժամկետով, ապա, ողողումը և հողմատարումը կանխելու համար, լայնակույտերի մակերևույթն ու թեքությունները պետք է ամրացվեն խոտացանքով կամ այլ եղանակներով: Թույլատրվում է լայնակույտի թեքությունների վրա ցանքսը կատարել հիդրոտեղանակներով:

ե/ Հողի հանված բերրի շերտը լայնակույտերում կարող է պահվել մինչև 20 տարի:

զ/ Լայնակույտերը տեղադրվում են գյուղատնտեսության համար ոչ պիտանի տեղամասերում կամ ցածր արդյունավետություն ունեցող հանդակներում և պետք է բացառվի լայնակույտերի ջրածածկումը, աղակալումը, արդյունաբերական թափոններով և կոշտ առարկաներով, քարերով, խճով, ճալաքարով ու շինարարական աղբով աղտոտումը:

է/ Հողի բերրի շերտը մինչ օգտահանումը չպետք է աղտոտված և աղբոտված լինի արդյունաբերական և կենցաղային թափոններով, կոշտ առարկաներով, քարերով, խճով ու շինարարական աղբով, ինչպես նաև պետք է համապատասխանի սանիտարահիգիենիկ պահանջներին:

*Պատկեր 9: ՀՀ հողային ծածկույթը*



Օգտահանված բերրի հողի պահեստավորման և պահեստավորված բերրի հողի պահպանության ծախսերից խուսափելու նպատակով որոշվել է արևային վահանակների տեղադրման ժամանակ հանել միայն ենթակայանի, վարչական շինությունների և ներքին ճանապարհների կառուցման տարածքների բուսաշերտը և բերրի հողը: Այն մոտավոր հաշվարկներով կկազմի 80 մ<sup>3</sup>, որի հանումը, պահեստավորումը և օգտագործումը կիրականացվի համաձայն ՀՀ կառավարության 02.11.2017 թ. N 1404-Ն որոշման պահանջների:

**5.10. Կենսաբազմազանություն**

Կենսաբազմազանության նկարագրությունը կատարվել է նախկինում տեղանքում իրականացված ուսումնասիրությունների և գրականության տվյալների:

Գրասենյակային աշխատանքների փուլ

Գրասենյակային եղանակով ուսումնասիրվում են տարածաշրջանի կենսաբազմազանության վերաբերյալ առկա հրատարակված նյութերը, օրենսդրական





դաշտը, կազմվում են բնորոշ բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների ցուցակները, ճշտվում է նրանց կենսամիջավայրի, կենսակերպի առանձնահատկությունները, ճշտվում է բուսատեսակների և կենդանատեսակների արտաքին նկարագրությունը: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքում ընդգրկված բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչներին, բնաշխարհիկ (էնդեմիկ): Ուսումնասիրության համար հարուստ նյութ կարող են տալ քարտեզագրական նյութերը և տիեզերական լուսանկարները:

Հազվագյուտ և անհետացող տեսակների կարգավիճակը ճշտվում է ըստ Հայաստանի բույսերի և կենդանիների Կարմիր գրքերի և Բնության և նրա ռեսուրսների պահպանության Միջազգային միության հանձնաժողովի կողմից մշակված չափանիշների:

Նախատեսվող գործունեության տարածքում շինարարական աշխատանքների ընթացքում որոշակի բացասական ազդեցության կենթարկվի տեղամասի բուսական ծածկույթը և կենդանական աշխարհը:

Ազդեցությունը իրականում չնչին է լինելու, քանի որ տարածքը շատ փոքր է որպեսզի զգալի ազդեցություն լինի տարածաշրջանի կենդանական աշխարհի վրա: Բուսական աշխարհին հասցվող հավանական վնասը ևս չնչին է լինելու քանզի տարածքը աղքատ է բուսական աշխարհով:

Ըստ բուսաբանական հետազոտությունների, արևային կայանի կառուցման համար նախատեսված տարածքներում գտնվող բուսատեսակներն ընդգրկված չեն ՀՀ Կարմիր Գրքում:

Պայմանավորված կենդանիների շարժունակությամբ, կենդանական աշխարհի ներկայացուցիչները համեմատաբար պակաս ազդեցության կենթարկվեն:

Շինարարության ընթացքում՝ տեխնիկական միջոցների աղմուկի մակարդակի ավելացման պատճառով որոշ տեսակներ հնարավոր է հեռանան այդ տարածքներից, սակայն դա կունենա ժամանակավոր բնույթ, հետագայում հնարավոր է վերադառնան իրենց նախկին տարածքները:

**5.10.1 Բուսական աշխարհ**

Սևանա լճի և տարածքի կենսաբազմազանության պահպանման նպատակով ստեղծվել է «Սևան»ԱՊ-ն:



Տարածաշրջանը տափաստանային միջին լեռնային (1400-2300 ծ.մ.բ.) է, իրեն բնորոշ լեռնատափաստանային բուսականությամբ՝ հատիկաբուսականության գերակշռությամբ, բլրի արանքներում և քարակույտերի մոտ թփերի և առանձին ծառերի առկայությամբ: Տափաստանային գոտին Հայաստանի տարածքի ամենաընդարձակ գոտին է, որը սկսվում է 1500-1600 մ-ից, երկրի հյուսիսային հատվածում հասնում է մինչև 2000մ բարձրության, իսկ հարավային հատվածում՝ 2400-2500մ՝ տափաստանային և գորշ կարբոնատային, անտառային տիպերով: Աչքի են ընկնում բուսական համակեցությունների բազմազանությամբ: Ծայրահեղ չորասեր, գուղձավոր, պնդաճիմ հացազգի խոտաբույսերի, փշաբարձիկավոր տարախոտերի առկայությունը բուսականության բնորոշ առանձնահատկություններից է: Ավելի հարավ ընկած տարածություններում տարածված են հիմնականում գիհու և կաղնու անտառները: Սևանի ավազանին բնորոշ են ցամաքային էկոհամակարգերը՝ մարգագետիններ, տափաստաններ, անտառային և նոսրանտառային, ինչպես նաև ժայռա-քարացրոնային և լճի ջրերից ազատված տարածքները: Պայմանավորված ռելիեֆային առանձնահատկություններով՝ Սևանի ավազանի բուսականությունն ունի վառ արտահայտված մոզաիկ բնույթ:

Որպես ռելիկտային համակեցություններ պահպանվել են՝ սոռֆային ճահճուտները, քարացրոնային և ժայռային բուսական խմբավորումները, փոփոք թփուտները՝ ցածրաճ գիհուտները և այլն: Տարածաշրջանի բուսականությունը հիմնականում տափաստանային է՝ հացազգային, տարախոտա-հացազգային/*Festuca valesiaca* Gaudin, *F. ovina* L., *Koeleria albobii* Domin, *K. cristata* (L.) Pers., *Bothriochloa ischaemum* (L.) Keng, *Stipa capillata* L., *S. Lessingiana* Trin. Et Rupr., *S. Tirsa* Stev., *Elytrigia trichophora* (Link) Nevski, *Galium verum* L., տեսակներ *Agropyron*, *Andropogon*, *Scabiosa*, *Veronica*, *Artemisia*, *Achillea*, *Astragalus*/: Տափաստաններում հողերի մշակումը, դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծումը, խոտհարքները, նաև հրդեհները բացասաբար են ազդում բուսածածկույթի և կենդանական աշխարհի վրա: Բնական բուսածածկույթին փոխարինելու են գալիս մշակաբույսերը՝ ցորեն, եգիպտացորեն, արևածաղիկ, պտղատու այգիները, իսկ ողողատներում՝ բանջարեղենի մշակությունը: Սևանի ջրհավաք ավազանի տափաստանային գոտին՝ 1906-2400մ ծովի մակերևույթից բարձր է, հիմնականում ներկայացված է չոր և տիպիկ տափաստաններին բնորոշ խոտաբույսերով՝ շյուղախոտ, փետրախոտ և այլն: Այստեղ աճում են նաև գիհու, մասրենու, արոսենու, կծուխորի, այծատերևուկի և այլ թփուտներ: Բավական շատ են գազերը, ոզնաթփերը, որոնց թվում կան մի շարք հազվագյուտ և անհետացող տեսակներ: Մարդու կողմից առավել յուրացված է հենց այս գոտին, որի զգալի մասը վերածվել է վարելահողերի, իսկ մնացածը ակտիվ օգտագործվում է որպես խոտհարքեր և արոտավայրեր:



Համաձայն ՀՀ կառավարության «Սևան» ԱՊ-ի 2007-2011թթ կառավարման պլանի՝ «Սևան ազգային պարկ»-ի և պահպանական գոտու տարածքում գրանցված են մոտ 1619 տեսակ անոթավոր բույսեր (Հայաստանում գրանցված բարձրակարգ բույսերի կեսից ավելի), 23 էնդեմիկ բուսատեսակներ, որոնցից 13-ը Սևանի ֆլորիստիկ շրջանի էնդեմիկներ: Միայն ազգային պարկի տարածքում աճում են Հայաստանի էնդեմիկ և Սևանա լճի ավազանի 5 էնդեմիկ տեսակներ: Համաձայն «Կենսաբանական բազմազանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 5-րդ ազգային զեկույցի՝ Սևանի տարածաշրջանին բնորոշ են տափաստանները, մարգագետինները, կաղնու անտառները և գիհու նոսրանտառները: Էնդեմիկ բուսատեսակների թիվը 28 է, իսկ ՀՀ Կարմիր գրքում գրանցված տեսակների թիվը՝ 48: Ազգային պարկում և դրա պահպանական գոտում հայտնի են շուրջ 60 բուսատեսակներ, որոնք օգտագործվում են կամ կարող են օգտագործվել որպես դեղաբույսեր: Շուրջ 100 բուսատեսակներ համարվում են ուտելի: «Սևան ազգային պարկ»-ի և դրա պահպանական գոտու առկա է շուրջ 32 ծառատեսակ, 102 թփերի տեսակ, 1146 բազմամյա խոտաբույս և 307 միամյա ու երկամյա բուսատեսակներ: Տեղանքում աճում են հացազգիներին պատկանող շատ բույսեր՝ շյուղախոտի (*Festuca sp.*), որմի (*Lolium sp.*) և դաշտավուկների (*Poa sp.*) տարբեր տեսակներ: Սևանա լճի ավազանում բավականին տարածված են նաև բուսականության էքստրագոնալ տիպերը՝ փլուզուտային, քարացրոնային և ժայռային բուսականությունը: Դրանք առանձին հատվածներով հանդիպում են բոլոր 28 բարձունքային գոտիներում: Իսկ Սևանա լճի ջրից ազատված հողագրոնտները ծածկված են արհեստական տնկարկներով (սոճի, չիչխան, բարդի և այլ): Կարմիր գրքում գրանցված են տարածաշրջանին բնորոշ՝ Խոզանափուշ *Ֆյոդորովի-Cousinia fedorovii* Takht, Լրջուն *Սևանի-Isatis sevangensis* N. Busch, Թրաշուշան հայաստանյան - *Gladiolus hajastanicus* Gabrielian, Հիրիկ Նրբագեղ - *Iris elegantissima* Sosn, Վիշապագլուխ ավստրիական - *Dracocephalum austriacum* L., Գառնառվույտ հայկական - *Oxytropis armeniaca* Sosn. ex Mulk:

Տարածաշրջանում կան նաև ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված՝ վտանգված սնկատեսակներ, մասնավորապես Հելվելա սև- *Helvella atra* J.Kûenig, Մուտինուս շնային - *Mutinus caninus* (Huds.: Pers.) Fr., կրիտիկական վիճակում գտնվող՝ Սարկոսոմա- *Sarcosoma globosum* (Schmidel : Fr.) Casp., Միրիոստոմա *Myriostoma coliforme* (Dicks. : Pers.) Corda և այլն:

Տարածքը պատկանում է Սևանի ֆլորիստիկ շրջանին: Այն տեղակայված է լճաբերուկային նստվածքներով հարուստ Մասրիկի դաշտում: Բուսականությունը Մեծ Մասրիկի մոտակայքում տապաստանային և մարգագետնային տարրեր է պարունակում: Առանձին՝ գերխոնավ հողերում և Մասրիկ գետի ափերին կարող է



հանդիպել խոնավասեր բուսականություն: Կարինետային աշխատանքների փուլում հավանական էր համարվել Գագ չորասեր /Astragalus xerophylus/ բուսատեսակի ներկայությունը հայցվող տարածքում: Սակայն դաշտային աշխատանքներ փուլում ՀՀ Կարմիր գրքում գրանցված որևէ բուսատեսակ հայցվող տարածքում չի հայտնաբերվել: Հետազոտված տարածքի բուսականության գերակշռող ձևն է՝ լեռնային տապաստանները և մարգագետինները: Սակայն այս տարածքում նկատվում է գերարածեցման հետևանքով առաջացած բուսածածկույթի զգալի ճնշվածություն, նոսրացում և տեսակային կազմի աղքատացում:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է «Սևան» ԱՊ-ի տարածքից դուրս, Մեծ Մասրիկ վարչական տարածքի սահմաններում, որտեղ առկա է մարդածին ազդեցությունը, ուստի ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները բացակայում են:

#### 5.10.2 Կենդանական աշխարհ

Տարածաշրջանում կենդանական աշխարհը ներկայացված է ողնաշարավոր կենդանիների 330 տեսակներով, այդ թվում՝ կաթնասուններ՝ 44 տեսակ (զայլ, աղվես, նապաստակ, կզաքիս, փորսուղ, աքիս, լուսա, ոչ հաճախ նաև արջ և այլն), թռչունների՝ 267 տեսակ, 4 տեսակ երկկենցաղներ, 16 տեսակ սողուններ և 9 տեսակ ձուկ, այդ թվում Սևանի իշխանը, որը գրանցված է Կարմիր գրքում, Սևանի կողակը, Սևանի բեղլուն և այլն:

Համաձայն ՀՀ կառավարության «Սևան» ԱՊ-ի 2007-2011թթ կառավարման պլանի՝ «Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հաշվարկվում են անողնաշարավորներ, խեցգետիններ, 43 տեսակի փափկամարմիններ՝ խիտունջներ, լորձնամույրուսկներ, միջատներին պատկանող 639 տեսակի հողվածոտանիներ: Կապտաթիթեռը (*Maculinea nausithous* Bergs), որը հայտնի է պարկի պահպանական գոտուց, գրանցված է բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցանկում: Լճում հանդիպում են երկարաչանչ խեցգետին: Ողնաշարավորներից հայտնի է Սևանի էնդեմիկ իշխանն իր 4 տարատեսակներով՝ ձմեռային բախտակ՝ (*Salmo danilewskii*), ամառային բախտակ՝ (*Salmo ischchan aestivalis*), գեղարքունի՝ (*Salmo ischchan gegarkuni*), բոջակ՝ (*Salmo ischchan danilewskii*), որոնք 30 միսյանցից տարբերվում են ձվադրման տեղերով ու ժամկետներով (երբեմն դրան ավելացնում են 5-րդ սեռը՝ ալաբալախ՝ գետայինը), սիգ ձուկը, էնդեմիկ ձկներից՝ Սևանի բեղլուն և Սևանի կողակը: Պատահաբար լիճ է ներթափանցել նաև լճածածանը: Հանդիպում են նաև 4 տեսակի երկկենցաղներ, 16 տեսակի սողուններ, օձեր, 267 տեսակի թռչուններ՝ արագիլ, ֆլամինգո, սագեր, որոր, կտցար, աղավնազգիներ, հավազգիներ և այլն: Հանդիպում են կաթնասունների 44 տեսակ, որոնք պատկանում են հետևյալ կարգերին.



- Միջատակերներ (Insectivora),
- Կրծողներ (Rodentia),
- Նապաստակներ (Logomorpha),
- Չղջիկներ (Chiroptera),
- Գիշատիչներ (Carnivora),
- Սմբակավոր/կճղակավոր կաթնասուններ (Artiodactyla):

Նշված տեսակներից 6-ը գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում (վայրենակերպը, ջրասամույրը, գորշ արջը, խայտակազքիսը, անտառային կատուն, բեզոարյան այծը): Սողուններից հանդիպում են մի շարք մողեսներ, սպիտակափոր ժայռային մողեսը, նաիրյան ժայռային մողեսը, ռուստոմբեկովի ժայռային մողեսը, հայկական ժայռային մողեսը, վալենտինի ժայռային մողեսը, իսկ օձերից՝ սովորականը, ջրային լորտուները, պղնձօձը, լեռնատափաստանային իժը: Երկկենցաղներից առկա են կանաչ դողոջը, լճագորտը, փոքրասիական գորտը և շեկովնիկի ծառագորտը: Ջրային կամ ջրաճահճային կենդանիների համար որպես ապրելավայր ծառայում են Սևանա լճի ջրերը, ափամերձ գոտու ճահճուտներն ու լիճ թափվող գետերի գետաբերանները:

Վերջին 4 տասնամյակի ընթացքում Սևանա լճի մակարդակի 19 մ իջեցումը, ինչպես նաև ավելի քան 10 հազ. հա ճահճուտների արհեստական չորացումը, նախկին ժայռոտ ափերի վերացումը խիստ բացասաբար են անդրադարձել ավազանի կենդանական աշխարհի վրա, որը հատկապես ցայտուն կերպով արտահայտված է թռչունների մոտ: Սևանի ավազանում և դրա պահպանական գոտում հանդիպում էին 267 տեսակի թռչուններից 48-ը բնադրող էին: 160 տեսակ չվող թռչուններից մնացել է 50-ը: Էնդեմ հանդիսացող Սևանի ծովորորի համար բնական միջավայրը դարձել է Էկոլոգիապես անկայուն: Այսօր դրանցից շատերը՝ մոխրագույն սագը, տուրպան, կարմրակտուց և կարմրագլուխ բադերը, սպիտակագլուխ բադը (սավկան), չեն բնադրում լճի տարածքում:

Կարմիր գրքում գրանցված են՝ կաթնասունների 6 տեսակ, (Բեզոարյան այծ *Capra aegagrus Erxleben*) և այլն), սողուններից 2 տեսակ (խայտաբղետ՝ Անդրկովկասյան բազմագույն մողեսիկ-*Eremias arguta transcaucasica Darevsky, 1953*), փոքրասիական մողեսները- *Darevskia rostombekovi Darevsky 1957*): 39 թռչնատեսակներ (Հայկական որոր-*Larus armenicus*), վարդագույն հավալուսն - *Pelecanus onocrotalus Linnaeus, 1758* և այլն), սագանմաններից՝ սպիտակագլուխ բադ կամ սավկա - *Oxyura leucocephala Scopoli, 1769*, ձկներից՝ Սևանի իշխանը իր տարատեսակներով, Սևանի բեղուն (Barbus goetschaicus Kessler) և Սևանի կողակը (*Varicorhinus capoeta sevangi, Filippi*) հողվածոտանիներից՝ Արիոն կապտաթիթեռը *Maculinea arion zara Jachontov*,





Մթնշաղային կապտաթիթեռ-Maculinea nausithous, 31 Անտեսված կապտաթիթեռ - Agrodiaetus neglectus Dantchenko, 2000, Նինայի կապտաթիթեռ - Agrodiaetus ninae Forster, 1956, Թուրքական կապտաթիթեռ Agrodiaetus turcicus Koçak, գրանցված են միջազգային միության Կարմիր գրքում: Կենդանիների Կարմիր գրքում ներառված տեսակները հիմնականում պահպանված են չխախտված բնական տարածքներում և չինգիլների մոտ: Կառավարության կողմից յուրաքանչյուր տարի հաստատվում է «Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման միջոցառումների տարեկան ծրագիրը», ելնելով «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նպատակներից ու խնդիրներից:

Արևային կայանի համար հայցվող տարածքը մոտիկ է «Սևան» ազգային պարկի «Գիլի» արգելոցին և կաբինետային աշխատանքների փուլում հավանական էր համարվում բազմաթիվ կենդանատեսակների, մանավանդ թռչունների, հավանական ներկայությունը այդ տարածքում: Դաշտային աշխատանքների փուլում պարզվեց, որ տարածքը ամեն տարի գերարածեցվում է, որի հետևանքով տարածքի բուսական աշխարհը խիստ աղքատիկ է: Տարածքը ունի հարթ, միապաղաղ լանդշաֆտ, չկան հարմար բնադրավայրեր ու կենսագործունեության բավարար պայմաններ վերհիշյալ կենդանատեսակների համար: Դաշտային աշխատանքների ընթացքում արևային կայանի համար հայցվող տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներ չեն հայտնաբերվել:

Հայցվող տարածքների կառուցապատումը չի կարող էական ազդեցություն թողնել այդ թռչունների թվաքանակի և կենսամիջավայրի վրա:

Հետազոտված տարածքը հարակից է Մասրիկ գետին, որի ափերին հայտնաբերվել է տարածաշրջանին բնորոշ երկկենցաղներից փոքրասիական գորտը և լճագորտը: Հնարավոր է, որ այդ կենդանիները բազմացման շրջանը անցկացնեն հետազոտվող տարածքի գերխոնավ տեղամասերում, որոնք սակայն, ամռան ամիսներին չորանում են ամբողջովին: Տարածքում հայտնաբերվել են 5 տեսակի մողեսներ, մանր կրծողներ, թռչուններ: Միջատներից հայտնաբերվել ուղղաթևավորների մի քանի տեսակներ, թաղանթաթևավորներ, թեփուկաթևավորներ: Հազվադեպ հանդիպում են մրջնաբներ:

**5.11. Բնության հատուկ պահպանվող տարածքներ**

Նախատեսվող գործունեության տարածքը դուրս է հատուկ պահպանվող՝ «Սևան» ԱՊ-ի սահմաններից:



«Սևան» ԱՊ-ի տարածքը բաժանվում է 4 տարածքագործառնական գոտիների՝ արգելոցներ, արգելավայրեր, ռեկրեացիոն և տնտեսական: Պարկի տարածքում կան 4 արգելոցներ՝ «Նորաշենի», «Լիճք-Արգիշի», «Գիլլի» և «Արտանիշի», ընդհանուր 7464 հա մակերեսով:

«Սևան» ԱՊ-ի տարածքագործառնական գոտիներից նախատեսվող գործունեության տարածքին ամենամոտը գտնվում է «Արտանիշի» արգելոցը: «Արտանիշի» արգելոցը գտնվում է ազգային պարկի արևելյան մասում, ընդգրկում է Արտանիշ թերակղզին (բացառությամբ ձախակողմյան հատվածի՝ Շողակաթ համայնքային հողերը) և Արտանիշի լճախորշի թերակղզուն հարող մասը: Տարածքը զբաղեցնում է 3640 հա մակերես, որից 2142 հա ցամաքային տարածք, իսկ 1498 հա՝ ջրային: Սահմանի ընդհանուր երկարությունը 25.9 կմ է: Արգելոցի տարածքը ձգվում է մոտ 11.7 կմ երկարությամբ և 7.8 կմ լայնությամբ: Արգելոցի նպատակն է ապահովել Արտանիշ թերակղզու մինչսառցային ժամանակաշրջանի բազմազան ռելիեֆային բուսականության, գիհու նոսրանտառների և տափաստանների, ինչպես նաև որպես հազվագյուտ կենդանիների (գորշ արջ, այծյամ, վարազ, բեզուարյան այծ, ազնվացեղ եղջերու և այլն) միգրացիայի միջանցքի պահպանությունը:

*Ազգային պարկի գոտում են նաև «Գավառագետ» և «Գիհի-կաղնուտային ռելիեֆային» արգելավայրը:*

*Ներկայացված գործունեությունը չի կարող որևէ էական ազդեցություն ունենալ տարածաշրջանի ԲՀՊՏ-ներից ոչ մեկի վրա:*

**5.12. Պատմամշակութային և բնության հուշարձաններ**

Համաձայն ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 9-ի N 80-Ն որոշման՝ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակ»-ի, ներկայացված տարածքին ամենամոտ Մեծ Մասրիկ, Փոքր Մասրիկ և Վարդենիս բնակավայրերում կան հետևյալ պատմական, մշակութային հուշարձանները.

*Աղյուսակ 12: Մեծ Մասրիկ գյուղի պատմամշակութային հուշարձանները*

| Հուշարձան  | Գտնուցված    | Վայր, հասցե  | Նշան | Հավելյալ նշումներ  |
|------------|--------------|--------------|------|--------------------|
| 1          | 2            | 3            | 4    | 5                  |
| ԳԵՐԵՁՄԱՆՈՅ | 9-17-րդ դդ.  | հս-աե մասում | Հ    |                    |
| խաչքար     | 881 թ.       |              | Հ    |                    |
| խաչքար     | 9-10-րդ դդ.  |              | Հ    | վերնամասը՝ կոտրված |
| խաչքար     | 10-11-րդ դդ. |              | Հ    | վերնամասը՝ կոտրված |
| խաչքար     | 11-րդ դ.     |              | Հ    | պատվանդանին        |



|  |              |           |   |   |
|--|--------------|-----------|---|---|
| խաչքար                                 | 11-րդ դ.     |           | Հ | անմշակ պատվանդանին                                      |
| խաչքար                                 | 11-րդ դ.     |           | Հ | անմշակ պատվանդանին                                      |
| խաչքար                                 | 12-րդ դ.     |           | Հ | կանգնեցրած գետնին                                       |
| խաչքար                                 | 13-14-րդ դդ. |           | Հ | անմշակ պատվանդանին,<br>արձանագիր                        |
| խաչքար                                 | 14-րդ դ.     |           | Հ | կանգնեցրած գետնին                                       |
| խաչքար                                 | 14-15-րդ դդ. |           | Հ | ստորին մասը կոտրված                                     |
| խաչքար՝ Եղիսաբեթի                      | 15-16-րդ դդ. |           | Հ | պատվանդանին,<br>վերնամասը չի<br>պահպանվել               |
| խաչքար՝ Անի և<br>Շահումի               | 1568 թ.      |           | Հ | կանգնեցրած գետնին                                       |
| խաչքար՝ Մովսեսի և<br>Գուլումի          | 1571 թ.      |           | Հ | պատվանդանին   |
| խաչքար՝ Աբրահամի                       | 1576 թ.      |           | Հ | վերին աջ անկյունը՝<br>կոտրված                           |
| խաչքար՝ Ճանփաշայի<br>և Ստեփանոսի       | 16-րդ դ.     |           | Հ | անմշակ պատվանդանին                                      |
| տապանաքար՝<br>Հայրապետի                | 1568 թ.      |           | S |   |
| տապանաքար՝<br>Թահիրի                   | 1581 թ.      |           | S |   |
| տապանաքար՝<br>Սարգսի                   | 16-րդ դ.     |           | S |   |
| տապանաքար՝<br>Հովհաննեսի               | 16-17-րդ դդ. |           | S |   |
| տապանաքար                              | 16-17-րդ դդ. |           | S | կողերին կոտրվածքներ                                     |
| տապանաքար                              | 16-17-րդ դդ. |           | S | հս-աե անկյունը՝<br>կոտրված                              |
| տապանաքար՝<br>Մելիքջանի                | 1638 թ.      |           | S |   |
| տապանաքար՝ Պալի,<br>Մելիքբեկի, Ատիճանի | 1683 թ.      |           | S |   |
| տապանաքար                              | 1685 թ.      |           | S | վերին ձախ մասը<br>կոտրված                               |
| տապանաքար՝<br>Աթարբեկի                 | 1685 թ.      |           | S |   |
| տապանաքար՝<br>Զանիբեկի                 | 1692 թ.      |           | S |   |
| ԳԵՐԵԶՄԱՆՈՅ                             | 9-17-րդ դդ.  | աե մասում | S | Մասրիկ գետի աջ ափին,<br>գործող գերեզմանոցի<br>տարածքում |
| խաչքար                                 | 11-րդ դ.     | հս մասում | Հ | կանգնեցված գետնին                                       |
| խաչքար                                 | 11-րդ դ.     | հս մասում | Հ | կանգնեցված գետնին                                       |



|  |              |           |   |  |
|--|--------------|-----------|---|--|
| խաչքար   | 12-13-րդ դդ. | հս մասում | Հ | ընկած գետնին                                   |
| խաչքար   | 14-րդ դ.     | հս մասում | Հ | տեղադրված հորիզոնական դիրքով որպես տապանաքար   |
| խաչքար   | 14-15-րդ դդ. | հս մասում | Հ | տեղադրված հորիզոնական դիրքով որպես տապանաքար   |
| խաչքար   | 1600 թ.      | հս մասում | Հ | կանգնեցված գետնին, արձանագիր                   |
| խաչքար՝ Նովադին  | 1620 թ.      | հս մասում | Հ | ընկած գետնին                                   |
| ԳԵՐԵԶՄԱՆՈՅ   | 10-17-րդ դդ. | կնտ       | S | Մարիամ Կուրդյանի տնամերձի տարածքում            |
| ԳԵՐԵԶՄԱՆՈՅ   | 12-19-րդ դդ. | հվ մասում | S | դպրոցի մոտ, Ռաֆիկ Պողոսյանի տնամերձի տարածքում |
| խաչքար   | 12-13-րդ դդ. |           | Հ | ընկած գետնին                                   |
| ԳԵՐԵԶՄԱՆՈՅ. ՄԵԼԻՔ – ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆՆԵՐԻ ՏՈՀՄԱԿԱՆ ՏԱՊԱՆԱՏՈՒՆԸ | 16-17-րդ դդ. | կնտ       | Հ |  |
| խաչքար   | 15-16-րդ դդ. |           | Հ | կանգնեցրած գետնին                              |
| խաչքար   | 16-րդ դ.     |           | Հ | վերնամասը՝ կոտրված                             |
| խաչքար   | 1571 թ.      |           | Հ | վերին կեսը չի պահպանվել, թվակիր                |
| խաչքար՝ Մելիք բեկի                                       | 1578 թ.      |           | Հ | երկաստիճան պատվանդանին                         |
| խաչքար՝ Աբա Բեկի   | 1641 թ.      |           | Հ | անմշակ պատվանդանին                             |
| խաչքար՝ Յավրի բեկի և Գուլասարի                           | 1656 թ.      |           | Հ | պատվանդանին                                    |
| խաչքար՝ Միրզայի  | 1698 թ.      |           | Հ | պատվանդանին, վերնամասը՝ չի պահպանվել           |
| տապանաքար՝ Բաբաջանի                                      | 16-17-րդ դդ. |           | Հ |  |
| տապանաքար  | 16-17-րդ դդ. |           | S |  |
| տապանաքար  | 16-17-րդ դդ. |           | S | ձիակերպ  |
| տապանաքար՝ Մարիանի                                       | 1670 թ.      |           | S |  |
| տապանաքար  | 1682 թ.      |           | S |  |
| տապանաքար  | 1685 թ.      |           | S |  |
| տապանաքար՝ Պապամի  | 1713 թ.      |           | S |  |



|  |               |           |   |   |
|--|---------------|-----------|---|---|
| ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ՍԸՐԽԱՆԱ»                           | 10-17-րդ դդ.  | 2 կմ ամ   | S |   |
| ԴԱՍԲԱՐԱՆ                                       | մթա 1 հզմ     | հվ մասում | Հ | գյուղի հվ եզրին, գյուղ մտնող ճանապարհից ձախ       |
| ԵԿԵՂԵՑԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ                          | 13-14-րդ դդ.  | հվ մասում | Հ | Մասրիկ գետի աջ ափի բարձունքին                     |
| խաչքար   | 1539 թ.       |           | Հ | ագուցված ամ պատին, արձանագիր                      |
| խաչքար՝ Էմկարի                                 | 1551 թ.       |           | Հ | Եկեղեցուց հվ, ընկած գետնին                        |
| խաչքար՝ տեր Մարգարի, Դովլաթի և այլոց           | 1552 թ.       |           | Հ |   |
| տապանաքար՝ Տիրունի                             | 1541 թ.       |           | S | ամ պատին  |
| տապանաքար                                      | 16-17-րդ դդ.  |           | S | ամ պատին  |
| ԽԱԶՔԱՐ   | 1551 թ.       | ան մասում | Հ | ան եզրին, ընկած գետնին, թվակիր, ունի լայնական ճաք |
| ԽԱԶՔԱՐ   | 1580 թ.       | գ. մ.     | Հ | ճանապարհի եզրին, գյուղի պատմական գերեզմանոցից հվ  |
| ՀՈՒՇԱՂԲՅՈՒՐ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ | 1950-ական թթ. | կնտ       | S |   |
| ՄՇԱԿՈՒՅՑԻ ՏՈՒՆ                                 | 1956 թ.       | գ. մ.     | S | ճարտ.՝ Զ. Բախշինյան                               |

Աղյուսակ 13: Փոքր Մասրիկ գյուղի պատմամշակութային հուշարձանները

| 1                      | 2            | 3     | 6 | 7  |
|------------------------|--------------|-------|---|--|
| ԳԵՐԵԶՄԱՆՈՅ             | 15-16-րդ դդ. | գ. մ. | S | Վարդենիս տանող ճանապարհի աջ կողմում                                |
| խաչքար                 | 15-16-րդ դդ. |       | Հ | ընկած գետնին   |
| տապանաքար Զահանի և ... | 16-րդ դ.     |       | S | կանգնեցված՝ տեղաբնակների կողմից պատվիրատու՝ Միրան                  |
| տապանաքար              | 16-17-րդ դդ. |       | S | արձանագիր  |
| ԽԱԶՔԱՐ՝ «Ս. ՆՇԱՆ»      | 1269 թ.      | գ. մ. | Հ | խրված հողի մեջ   |
| ԽԱԶՔԱՐ                 | 1308 թ.      | գ. մ. | Հ | տեղացիների կողմից օգտագործվում է որպես սրբատեղի պատվիրատու՝ Սուսբե |
| ՄԱՏՈՒՌ                 | 12-13-րդ դդ. | գ. մ. | S | գյուղ մտնող ճանապարհից աջ  |
| խաչքար                 | 13-րդ դ.     |       | Հ | մատուռի ներսում  |
| գերեզմանոց             | 12-17-րդ դդ. |       | S | մատուռի շուրջը   |





|                        |              |       |   |   |
|------------------------|--------------|-------|---|---|
| խաչքար                 | 15-16-րդ դդ. |       | Հ | մատուռի մուտքից աջ, 3 խաչքարերից կենտրոնինը |
| խաչքար                 | 1533 թ.      |       | Հ | պատվանդանին                                 |
| խաչքար Սուլթանդիմի     | 1538 թ.      |       | Հ |   |
| խաչքար                 | 1540 թ.      |       | Հ | պատվիրատու՝ Գալուստ                         |
| խաչքար՝ Մարկոսի        | 16-17-րդ դդ. |       | Հ |   |
| խաչքար                 | 1629 թ.      |       | Հ |   |
| տապանաքար՝<br>Կարապետի | 16-17-րդ դդ. |       | Տ |   |
| ՏԱՊԱՆԱՔԱՐ              | 16-17-րդ դդ. | գ. մ. | Տ | ճանապարհի եզրին,<br>տեղահանված              |

Աղյուսակ 14: Վարդենիս գյուղի պատմամշակութային հուշարձանները

| 1                         | 2            | 3         | 6 | 7   |
|---------------------------|--------------|-----------|---|---|
| ԳԵՐԵԶՄԱՆՈՅ                | 15-20-րդ դդ. | ան մասում | Տ | քաղաքի ան եզրին, Մեծ Մասրիկ տանող ավտոճանապարհի 2 կողմերում                     |
| խաչքար                    | 13-րդ դ.     |           | Հ | խրված հողի մեջ  |
| խաչքար                    | 14-15-րդ դդ. |           | Հ | խրված հողի մեջ  |
| խաչքար՝ Մուրադի           | 1425 թ.      |           | Հ | կանգնեցված գետնին   |
| խաչքար                    | 15-րդ դ.     |           | Հ | կանգնեցված գետնին   |
| խաչքար՝ Մարգարի           | 1520 թ.      |           | Հ | խրված հողի մեջ  |
| խաչքար՝ Փանոսի և Ամիրբեկի | 1548 թ.      |           | Հ | կանգնեցված գետնին   |
| խաչքար                    | 16-17-րդ դդ. |           | Հ | կանգնեցված գետնին   |
| տապանաքար՝<br>Միրզախանի   | 1662 թ.      |           | Տ |   |
| ԳՅՈՒՂԱՏԵՂԻ<br>«ԱԿՆԵՆ»     | 10-18-րդ դդ. | ան մասում | Տ | գարեջրի գործարանի մոտ,<br>տեղացիներն այցելում են<br>որպես ս. Վարդան<br>սրբատեղի |



| ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ  | մթա 7-5-րդ դդ. | աե մասում    | Հ |  |
|--|----------------|--------------|---|--|
| ԵԿԵՂԵՑԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ                                    | 1903-1912 թթ.  | կնտ          | S |  |
| գերեզմանոց   | 14-16-րդ դդ.   |              | S | եկեղեցու շուրջը բարեկարգված՝ 1980 թ.                 |
| խաչքար   | 12-13-րդ դդ.   |              | Հ | եկեղեցուց 4 մ հվ, ընկած գետնին, երկատված             |
| խաչքար   | 14-րդ դ.       |              | Հ | հենած հվ պատին, վարդյակը՝ կիսով կոտրված              |
| խաչքար՝ Արիստակեսի                                       | 1451 թ.        |              | Հ | հենած եկեղեցու աե պատին                              |
| խաչքար   | 15-րդ դ.       |              | Հ | հենած եկեղեցու հվ պատին                              |
| խաչքար   | 15-16-րդ դդ.   |              | Հ | եկեղեցու հվ կողմում, ընկած գետնին                    |
| խաչքար՝ Աստվածատուրի                                     | 15-16-րդ դդ.   |              | Հ | ընկած եկեղեցուց հվ                                   |
| խաչքար   | 1512 թ.        |              | Հ | եկեղեցուց 4 մ հվ, կանգնեցված գետնին                  |
| խաչքար՝ Ավաննեսի   | 1548 թ.        |              | Հ | ընկած եկեղեցուց 3 մ հվ                               |
| խաչքար՝ Շահում աղայի                                     | 1561 թ.        |              | Հ | եռատված, բեկորները եկեղեցու աե պատի մոտ              |
| խաչքար՝ Հովհաննես քահանայի                               | 1575 թ.        |              | Հ | կանգնեցված գետնին, եկեղեցու հս պատի մոտ              |
| խաչքար՝ Հովհաննես վարդապետի                              | 1598 թ.        |              | Հ | հենած եկեղեցու հս պատին                              |
| խաչքար՝ Հովհաննես աղայի                                  | 16-րդ դ.       |              | Հ | եկեղեցու հս պատի մոտ, ընկած գետնին                   |
| խաչքար՝ Զոհրապի  | 16-րդ դ.       |              | Հ | եկեղեցու հվ կողմում, վարդյակը կոտրված կազմող՝ Մանվել |
| խաչքար՝ Հովհաննես աղայի                                  | 16-րդ դ.       |              | Հ | եկեղեցու հվ պատի մոտ, կանգնեցված գետնին              |
| խաչքար՝ Վարդի  | 16-րդ դ.       |              | Հ | հենած եկեղեցու հվ պատին                              |
| խաչքար՝ 1988թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ՍՊԻՏԱԿԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՀԵՐԻՆ | 1989 թ.        | հս-աե մասում | S | քարգործ վարպետ՝ Ստ. Նալբանդյան                       |



|   |               |              |   |                                      |
|---|---------------|--------------|---|--------------------------------------|
| ՀՈՒՇԱՐՁԱՆ<br>ԵՐԿՐՈՐԴ<br>ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ<br>ԶՈՆՎԱԾՆԵՐԻՆ | 1967 թ.       | կնտ          | S | քաղաքի կենտրոնական հրապարակում       |
| ՀՈՒՇԱՐՁԱՆ<br>ԵՐԿՐՈՐԴ<br>ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ<br>ԶՈՆՎԱԾՆԵՐԻՆ | 1970-ական թթ. | ք. մ.        | S | Արմենակ Կարապետյանի անվան զբոսայգում |
| ՀՈՒՇԱՐՁԱՆ ՎԻԿՏՈՐ<br>ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ                    | 1978 թ.       | կնտ          | S | Մշակույթի տան մոտ                    |
| ՄԱՏՈՒՌ ԹՈՒԽ<br>ՄԱՆՈՒԿ                                 | 15-16-րդ դդ.  | հս մասում    | S | Ավան թաղամասում, ավերված             |
| ՔԱՐԱՅՐ-ԿԱՅԱՐԱՆ  | 16-18-րդ դդ.  | 0,2 կմ հվ-աե | S | ձորահովտի աե կողմում                 |

Ներկայացված պատմամշակութային արժեքներից ոչ մեկը չի գտնվում ազդեցության գոտում և չի կարող ենթարկվել որևէ ազդեցության արևային կայանի կառուցման և շահագործման ընթացքում:

### 5.13. Բնության հուշարձաններ

Համաձայն կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշման՝ Գեղարքունիքի մարզում առկա են հետևյալ բնության հուշարձանները.

Աղյուսակ 15: ՀՀ Գեղարքունիքի մարզի բնության հուշարձանների ցանկը

#### Երկրաբանական

|   |  |
|---|--|
| Սևկատար» հրաբուխ                                | Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքից 20 կմ արլ   |
| «Աժդահակ» հրաբուխ                               | Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքից 25 կմ հվ-արմ  |
| «Անանուն» ծալքավորում                           | Գեղարքունիքի մարզ, Սևանա լճի հս-արլ ափին, երկաթուղուպաստառի հատվածում, Սևան քաղաքի մոտ 45 կմ հեռավորության վրա |
| Քարե ծով» քարացրոններ (չինգիլներ)               | Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ դեպի խարամային Քարհանք  |
| «Անանուն» հրաբխային արտահայտված շերտավորություն | Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ հվ, հրաբխային խարամների գործող քարհանքի մոտ                             |
| «Արմադան» հրաբուխ                               | Գեղարքունիքի մարզ, Մաղինա գյուղից 3.5 կմ արմ   |
| «Հայրավանք» բրածո ֆաունա                        | Գեղարքունիքի մարզ, Հայրավանք գյուղից 2-3 կմ հս-արլ   |
| «Թառ (Կարմիր Կատար) » հրաբուխ                   | Գեղարքունիքի մարզ, Գեղամա լեռնաշղթայի կենտրոնական-ջրբաժանային հատվածում, Աժդահակ                               |



|  |  |
|--|--|
|  | հրաբխից հարավ-արևմուտք, Աժդահակ հրաբխին միանում է Կամուրջ հրաբխով: |
|--|--|

**Ջրակրաբանական**

|                                   |   |
|-----------------------------------|---|
| «Սարանց» աղբյուր                  | Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքի Հացառատ թաղամասում, ծ.մ-ից 1937 մ բարձրության վրա |
| «Խաչերի» աղբյուր                  | Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքի արմ ծայրամասում                                   |
| «Անանուն» աղբյուր                 | Գեղարքունիքի մարզ, Ակունք գյուղի տարածքում, ծ.մ-ից 1980 մ բարձրության վրա         |
| «Անանուն» աղբյուր                 | Գեղարքունիքի մարզ, Լճավան գյուղի տարածքում, ծ.մ-ից 2045 մ բարձրության վրա         |
| «Անանուն» աղբյուր                 | Գեղարքունիքի մարզ, Կարճաղբյուր գյուղի հվ-արլ եզրին, ծ.մ-ից 1930 մ բարձրության վրա |
| «Վանքի աղբյուր» աղբյուրների խումբ | Գեղարքունիքի մարզ, Սարուխան գյուղի հվ ծայրամասում, ծ.մ-ից 1977 մ բարձրության վրա  |

**Ջրագրական**

|            |   |
|------------|---|
| «Ակնա» լիճ | Գեղարքունիքի մարզ, Ծաղկաշեն գյուղից 10 կմ արմ, Ակնասար լեռան լանջին |
|------------|---|

**Կենսաբանական**

|                        |                                       |
|------------------------|---------------------------------------|
| «Ենթալայան մարգագետին» | Գեղարքունիքի մարզ, Դրախտիկ գյուղի մոտ |
|------------------------|---------------------------------------|

Նշված պատմամշակութային և բնության հուշարձաններից ոչ մեկը չի գտնվում նախատեսվող գործունեության տարածքում:

**5.14. Սոցիալական և մշակութային ռեսուրսներ**

Ծրագրի առաջարկվող տարածքը գտնվում է Գեղարքունիքի մարզում:

**Գեղարքունիքի մարզ**

Տարածքը՝ 5351 կմ<sup>2</sup>;

Համայնքներ, 2023թ. տարեսկզբի դրությամբ՝ 5

([https://www.armstat.am/file/Map/MARZ\\_05.pdf](https://www.armstat.am/file/Map/MARZ_05.pdf)), խոշարացված համայնքներ՝ 5:

Քաղաքները՝ 5:

Գյուղեր՝ 93;

Բնակչության թվաքանակը 2023թ. տարեսկզբի դրությամբ՝ 228,7 հազ. մարդ:

Այդ թվում՝ քաղաքային – 65,9 հազ. մարդ;

գյուղական – 162,8 հազ. մարդ:

Գեղարքունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի արևելքում՝ շրջապատելով Սևանա լիճը: Այն հյուսիսից սահմանակից է Լոռու և



Տավուշի մարզերին, արևելքից պետական սահմանով՝ Ադրբեջանին, հարավ-արևմուտքից՝ Կոտայքի և Արարատի մարզերին, իսկ հարավից՝ Վայոց ձորի մարզին: Տարածքի մակերեսով Գեղարքունիքի մարզը ամենամեծն է ՀՀ-ում: Մարզի ամենաերկար ձգվածությունը հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք կազմում է 115 կմ, արևմուտքից արևելք՝ 85 կմ, ամենախոր իջվածքը Գետիկ գետի կիրճն է (1 325 մ), ամենաբարձր կետը՝ Աժդահակ լեռան գագաթը (3 598 մ): Մարզի տարածքում է գտնվում <Սևան> ազգային պարկը (կազմավորվել է 1978թ.): Այն զբաղեցնում է Սևանի միջլեռնային գոգավորության հատակը կազմող Սևանա լճի և դրա հատակից ազատված տարածքները: Մակերեսը կազմում է 147.3 հազ. հա, որից 22.6 հազ. հա-ը՝ առափնյա ցամաքային տարածքներ են:

2022թ.-ին մարզի տնտեսության հիմնական ոլորտների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն 2.6 %,
- գյուղատնտեսություն 11.7 %,
- շինարարություն 4.6 %,
- մանրածախ առևտուր 2.3 %,
- ծառայություններ 0.9 %:

Մարզի տնտեսության առաջատար ոլորտը գյուղատնտեսությունն է, հատկապես հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի և անասնաբուծական մթերքի արտադրությունները:

Մարզը հանդիսանում է ՀՀ-ում թարմ ձկան հիմնական մատակարարը: Վերջին տարիներին արձանագրվում է լճում ձկնային պաշարների ավելացման միտում ու արժեքավոր ձկնատեսակների պաշարների ավելացում:

Մարզի արդյունաբերության հիմնական ուղղությունը հանքագործական արդյունաբերությունն է: Կարևոր նշանակություն ունի նաև մշակող արդյունաբերությունը, որի մեջ մեծ տեսակարար կշիռ ունի սննդամթերքի արտադրությունը:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով: Մարզի տարածքով անցնում է Երևան-Սևան-Դիլիջան հանրապետական նշանակության մայրուղին:

Մարզկենտրոն Գավառը (2023թ. տարեսկզբին՝ 17.8 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 92 կմ հեռավորության վրա: Քաղաքի տնտեսության առաջատար ոլորտը և





բնակչության հիմնական զբաղվածության ուղղությունը՝ գյուղատնտեսությունն է:

Ճամբարակ քաղաքի (2023թ. տարեսկզբին՝ 5.5 հազ. բնակիչ) տնտեսության առաջատար ճյուղը և բնակչության հիմնական զբաղվածության ոլորտը գյուղատնտեսությունն է (Երևանից 119 կմ հեռավորության վրա): Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդի արդյունաբերությունը:

Աղյուսակ 16: Գեղարքունիքի մարզի հիմնական վիճակագրական տվյալները, 2016-2020թթ

|  | 2018      | 2019      | 2020      | 2021      | 2022     |
|--|-----------|-----------|-----------|-----------|----------|
| Մարզի մշտական բնակչության թվաքանակը հունվարի 1-ի դրությամբ, 1 000 մարդ       | 228.3     | 227.7     | 227.3     | 227.8     | 228.7    |
| այդ թվում՝ քաղաքային   | 67.0      | 66.6      | 66.2      | 65.9      | 65.9     |
| գյուղական  | 100.2     | 99.5      | 98.4      | 97.9      | 97.9     |
| Բնական աճի գործակիցը, 1 000 բնակչի հաշվով                                    | 4.1       | 3.9       | 0.5       | 2.3       | 4.8      |
| Համախառն ներքին արդյունք (շուկայական գներով), մլն. դրամ                      | 234 995.9 | 234 571.3 | 200 299.0 | 231 890.2 | ...      |
| Արդյունաբերական արտադրանքի ծավալը, մլն. դրամ                                 | 64 612.9  | 69 909.1  | 69 914.4  | 59 553.5  | 72 259.7 |
| Գյուղատնտեսության համախառն արտադրանքը, ընթացիկ գներով, մլրդ. դրամ            | 118.2     | 112.4     | 99.4      | 113.8     | 119.4    |
| Շինարարության ծավալը, ընթացիկ գներով մլն. դրամ                               | 15 506.4  | 22 694.6  | 20 596.5  | 25 821.3  | 27 472.9 |
| Ավտոմոբիլային տրանսպորտի ներհանրապետական բեռնաշրջանառությունը, մլն. տոննա-կմ | 28.4      | 4.5       | 6.8       | 6.1       | 5.6      |
| Ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորաշրջանառությունը, մլն. ուղևոր-կմ              | 27.9      | 26.4      | 9.8       | 16.1      | 20.5     |



|   |          |          |          |          |          |
|---|----------|----------|----------|----------|----------|
| Կապի ծառայությունների հասույթը, ընթացիկ գներով, մլն. դրամ   | 964.7    | 954.9 1  | 454.4 1  | 215.1 1  | 442.3    |
| Մանրածախ առևտրի շրջանառությունը, մլն. դրամ  | 27 366.6 | 28 468.5 | 30 028.6 | 37 224.6 | 38 841.3 |
| Ծառայությունների ծավալը, մլն. Դրամ  | 15 516.0 | 16 000.3 | 13 967.8 | 17 133.1 | 23 997.9 |
| Սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նկատմամբ, %   | 101.2    | 100.3    | 100.6    | 107.0    | 108.7    |
| Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի իրացման գների ինդեքսները նախորդ տարվա նկատմամբ, %   | 106.0    | 99.7     | 95.0     | 109.7    | 123.5    |
| Աշխատանքային ռեսուրսները, 1 000 մարդ  | ...      | 170,7    | 170,2    | 174,6    | 170,1    |
| որից՝ զբաղվածներ  | ...      | 68.7     | 71.7     | 77.6     | 84.5     |
| գործազուրկներ   | ...      | 6.5      | 7.7      | 4.7      | 6.1      |
| Միջին ամսական անվանական աշխատավարձը, դրամ   | ...      | 114 479  | 121 940  | 125 167  | 127 949  |
| Առևտրային կազմակերպությունների արտադրանքի, ապրանքների, ծառայությունների արտադրության և իրացման վրա կատարված ծախսերը, մլն.դրամ | 7 255.2  | 7 858.2  | 8 297.1  | 10 137.8 | 8 770.3  |
| Առողջության առաջնային պահպանման ծառայություն մատուցող հաստատությունների քանակը  | 40       | 40       | 40       | 40       | 40       |
| Գրանցված հանցագործությունների քանակը  | 903      | 1 066    | 1 035    | 1 250    | 1 339    |
| Կենսաթոշակառուների թվաքանակը տարեվերջին,  | 31 266   | 31 294   | 31 150   | 30 987   | 30 852   |



| մարդ  |        |        |        |        |       |
|---|--------|--------|--------|--------|-------|
| Նպաստառու ընտանիքների քանակը, դեկտեմբերի 31-ի դրությամբ | 11 900 | 10 928 | 10 964 | 10 211 | 9 129 |
| Նախադպրոցական հաստատությունների քանակը                  | 47     | 49     | 60     | 70     | 79    |
| Հանրակրթական դպրոցների քանակը                           | 126    | 125    | 124    | 124    | 124   |
| Պետական մասնագիտացված թատրոնների քանակը                 | 1      | 1      | 1      | 1      | 1     |
| Գործող թանգարանների քանակը                              | 2      | 2      | 2      | 2      | 2     |
| Գրադարանների քանակը                                     | 55     | 53     | 54     | 54     | 54    |
| Մարզական կազմակերպությունների քանակը                    | 8      | 8      | 8      | 8      | 8     |

### Վարդենիս համայնք

Վարդենիսը Հայաստան աշխարհի հնագույն բնակավայրերից է: Այնեղել է Մեծ Հայքի Սյունիք նահանգի Սոթք գավառի կազմում: 1930 թ կազմավորվել է Վարդենիսի շրջանը, որի վարչական կենտրոնը եղել է ավան Վարդենիսը, այժմ՝ քաղաք Վարդենիսը: Քաղաքի նախկին անվանումները՝ Վասակաշեն, Ոսկեշեն, իսկ 1969 թ-ից անվանվեց Վարդենիս: Վարդենիսի շրջանը գտնվում է Սևանի ավազանի հարավ արևելյան մասում՝ Սևանի, Արևելյան Սևանի և Վարդենիսի լեռնաշղթաների միջև: Տարածքում է Մասրիկի դաշտը: Ունի 1900-3522մ (Վարդենիսլեռ) բարձրություն: Գերակշռում է լեռնային մակերևույթը: Կանոսկու, շինանյութի, տորֆի հանքավայրեր: Տիրապետում են լեռնատափաստանային և լեռնամարգագետնային լանդշաֆտները: Տարածքով հոսում են Մասրիկ, Փամբակ, Դարա և այլ գետեր:

Վարդենիսի շրջանը գտնվում է Սևանի ավազանի հարավարևելյան մասում՝ Սևանի, Արևելյան Սևանի և Վարդենիսի լեռնաշղթաների միջև: Տարածքում է Մասրիկի դաշտը: Ունի 1900-3522մ (Վարդենիս լեռ) բարձրություն: Գերակշռում է լեռնային մակերևույթը: Կան ոսկու, շինանյութի, տորֆի հանքավայրեր: Տիրապետում են լեռնատափաստանային և լեռնամարգագետնային լանդշաֆտները: Տարածքով հոսում են Մասրիկ, Փամբակ, Դարա և այլ գետեր:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Մեծ Մասրիկ



բնակավայրում, որը Վարդենիս համայնքի գյուղերից մեկն է:

### Մեծ Մասրիկ

Բնակչության թիվը՝ 2612

Գյուղը տեղակայված է Վարդենիսից դեպի հյուսիս-արևելք, Երևանից 170 կմ արևելք, մարզկենտրոն Գավառ քաղաքից 75 կմ հարավ-արևելք, Սևանա լճից 10 կմ և Սոթքից 7 կմ հեռավորության վրա:

Մեծ Մասրիկը՝ հայկական իշխանանիստ-մելիքանիստ ավան էր: XIV-դարի վերջում, այստեղ հիմնվեց առաջին հայ մելիքությունը (իշխանությունը)՝ Սոթքի Մելիք-Շահնազարյանների իշխանական տոհմը: Գյուղում մինչ օրս պահպանվել է մելիքական հանգստարանը, մի շարք յուրօրինակ տոհմական խաչքարերով: Գյուղի հիմնական բնակիչները հայերն են:

## 6. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

### 6.1. Նախատեսվող գործունեության բնութագիրը

Նշված տարածքում նախատեսվում է կառուցել 5ՄՎտ հզորության արևային ֆոտովոլտային էլեկտրակայան: Հայցվող տարածքը տեղակայված է լինելու Սևանա լճից մոտ 8,6կմ հեռավորության վրա:

Նախատեսվող կայանը կառուցվելու է սեփականության իրավունքով «ՄԵԾ ՄԱՍՐԻԿ» ՍՊԸ պատկանող հողամասում, որը գտնվում է Մեծ Մասրիկ բնակավայրի վարչական տարածքում՝ 1-ին փողոց 12-րդ նրբանցք 2-րդ հողամաս: Տարածքը զբաղեցնելու է 6հա: Տարածքը մոտ է Մ14, ինչպես նաև Մ11 ավտոճանապարհներին:

### 6.2. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ

Նախատեսվում է կառուցել 5.100 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային կայան հետևյալ աշխարհագրական կոորդինատներով՝ հս. լայն. 40°13'25.11"N և արլ. երկայն. 45°44'52.98"E, ծովի մակերևույթից 1938մ բարձրության վրա: Ֆոտովոլտային կայանի զբաղեցրած մակերեսը 6.0 հա է:

Ֆոտովոլտային կայանի գեներատորային մասը նախատեսվում է կառուցել 8880 հատ բազմաբյուրեղային ֆոտովոլտային վահանակներով՝ յուրաքանչյուրը 630Վտ առավելագույն հզորությամբ, որոնք 11 հատ 350կՎտ և 5 հատ 250կՎտ ելքային հզորությամբ փոխակերպիչների փոփոխական հոսանքի էլուստներից մալուխներով միանում են ենթակայանի 0.8կՎ լարման գլխավոր ընդունիչ վահաններին: 350կՎտ և



250կՎտ հզորությամբ փոխակերպիչները միացվում են 22 և 26 հատ հաջորդաբար միացված ֆոտովոլտային պանելներով: Ֆոտովոլտային պանելների շղթաները միմյանց միացվում են պանելների մուտքին 4մմ2 (EU)/12AWG(US), L=1200մմ և PV1-F1x4մմ2 մալուխներով: Մոդուլների և փոխակերպիչների համար նախատեսված են MC4 տիպի կոնեկտորներ:


Շղթաների զուգահեռ միացումներն ապահովված է փոխակերպիչներում, յուրաքանչյուր 17, 23 և 24 շղթայի համար նախատեսված է առանձին փոխակերպիչ: Ընտրվել են JAM72D42-630/LB ֆիրմային արտադրության 22.5% ՕԳԳ-ով, IP 68 տիպի, 630Վտ առավելագույն հզորությամբ բազմաբյուրեղ ֆոտովոլտային մոդուլներ՝ ընդհանուր 8880 հատ, մեկ մոդուլի չափսերը՝ 2465x1134x30մմ: Փոխակերպիչները Ginlong արտադրության, մոդելը Solis-S6-GU350K-EHV և Solis-250K-EHV-5G, 350կՎտ և 250կՎտ ելքային հզորության, ցանցային տեսակի, Փոխակերպիչի հաստատուն հոսանքի " + " և " - " շղթաների մուտքերը պաշտպանված են 15Ա ապահովիչներով: Փոխակերպիչը ունեն համացանցին միանալու և տվյալները փոխանցելու հնարավորություն, նրանում ներկառուցված են DC և AC իմպուլսային գերլարրումների պաշտպանիչ սարքեր ( SPD): Յուրաքանչյուր փոխակերպիչից դեպի ՏԵ ցածր լարման վահաններ էլեկտրամատակարարումը իրականացվում է այլումենե հաղորդաջղերով պոլիվիլիբրոիդե մեկուսացմամբ, հարթ ժապավենով մետաղե զրահով, որի բարձիկներում պաշտպանիչ շերտի բացակայում է, արտաքին ծածկույթը պոլիվիլիբրոիդ նյութից АВЕ6IIIВ տիպի 3x120մմ2, 3x185մմ2 հատույթների մալուխազծերով:

Մալուխները խրամուղու մեջ տեղադրելուց առաջ փորված խրամուղու մեջ պատրաստվում է 100մմ հաստությամբ ավազե անկողին, այնուհետև տեղադրվում են մալուխները և ծածկվում 150մմ ավազե շերտով, որից հետո խրամուղին լցվում է ավազակոպչային խառնուրդով, այնքան որ հնարավոր լինի մալուխից 250մմ բարձրության վրա տեղադրել ազդանշանային ժապավեն, ապա խրամուղին լցվում է ավազակոպիճով: Մալուխները խրամուղում տեղադրվում են գետնից 0.7մ խորության վրա: Մալուխները տեղադրվում են օձաձև, ջերմային դեֆորմացիաներից խուսափելու համար: Մալուխների հատույթներն ընտրվել են ըստ թույլատրելի երկարատև հոսանքի (ԷՄՆԸՊ ՏԿ III գլուխ, կետ 8 աղ. 7), ստուգվել ըստ լարման անկման և լարման շեղման (համաձայն СП 256.1325800.2016 պահանջների 0.4կՎ ցանցերում լարման անկումը չպետք է գերազանցի 7.5%-ը, իսկ լարման շեղում՝  $\pm 5\%$  նորմալ ռեժիմում): Մալուխները կարճ միացման և գերբեռնվածության հոսանքներից պաշտպանվում են մուտքային եռաֆազ 250 Ա, 315 Ա ավտոմատ անջատիչներով: Բաց տարածքում տեղակայվող ավտոմատ անջատիչները IP 65 տիպի են, իսկ փակ տարածքում՝ IP 31 տիպի:



Արևաին ֆոտովոլտային կայանի կողմից արտադրված էլեկտրաէներգիայի, ներքին ցանցից դուրս, հաշվառման համար անհրաժեշտ է սահմանազատման տեղում տեղադրել երկկողմանի երկսակագնային էլ. հաշվիչով: Արևային ֆոտովոլտային կայանը 6կվ ցանցին միանում է 6300ԿՎԱ 35/2x0.8ԿՎ տրանսֆորմատորի միջոցով:

Պատկեր 10: ԾՎ կայանի սարքավորումների Pv վահանակների և DC մալուխների անցկացման հատակագիծ



Ներտարածքային լուսավորության համակարգ

Լուսավորության հաշվարկը իրականացվել է Dialux համակարգչային ծրագրով՝ 3D մոդելավորմամբ, համաձայն ՀՀՇՆ 22-03-2017 նորմերի: Հաշվարկի միջոցով ընտրվել է լուսավորության հենարանների բարձրությունը, միջհենարանային հեռավորությունը, լուսարձակների հզորությունը և թեքման անկյունը:

Dialux ծրագրով հաշվարկում օգտագործվել է 100լմ/վտ արդյունավետությամբ լուսարձակ: Լուսավորության ցանցը կառուցվում է 4մ բարձրության մետաղական բարձակներով հենարաններով (բարձրությունը սահմանափակված է հաշվի առնելով ստվերների առկայությունը ֆոտովոլտային վահանակների վրա):

Տեսահսկման համակարգ





Տեսահսկման համակարգը ապահովում է պահպանվող տարածքի շուրջօրյա տեսահսկում, ինֆորմացիայի գրանցում և արտացոլում պահակատան էկրանին:

Պաշտպանական հողանցում

Ֆոտովոլտային կայանի հողանցումն իրականացվել է համաձայն СНиП 3.05.06-96: Հողի մակերևույթին 0.6մ խորության վրա հավաքվում է հողանցման սարքվածքը (կոնտուրը), որը բաղկացած է.


- հողանցման հորիզոնական հաղորդիչից (40x4 շերտապողպատ),
- հողանցման հաղորդաձող (50x50x5, L=1.5մ անկյունակ),
- հողանցման հաղորդալարերից:

Հողանցման սարքվածքը իրականացվել է տեսական հաշվարկի հիման վրա: Հողանցման դիմադրությունը տարվա ցանկացած եղանակի չպետք է գերազանցի 4Օհմ: Լաբորատոր չափումներից հետո, եթե այն մեծ է նորմավորված դիմադրությունից անհրաժեշտ է խփել լրացուցիչ էլեկտրոդներ: Պաշտպանական հողանցումը իրականացվում է հողանցման հաղորդալարերով: Այդ նպատակով ֆոտովոլտային պանելների այլումինե իրանը հողանցման հաղորդալարով միացվում է հողանցման համակարգին: Բոլոր մետաղական ոչ հոսանքատար սարքավորումները պետք է հողանցվեն:

Ենթակայանի տարածքում նախատեսվում է հակահրդեհային, ծխի և ջերմաստիճանի տվիչներ:

Կայանի տարածքը ցանկապատված է 2մ բարձրությամբ մետաղացանցով:

*Պատկեր 11: 0.8ԿՎ լարման ստորգետնյա մալուխների տեղակայման հատակագիծ*



**Մալուխային գծեր**

Կատարվել է 10կՎ ստորգետնյա մալուխագծի կտրվածքի ընտրության հաշվարկ ըստ կարճ միացման հոսանքի և բեռի: Ելնելով հաշվարկի արդյունքներից բավարարում է АПВПγ 2x(3x150/25մմ²) կտրվածքի մալուխ: Էկրանի կտրվածքի ընտրությունն իրականացվել է ըստ ջերմային կայունության և ընտրվել է 25մմ² կտրվածքի էկրան: Մալուխի էկրանը անհրաժեշտ է հողանցել միացնելով ենթակայանների հողանցման եզրագծերին:

Մալուխագծի ընդհանուր երկարությունը 240մ է, որից խրամուղում 204մ, 16մ ՏԵ ում կանալով, 16մ հենարանի երկայնքով, 4մ կոնստրուկցիայով: Մալուխները դուրս գալով «Վարդենիս» 110/35/10 ենթակայանի 10կՎ ԲՄ-ից մոնտաժվում են գրունտային տարածքով մինչև N1 և N2 հենարաններ, որոնցից անցում են կատարում AC 70/11 օդային գծի, այնուհետև №88 և №89 հենարաններից AC 70/11 օդային գծերը դարձյալ անցում են մալուխային գծերի, հետո մոնտաժվում են գրունտային տարածքով մինչև պատվիրատուի կողմից նոր տեղադրվող ենթակայան: Գրունտային հատվածով անցկացնելիս մալուխները տեղադրվում են 1,1մ խորության վրա: Մալուխները խրամուղու մեջ տեղադրելուց առաջ փորված խրամուղու մեջ փռվում է 100մմ հաստության ավազե անկողին, այնուհետև տեղադրվում են մալուխները, վերջիններս



ծածկվում են ավագե շերտով: Ավագե անկողնու վրա տեղադրվում է կավե աղյուս մեխանիկական վնասվածքներից պաշտպանելու համար (համաձայն ԷԷՀ ՏԿ IV գլուխ 19.1 կետ), ապա խրամուղին լցվում է ավագակոպձով:

Աղյուսների դասավորությունը խրամուղիներում (կախված խրամուղու հիմքի չափերից) կատարվում է A5-92 տիպային նախագծի №A5-92-15 թերթ 1 գծագրի համաձայն: Նախագծում օգտագործվում է 10կՎ լարման ջերմանստեցվող միակցիչ և ծայրային կցորդիչներ:

Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ պետք է պահպանվեն ԷԷ ՀՏԿ-ի IV գլխի 19 կետում նշված մինիմալ թույլատրելի հեռավորությունը և մոտեցումները հողում տեղադրվող այլ մալուխներին և խողովակներին, որոնք պետք է լինեն ոչ պակաս, քան

- ուժային մալուխների միջև 0.1մ (19.4.ա կետ)
- մինչև շենքերի հիմքը 0.6մ (19.3 կետ)
- կապի մալուխների միջև 0.5մ (19.4.գ կետ)
- գազախողովակների միջև 1մ (19.6 կետ)


Նախագծում 10կՎ ՕԳ-ի կառուցման համար նախատեսվող հենարանները ընտրվել են ըստ 3.407-66/71 տիպային նախագծի (6-20կՎ բաց հաղորդալարով ՕԳ-ի երկշղթա հենարաններ), որոնք ներկայացված են: 10կՎ ՕԳ-ի համար ընտրվել են A 70/11 մմ2 տիպի հաղորդալարեր, ըստ պահանջվող հզորության:

Նախագծում նախատեսվող հենարանը ընտրվել են երկշղթա 2ՈՒ-2 միջանկյալ, 2ՄՈՒ-2 անկյունային միջանկյալ և 2ՄԱ-2 անկյունային խարսխային փայտե տիպի: Նախագծվող 10կՎ ՕԳ-ն սկիզբ է առնում №1 և №2 հենարաններից և մոնտաժվում են №3...№87 հենարաններին:

Գծային բաժանիչները ուղեգծի սպասարկման և օպերատիվ անջատումների համար տեղադրվում են №1, №2, №88, և №89 հենարաններին, որոնք հողակցվում են համաձայն 3.407-150 տիպարային նախագծի:

Հենարանների տեղաբաշխումը կատարված է հատակագծի վրա, ելնելով ընտրված հենարանների հաշվարկային հենամեջից և հաշվի առնելով կադաստրային քարտեզի հողաբաժանումները:

*Պատկեր 12: Վարդենիս Ե/Կ, ուղեգիծ*



6300կՎԱ հզորությամբ տրանսֆորմատորային ենթակայանի էլեկտրամատակարարում

Տրանսֆորմատորի 10կՎ ԲԼ կողմում տեղադրվում է լրակազմ բաշխիչ սարքավորում, իսկ ՑԼ կողմում տեղադրվում է օդային երկու անջատիչներ, որոնք միանում են երկու առանձին սեկցիաներին: Յուրաքանչյուր սեկցիային միանում են 10-ական ինվերտերներ, ինչպես նաև սեփական կարիքների համար նախատեսված ավտոմատները: Տրանսֆորմատորային ենթակայանի հողանցումը նախատեսվում է կատարել շերտապողպատից 40x4մ չափերով: Շանթարգելների հողանցման կոնտորը և սարքավորումների հողանցման կոնտուրները պետք է լինեն առանձին: Միացումները պետք է լինեն եռակցումով: Եռակցման կարերը պետք է լինեն հողի տակ՝ ծածկված բիտումային շերտով, իսկ վերգետնյա մասերում՝ ներկված: Հողանցման կոնտուրի դիմադրությունը պետք է լինի 2 Օհմ-ից ավելի փոքր, համաձայն էլեկտրասարքավորումների տեղադրման կանոնների: Ենթակայանի ներքին էլեկտրամատակարարման ցանցը նախատեսվում է իրականացնել 0.8կՎ լարման հավաքական դողերից: Լուսավորության համար նախատեսվում են լուսադիոդային լամպեր կետային տեղադրմամբ: Հաղորդալարերը պետք է լինեն պղնձյա և բազմաջիղ: Հաղորդալարերը պետք է անցկացնել մետաղական կամ ՊՎՔ տեսակի պաշտպանիչ խողովակների միջով:





Նախագծով ենթակայանում նախատեսվում է հրդեհի ինքնավար հայտնաբերման և ազդարարման համակարգի իրականացում: Հակահրդեհային համակարգի ինքնավար ազդասարքերը նախատեսված են հսկվող շինությունում հրդեհի հայտնաբերման և անձնակազմին ու համապատասխան ծառայություններին տեղեկացնելու համար: Նախատեսվում է տեղադրել ծխային ազդասարքեր: Ինքնավար ազդասարքերի տեսակն ու քանակն ընտրված է ըստ մակերեսի, շինության նշանակության և հրդեհավտանգության աստիճանի: Վերջինները տեղադրվում են պաշտպանվող շինության առաստաղին՝ ընդ որում այնպես, որ գտնվեն հեռու՝ լուսատուներից 0.5 մ, օդանցքներից 1 մ, իսկ առավելագույն հեռավորությունը պատերից՝ 4.5 մ, միմյանցից՝ 9 մ:

Այլ

Բոլոր հողային, բետոնային և շենքի շինությունների, կոնստրուկցիաների հիմքերի հետ կապված այլ աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել միայն կոմունիկացիոն ծառայություններ մատուցող բոլոր ընկերությունների (գազ, էլեկտրամատակարարում, ջրամատակարարում, կապ և կոյուղագծերի սպասարկում) ներկայացուցիչների ներկայությամբ և համաձայնությամբ՝ չվնասելու համար հնարավոր առկա որևէ ենթակառուցվածք: Հայտնի դարձած և ոչ հայտնի խողովակների ու այլ կոմունիկացիոն ցանցերի ճշգրիտ տեղերը որոշելու ու դրանք չվնասելու համար անհրաժեշտ է համապատասխան կոմունիկացիայի համար պատասխանատու անձանց ներկայությունը, ստորգետնյա բոլոր ենթակառուցվածքների մոտ տարածքներում աշխատանքների դեպքում անհրաժեշտ է ժամանակավորապես ազատել դրանց տվյալ հատվածի հողային շերտից:


Ցանկապատը հողանցումը իրականացվելու է 40x4մմ շերտապողպատի մրջոցով հողանցման կոնտուրին եռակցումով: Շինության հատակագծային լուծումները, նրա պարամետրերը (բարձրություն, մակերեսներ, սենյակների կազմ, կառուցապատման տոկոս) մշակված է համաձայն պատվիրատուի կոմից տրված առաջադրանքի:

Շինության կոնստրուկտիվ մասը նախատեսված է իրականացնել միաձույլ ե/բ կարկասով իսկ ծածկը գիպսե սովարաթղթով, պատերը իրականացնել կանոնավոր տեսքի տուֆի շարվածքով, միջնապատերը՝ պեմզաբլոկներով: Շենքի անկյունային հենասյունների ամրաններից ամրացվում է 1մ երկարությամբ 8մմ-անոց ամրան դեպի շինության հակառակ կողմը հողանցման կոնտուրին միացման նպատակով: Շինության տանիքը լանջավոր է, ջրահեռացումը կազմակերպված: ՓՊՄ-ի Ներսում և պահակակետի բոլոր սենքերում տեղադրել ծխի տվիչ: Հակահրդեհային միջոցառումների իրականացման համար նախատեսվում է տեղադրել ազդոնշանային համակարգ, և կրակամարիչ: Անհրաժեշտ է տանիքի բոլորը փայտի տարրերը մշակել հրակայուն լուծույթով:



Կայանի շահագործման ընթացքում վահանակների լվացումը իրականացվելու է տեղավորողովի ջրի տարաների կիրառությամբ՝ մեխանիկական եղանակով: Լվացման և մաքրման աշխատանքները իրականացվելու են երկուսից-երեք տարին մեկ անգամ, չոր եղանակային պայմաններում:

Պատկեր 13: Մալուխային խրամուղիների կոնստրուկցիաների հատակագիծ




### 6.3. Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակացույցը.

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է ըստ նախատեսված ժամանակացույցի՝ հերթականությամբ.

Պատկեր 14: Նախատեսվող գործունեության ժամանակացույցը





## 7. ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի այլընտրանքային տարբերակները դիտարկվում են երկու առումով:

### 7.1. «Ոչ մի գործողություն» այլընտրանքային տարբերակ

«Ոչ մի գործողություն» այլընտրանքային տարբերակը վերաբերում է այն իրավիճակին, երբ ՖՎ կայաններ չեն կառուցվում: Ոչ մի գործողություն այլընտրանքային տարբերակը կհանգեցնի էլեկտրաէներգիայի առաջարկը գերազանցող պահանջարկին՝ հետագա տարիներին աճող պահանջարկին զուգահեռ առաջացող դեֆիցիտի աճով:

Անվտանգ և հուսալի էլեկտրաէներգիայի արտադրության բացակայությունը՝ գալի սոցիալական և տնտեսական հետևանքներ ունի, քանի որ հետագայում այն.

- կխոչընդոտի ներկայիս և ապագա տնտեսական զարգացումը և ներդրումները՝ էներգառեսուրսների արդյունաբերական պահանջարկը չբավարարելու պատճառով,
- կսահմանափակի սոցիալ-տնտեսական զարգացումը՝ էլեկտրաէներգիայի անբավարար մատակարարման կամ ներքին օգտագործողների, համայնքների և այլ հասարակական կառույցների և հանրային ծառայությունների



- Էներգամատակարարման հուսալիության ցածր մակարդակի և անբավարարության պատճառով,
- կխոչընդոտի սոցիալական ծառայությունների մատուցումը՝ ներառյալ հանրային առողջությունը և աղքատության վերացումը:

Արդյունքում, <<Ոչ մի գործողություն>> տարբերակը՝ չի համարվում կենսունակ կամ ընդունելի այլընտրանքային տարբերակ առաջարկվող ծրագրին:

## 7.2. Ծրագրի առավելությունները

Ծրագիրը նպատակ ունի օգնել Հայաստանում մաքուր էներգիայի ենթակառուցվածքների զարգացմանը՝ որպես Հայաստանի համար ցածր ածխածնային ապագայի ձգտման մաս: Ծրագիրը կլիթանի նոր արդյունաբերություններ, կստեղծի ուղղակի և անուղղակի աշխատատեղեր և այլ ներդրումների ուշադրությունը կգրավի երկրում վերականգնվող էներգիայի ոլորտի վրա: Պլանավորված Ծրագիրը նախատեսված է հասնելու հետևյալին.

- բավարարել էլեկտրաէներգիայի ապագա պահանջարկը;
- պահպանել և բարելավել արտադրության հուսալիությունը;
- ներդնել էկոլոգիապես մաքուր նոր տեխնոլոգիաներ;
- մասնակցություն համայնքի սոցիալական զարգացման ծրագրերում:  
Սոցիալական ներդրումային ծրագրերն իրականացվելու են ազդակիր համայնքի համար լրացուցիչ սոցիալական և տնտեսական արժեք ստեղծելու համար:

Ավելին, շինարարական աշխատանքները կիրականացվեն համայնքի անվտանգության և բարեկեցության համար առավելագույն հոգատարությամբ և հնարավորության դեպքում տեղական աշխատուժի ներգրավմամբ:

## 8. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ

### 8.1. Ջուր.

Շինարարական փուլի ընթացքում տեխնիկական ջրի պահանջը կբավարարվի ավտոցիստեռնի միջոցով՝ համայնքապետարանի կամ Վեոլիա ջուր ընկերության հետ նախորոք պայմանավորվածության պարագայում, իսկ խմելու ջուրը կմատակարարվի տարաներով՝ առևտրային հիմունքներով: Ջուրը շինհրապարակում կպահվի հատուկ տարողություններում:

#### Ջրի ծախսը խմելու և տնտեսական կարիքների համար

Ջրի հաշվարկային ծախսերը որոշվում են համաձայն СНиП 2.04.01-25 "Внутренний водопровод и канализация зданий", նորմերի:



Մեկ բանվորի ջրօգտագործման նորմը՝ - 25 լիտր  
Օրական, մեկ վարչական աշխատողին – 16 լիտր  
Շինարարական աշխատանքային ռեժիմը – 11 ամիս, 22 օր/ամիս, օրը 8 ժամ/օր:  
Աշխատողների խմելու և կենցաղային պահանջների համար ջրածախսը կազմում է.

$$W_{\text{խ.տ.}} = n \times N \times T_1 + n_1 \times N_1 \times T_2, \text{ որտեղ}$$

$n$  – Ինժեներատեխնիկական /ԻՏ/ աշխատողների թվաքանակն է՝ 4 մարդ  
 $N$ – ԻՏ աշխատողների ջրածախսի նորմատիվն է, 0.016 մ<sup>3</sup>օր/մարդ  
 $T_1$  – ԻՏ աշխատողների աշխատանքային օրերի ընդհանուր թիվը- 244,  
 $n_1$ –բանվորների թվաքանակն է (օրական)- 12 մարդ,  
 $N_1$  - բանվորների ջրածախսի նորմատիվն է - 0.025 մ<sup>3</sup>օր/մարդ,  
 $T_2$  - աշխատանքային օրերի թիվն է - 264.

$$W_{\text{խ.տ.}} = 4 \times 0.016 \text{ մ}^3 \times 264 + 12 \times 0.025 \text{ մ}^3 \times 244 = 88.8 \text{ մ}^3/\text{շին}, 0.364\text{մ}^3/\text{օր:}$$

Ջրի ծախսը տրանսպորտային միջոցների անիվների լվացման համար

Շինարարության փուլում մեքենաների անիվների լվացումը կատարվում է փրփրային եղանակով, առանց ջրի օգտագործման և առանց արտահոսքի առաջացման:

Ջրի ծախսը փոշեառաջացման օջախների ջրցանի համար

Այդ ծախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$V_1 = S \times K \times T,$$

Որտեղ՝  $S$  – շինհրապարակի թրջվող մակերեսն է, 1800 մ<sup>2</sup>,

$K$  - ջրցանման նորման – 0.0005մ<sup>3</sup>/1մ<sup>2</sup>

$T$  – ջրցանի /տաք և չոր եղանակի/ օրերը, 126 օր

Այսպիսով՝

$$V_1 = 1800 \times 0.0015 \times 126 = 340.2 \text{ մ}^3/\text{շին.ժամ:}$$

Միջին օրեկանը կազմում է 2.7 մ<sup>3</sup>:

Շահագործման փուլում ջրցան չի նախատեսվում:

## 8.2. Օգտագործվող նյութեր,

Շինարարության համար նախատեսված նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններից:

Գործունեության իրականացման ընթացքում օգտագործվելու են հետևյալ նյութերը.

- մալուխ,
- մետաղ՝ ալյումին, պողպատ,
- ներկ,
- մեկուսիչ նյութեր
- բետոն,



- խիճ,
- փայտանյութ:

Հաղորդալարերը լինելու են պողպատ-ալյումինե: Հենասյուների հիմքերի ամրացման և ենթակայանի կառուցման համար օգտագործվելու է բետոնանյութ, որը բերվելու է պատրաստի վիճակում՝ մասնագիտական կազմակերպություններից՝ պայմանագրային հիմունքներով: Բետոնն օգտագործվելու է հիմնականում արևակայանում մետաղական կոնստրուկցիայի հիմքերի բետոնացման աշխատանքների, հենասյուների, ցանկապատի, լուսավորության վահանակների տեղադրման, պահակակետի, ենթակայանի կառուցման ժամանակ:

Շինարարության համար նախատեսված նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններից: Տարածքում շինանյութերի և վառելիքի պահեստավորում չի նախատեսվում: Անհրաժեշտ շինանյութերը գործունեության վայր են բերվելու ըստ տեսակների և անհրաժեշտության, տեղադրվելու են տակդիրների վրա:

Շինարարության ընթացքում բացառվելու են ՀՀ կառավարության 2002թ. հունվարի 24-ի «Սևանա լճի վրա բացասական ազդեցություն ունեցող նյութերի, կենսաձին տարրերի, ծանր մետաղների կամ դրանց միացությունների և այլ նյութերի ցանկը հաստատելու մասին» N 57 որոշմամբ ամրագրված նյութերի օգտագործումը:

## 9. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

### 9.1. Շինարարական փուլի ազդեցությունը և մեղմող միջոցառումները

#### 9.1.1. Օդային ավազան.

Արևային կայանի շինարարության ընթացքում կառաջանան մի շարք նյութերի արտանետումներ: Հիմնական արտանետումը՝ փոշին, կառաջանա հողի փորման, բեռնման և տեղափոխման ընթացքում: Շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ կառաջանան նաև դիզվառելիքի այրման արգասիքներ՝ ազոտի, ծծմբի և ածխածնի օքսիդներ, պինդ մասնիկներ:

#### ա) Փորման-բեռնման աշխատանքների ժամանակ փոշու արտանետումները

Փորման-բեռնման աշխատանքների ժամանակ փոշու արտանետումների հաշվարկը կատարվել է ըստ «ВРЕМЕННОЕ МЕТОДИЧЕСКОЕ ПОСОБИЕ ПО РАСЧЕТУ ВЫБРОСОВ ОТ НЕОРГАНИЗОВАННЫХ ИСТОЧНИКОВ В ПРОМЫШЛЕННОСТИ СТРОИТЕЛЬНЫХ МАТЕРИАЛОВ», Минпромстрой СССР, 1987:



$Q_1 = (P_1 \times P_2 \times P_3 \times P_4 \times P_5 \times G \times 10^6 \times B \times P_6) / 3600$  տ/ժամ (քանաձև 1), որտեղ

$P_1$  - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է գրունտերում, 0.05

$P_2$  - 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում,  
0.02

$P_3$  - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի  
գոտում քամու միջին արագությունը, 1.0

$P_4$  - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.4

$P_5$  - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.4

$P_6$  - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0

$B$  - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը, 0.6

$G$  – հանվող գրունտի և հողի քանակը՝ 1 000 մ<sup>3</sup> կամ 2 600 տ:

Շինարարական աշխատանքները իրականացվելու են 11 ամսվա ընթացքում՝  
սակայն հողային աշխատանքները 1 ամիս:

$G = 2 600$  տ : 30 օր/տարի : 8 ժամ/օր = 10,83 տ/ժամ:

$Q_1 = (0.05 \times 0.02 \times 1.0 \times 0.4 \times 0.4 \times 10,83 \times 10^6 \times 0.6 \times 1.0) / 3 600 = 0,29$  գ /վրկ:

Արտանետումների քանակը շինարարական աշխատանքների արդյունքում  
կկազմի՝

$0,29$  գ/վրկ  $\times$  30 օր  $\times$  8 ժամ  $\times$  3 600 վրկ/ժամ : 1 000 000 գ/տ = 0,250 տ:

Վնասակար նյութերի արտանետումներ են սպասվում նաև շինարարական և  
տրանսպորտային միջոցների շահագործման ժամանակ, վառելիքի այրման ընթացքում:

#### Վառելանյութի օգտագործումը

Վառելանյութը կարող է օգտագործվել մեքենաների և բեռնատարների  
շահագործման, ըստ շինարարական գործունեության պահանջի: Հիմնականում  
օգտագործվելու է դիզելային վառելիք:

Մեքենաների և բեռնատարների վառելիքի ծախսը կարող է տարբերվել, կախված  
մեքենայի տեսակից, տատանվելով 40 - 60 լ/օր սահմաններում:

Վառելանյութի պահպանման համար պետք է հատկացվի հատուկ տարածք:  
Տարածքը պետք է ունենա բետոնե հարթակ և արտահոսքերի հավաքման համակարգ:

Ներկայացված տարածքը օգտագործվելու է շինարարության փուլի ընթացքում՝  
որպես ժամանակավոր կառույց:

#### բ) Դիզելային վառելիքի այրման արգասիքները

Դիզ.վառելիքի հետ կապված արտանետումները հաշվարկվում են  
«Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակների  
որոշման» մեթոդական հրահանգի հիման վրա:

Ըստ նշված մեթոդակարգի ծանր ավտոտրանսպորտի և տեխնիկայի  
տեսակարար արտանետումները բերված են ստորև աղյուսակ 17-ում:



Աղյուսակ 17: Տեսակարար արտանետումներ (գ/կգ վառելիք)

| Վառելիքի տեսակը   | Նյութի անվանումը |       |      |      |                  |                 |     |
|-------------------|------------------|-------|------|------|------------------|-----------------|-----|
|                   | NO <sub>x</sub>  | CH    | ՑՕՄ  | CO   | N <sub>2</sub> O | CO <sub>2</sub> | ՊՄ  |
| Դիզելային վառելիք | 42.3             | 0.243 | 8.16 | 36.4 | 0.122            | 3138            | 4.3 |

Հաշվի առնելով, որ տարածքում աշխատելու են նոր գնված տեխնիկական միջոցներ, պարկի տարիքի հետ կապված գործակիցները չեն կիրառվում:

Համաձայն նախագծային գնահատման աշխատանքների ժամանակ դիզելային տարեկան ծախսը շինարարության ամբողջ ընթացքում կկազմի՝ 6,0 տ:

Վառելիքի այրման ընթացքում առաջացող վնասակար նյութերի արտանետումները բերված են աղյուսակ 18-ում, որում միավորվել են ածխաջրածինները, ազոտի օքսիդները:

Աղյուսակ 18: Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակը

| Ավտոմեքենայի կատեգորիան           | Վնասակար նյութը | Տեսակարար արտանետումները, գ/կգ | Արտանետումները, գ/վրկ | Արտանետումները, տ/շին.ժամ |
|-----------------------------------|-----------------|--------------------------------|-----------------------|---------------------------|
| Մեծ բեռնունակության ավտոտրանսպորտ | CO              | 36.4                           | 0,029                 | 0,218                     |
|                                   | Ածխաջրածիններ   | 8.403                          | 0,007                 | 0,050                     |
|                                   | NO <sub>x</sub> | 42.422                         | 0,033                 | 0,254                     |
|                                   | Մուր            | 4.3                            | 0,003                 | 0,026                     |

**Ծծմբային անհիդրիդ**

Ծծմբային անհիդրիդի (SO<sub>2</sub>) արտանետումները հաշվարկվում են էլնելով այն մոտեցումից, որ վառելիքում պարունակվող ամբողջ ծծումբը լիովին վերածվում է SO<sub>2</sub>-ի: Այդ դեպքում կիրառվում է CORINAIR գույքագրման համակարգի բանաձևը.

$$ESO_2 = 2Σksb, \text{ որտեղ՝}$$

ks-ը վառելիքում ծծմբի միջին պարունակությունն է՝ 0.002 տ/տ

b –ն վառելիքի ծախսն է՝ 6,0 տ/շին.ժամանակ:

$$SO_2 = 2 \times 6,0 \times 0.002 = 0.024 \text{ տ/տարի կամ } 0.003 \text{ գ/վրկ:}$$

Ընդամենը շինարարական փուլում առաջացող արտանետումների քանակները բերված են աղյուսակ 19-ում:

Աղյուսակ 19: Շինարարության փուլի արտանետումները

| N | Արտանետվող նյութի անվանումը | Արտանետումը, տ/շին.ժամ |
|---|-----------------------------|------------------------|
| 1 | Անօրգանական փոշի            | 0,250                  |
| 2 | Ածխածնի օքսիդ               | 0,218                  |
| 3 | Ածխաջրածաններ               | 0,050                  |
| 4 | Ազոտի երկօքսիդ              | 0,254                  |
| 5 | Մուր                        | 0,026                  |





|   |                   |       |
|---|-------------------|-------|
| 6 | Ծծմբային անհիդրիդ | 0,024 |
|---|-------------------|-------|

Շնորհիվ շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթի, օդի աղտոտման մակարդակը գնահատվում է որպես ցածր: Ազդեցությունը ավելի նվազեցնելու նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի և հանվող գրունտի ջրցան, շինարարական տեխնիկան և ավտոմեքենաները պարբերաբար կստուգվեն և շարժիչները կկարգաբերվեն:

### 9.1.2. Ջրային ավազան

Շինարարության ընթացքում առաջացած կենցաղային և արտադրական հոսքաջերի հեռացման համար կտեղադրվեն շարժական բիոզուգարաններ՝ լվացարանով: Բիոզուգարանների մաքրումը կկատարվի մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվելու է միայն աշխատողների խմելու նպատակների համար: Քանի որ տեղում կենցաղային հարմարություններ չեն նախատեսվում, աշխատողների կացությունը կազմակերպվելու է հարակից համայնքներում, յուրաքանչյուր օր անձնակազմը վերադառնալու է կացության վայր, որտեղ էլ կապահովվի բոլոր անհրաժեշտ սանիտարա-հիգիենիկ պայմանները:

### 9.1.3. Թափոնների կառավարում

Նախատեսվող շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում, տարածքում առաջացող երկու տեսակի թափոնները կարող են բացասաբար անդրադառնալ շրջակա միջավայրի վրա:

Շինարարական աշխատանքների ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածակագիրը՝ 9120040001004/, որը կհավաքվի աղբամաններում, և շինարարական աղբը /ծածակագիրը՝ 9120060101004/, կհավաքվի համապատասխան կոնտեյներներում: Շինարարական թափոնները և կենցաղային աղբը ամբողջությամբ կանոնավոր կերպով կտեղափոխվի համայնքի կողմից հատկացված աղբավայր:

Ըստ նախնական գնահատման կենցաղային աղբի տարեկան քանակը կկազմի՝ 5 – 6 մ<sup>3</sup>, շինարարական թափոնները՝ 65 – 70 մ<sup>3</sup>:

Շինարարական աղբը կհավաքվի հատուկ տարածքում և կտեղափոխվի համայնքի կողմից հատկացված վայր: Կոմունալ կենցաղային թափոնները կուտակվելու են աղմինիստրատիվ շենքին կից նախատեսված աղբամաններում, որից հետո համայնքային կոմունալ ծառայությունը կիրականացնի թափոնի տարածքից



հեռացում դեպի համայնքային աղբատեղի:

Հաշվի առնելով տարածքի զգայուն էկոհամակարգը, շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտի բոլոր սպասարկման աշխատանքները, քսայուղերով և վառելիքով լիցքավորումը կիրկանացվի մասնագիտացված կայաններում, ինչը թույլ կտա բացառել վտանգավոր թափոնների առաջացումը:

Քանի որ, շինարարական տեխնիկան և ավտոտրանսպորտը կսպասարկվեն ավտոսպասարկման կայաններում, այլ թափոնատեսակներ արևային կայանի տարածքում չեն առաջանա: Այնուամենայնիվ, ֆորս-մաժորային իրավիճակներում հնարավոր արտահոսքերից խուսափելու համար բոլոր տեսակի յուղերը և քսայուղերը (կոմպրեսորային յուղ, արդյունաբերական յուղ և այլն) հավաքվելու և պահպանվելու են արևային կայանի տարածքում առանձնացված փակ սենյակում և տրամադրվելու են լիցենզավորված կազմակերպության՝ հետագա միջոցառումների իրականացման համար: Տեղափոխությունը ևս կիրականացվի լիցենզավորված կազմակերպության կողմից:

Արևային կայանի շահագործման փուլում կարող են առաջանալ ֆոտովոլտային վահանակների թափոններ /կորցրել են իրենց սպառողական հատկություններ/:

Իրենց սպառողական հատկությունները կորցրած վահանակները կհավաքվեն անային կայանի հատուկ հատկացված տեղամասերում և կպահվեն մինչև ՀՀ-ում կհիմնվեն նման թափոնները վերամշակող կազմակերպություններ:

Իրենց սպառողական հատկությունները կորցրած վահանակներ տարեկան քանակները այս փուլում հնարավոր չէ հաշվարկել, քանի որ դա կախված է ինչպես վահանակների որակից, այնպես էլ բնակլիմայական պայմաններից:

Ֆոտովոլտային վահանակների մակերեսը մաքրելու համար նախատեսվում է օգտագործել փափուկ գործվածքներով պատրաստված լաթեր, այնուհետև վահանակները լվանալ ջրով: Մաքրելուց և լվանալուց հետո վահանակներն անհրաժեշտ է չորացնել, օգտագործելով գործվածքային կամ ռետինե քամիչներ:

#### **9.1.4. Հողային ռեսուրսներ**

Հողային աշխատանքներ իրականացվելու են սկզբնական փուլում և կարճ ժամանակահատվածում:

Նախատեսվող գործունեության տարածքում հողային ծածկույթի վրա բացասական ազդեցություններ չեն նախատեսվում:



### 9.1.5. Կենսաբազմազանություն

Կենսաբազմազանության ուսումնասիրությունները իրականացվել են երկու փուլով.

#### Գրասենյակային աշխատանքների փուլ

Գրասենյակային փուլում ուսումնասիրվում է տարածաշրջանի կենսաբազմազանության վերաբերյալ առկա հրատարակված նյութերը, օրենսդրական դաշտը, կազմվում են բնորոշ բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների ցուցակները, ճշտվում է նրանց կենսամիջավայրի, կենսակերպի առանձնահատկությունները, ճշտվում է բուսատեսակների և կենդանատեսակների արտաքին նկարագրությունը: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքում ընդգրկված բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչներին, բնաշխարհիկ (էնդեմիկ): Ուսումնասիրության համար հարուստ նյութ կարող են տալ քարտեզագրական նյութերը և տիեզերական լուսանկարները:

#### Դաշտային հետազոտության փուլ

Դաշտային հետազոտությունը կատարվում են երկրահետազոտության դասական եղանակով: Հետազոտվող տարածաշրջանը մասնատվում է ըստ հիմնական բիոտոպերի՝ հաշվի առնելով տեղանքի ռելիեֆը և լանդշաֆտը՝ ներառելով միկրոռելիեֆի ողջ բազմազանությունը: Հետազոտության ընթացքում գրանցվում և լուսանկարվում են հանդիպող բուսատեսակները և կենդանատեսակները: Եթե դաշտային պայմաններում հնարավոր չէ որոշել բուսատեսակը, ապա վերցվում է բուսատեսակի ամբողջական կամ բույսից առանձին նմուշներ՝ լաբորատոր պայմաններում այն ուսումնասիրելու նպատակով: Աշխատանոցային պայմաններում բույսերի տեսակները որոշվում են “Հայաստանի ֆլորայի” 11 հատորյակի միջոցով (1954-2010 թթ.), օգտագործում է մասնագիտական այլ գրականություն:

Կենդանական աշխարհի ուսումնասիրությունը կատարվում է բուսական աշխարհին զուգահեռ՝ ըստ բիոտոպերի: Թռչունները սովորաբար դիտարկվում են հեռադիտակով և տեղում համեմատվում թռչունների դաշտային ուղեցույցի տվյալների հետ (Մարտին Ս: Ադամյան, Դանիել Քլեմ Կրտսեր „Հայաստանի թռչունները“, դաշտային ուղեցույց, ISBN: 0-9657429-5-4): Բացառիկ դեպքերում տեղադրվում են թակարդներ, կազմակերպվում են դարաններ կամ գիշերային դիտարկում: Դաշտային աշխատանքների ժամանակ հավաքվում են նաև տեղեկություններ տարածաշրջանի բնակչությունից:

Հազվագյուտ և անհետացող տեսակների կարգավիճակը ճշտվում է ըստ Հայաստանի բույսերի և կենդանիների Կարմիր գրքերի և Բնության և նրա ռեսուրսների



պահպանության Միջազգային միության հանձնաժողովի կողմից մշակված չափանիշներին:

Նախատեսվող գործունեության տարածքում շինարարական աշխատանքների ընթացքում որոշակի բացասական ազդեցության կենթարկվի տեղամասի բուսական ծածկույթը և կենդանական աշխարհը:

Ազդեցությունը իրականում չնչին է լինելու, քանի որ տարածքը շատ փոքր է որպեսզի զգալի ազդեցություն լինի տարածաշրջանի կենդանական աշխարհի վրա: Բուսական աշխարհին հասցվող հավանական վնասը ևս չնչին է լինելու քանզի տարածքը աղքատ է բուսական աշխարհով:

Ըստ բուսաբանական հետազոտությունների, արևային կայանի կառուցման համար նախատեսված տարածքներում գտնվող բուսատեսակներն ընդգրկված չեն ՀՀ Կարմիր Գրքում:

Պայմանավորված կենդանիների շարժունակությամբ, կենդանական աշխարհի ներկայացուցիչները համեմատաբար պակաս ազդեցության կենթարկվեն:

Շինարարության ընթացքում՝ տեխնիկական միջոցների աղմուկի մակարդակի ավելացման պատճառով որոշ տեսակներ հնարավոր է հեռանան այդ տարածքներից, սակայն դա կունենա ժամանակավոր բնույթ, հետագայում հնարավոր է վերադառնան իրենց նախկին տարածքները:

#### **9.1.6. Պատմամշակութային հուշարձաններ**

Տեղանքի արտաքին զգնման ընթացքում որևէ իր կամ կույտ կամ անհասկանալի վայր չի հայտնաբերվել:

Այնուամենայնիվ, շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու են և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմինն (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար:

#### **9.1.7. Էկոլոգիապես զգայուն տարածքներ**

Գործունեության վայրը չի առնչվում վայրի բնության կամ այլ արգելոցի, ազգային պարկի, զբոսայգու կամ միջազգային նշանակության այլ տարածքների հետ, ուստի, թե՛



շինարարության և թե՛ շահագործման փուլում որևէ ազդեցություն չի կանխատեսվում:

### 9.1.8. Արտակարգ իրավիճակներ.

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված.

- բնական աղետների (երկրաշարժ, սողանք, ջրհեղեղ և այլն) և անբարենպաստ օդերևութաբանական պայմանների փոփոխության (քամու ուժեղացում, փոթորիկ),
- հրդեհների առաջացման,
- հեղուկ նյութերի արտահոսքի,
- աշխատողների վնասվածքների և շահագործվող տեխնիկայի վթարների հետ:

Արևային կայանի կառուցման ենթակա տարածքում ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներն՝ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ, տվյալ տարածքում բացակայում են:

Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը և հեռավորությունը բնակավայրերից, շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կլինեն շատ ցածր: Արտակարգ իրավիճակների ռիսկերը նվազեցնելու նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

### 9.1.9. Աղմուկ և թրթռում

Ներկայացվող տեղանքում աղմուկի և տատանումների մակարդակը ցածր է, քանի որ բացակայում են աղմուկ առաջացնող արտադրությունները:

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 Սանիտարական նորմերը հաստատելու մասին N 138 և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «Պաշտպատություն աղմուկից» Շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 Հրամանում փոփոխություն կատարելու մասին N79-Ն հրամանների պահանջներին համապատասխան:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում



աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն):

Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A):

Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ:

Նախատեսվող գործունեության տարածքը բնակավայրերից գտնվում է մեծ հեռավորության վրա, ուստի աղմուկի մակարդակը չի կարող ազդեցություն ունենալ բնակչության վրա: Արևային էլեկտրակայանի շինարարության ընթացքում բնակավայրերին կամ առանձին բնակելի տներին, աղմուկը չի կարող հասնել, հաշվի առնելով բնակավայրերից ունեցած հեռավորությունը՝ Մեծ Մասրիկից՝ 1կմ Փոքր Մասրիկ բնակավայրից՝ 3,3կմ, իսկ Վարդենիս բնակավայրից՝ 3,6կմ:

Միաժամանակ համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը գործունեության և շինհրապարակին հարակից տարածքներում շատ ցածր կլինի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերից:

**9.1.10. Սոցիալական ազդեցությունների մեղմացումը շինարարության փուլում**

Շրջակա տարածքների և գործունեության ազդեցության ենթակա մոտակա հանրային միջավայրի վրա բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված են շինարարական աշխատանքների իրականացմամբ, կրում են ժամանակավոր բնույթ և ունեն կարճատև ազդեցություններ: Այդ ազդեցությունները կարող են կանխվել կամ նվազեցվել բնապահպանական կառավարման պլանով (ԲԿՊ) նախատեսված՝ սոցիալական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների և բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացման արդյունքում, որին պարտավոր են հետևել՝ շինարարը, հսկող և վերահսկող մարմինները:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա տարածքների և սոցիալական միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների կանխման կամ մեղմացման միջոցառումներն ըստ ազդեցության ուղղությունների ներկայացվում են ստորև:

**Սոցիալական միջոցառումներ**

Շինարարության փուլում հնարավոր սոցիալական ազդեցություններից





խուսափելու նպատակով նախատեսվում է՝

- թույլ չտալ շինարարական աշխատանքների կատարումը սահմանված ժամերից դուրս,
- վտանգավոր տեղամասերում տեղադրել նախազգուշացնող նշաններ,
- որակավորված աշխատակիցների միջոցով իրականացնել սարքավորումների պարբերական զննումներ շինարարների համար՝ անվտանգության առդիտների, առաջին օգնության և անվտանգության դասընթացների պարբերաբար կազմակերպելում և իրականացում:

### 9.1.11. Աշխատանքի անվտանգություն և առողջություն

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները ներառում են.

- Աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար նշանակել պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում:
- Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար՝ ցանկապատում, պահակակետեր, ցուցանակներ, արգելող պաստառներ այլ:
- Ապահովել շինհրապարակում աշխատողների համար հանգստի պայմաններ և կենցաղային պայմաններ /լվացարան, զուգարան/:
- Անհրաժեշտ է ապահովել կրակմարիչի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակի բոլոր մեքենաներում և հատվածներում:
- Անհրաժեշտ է ապահովել առաջին բուժօգնության դեղատուփի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակում:
- Անձնակազմը պետք է ապահովվի համապատասխան արտահագուստով և անհատական պաշտպանական միջոցներով:
- Աշխատողներին անհրաժեշտ է տրամադրել կոնկրետ աշխատանքի անվտանգության հրահանգավորում՝ աշխատանքը սկսելուց առաջ: Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել գրանցամատյանում:
- Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)
- Խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը շխատանքներն իրականացնել այնպես, որ նվազագույնի հասցվի ազդեցությունը հարևան հանգստացողների և շրջակա տարածքների վրա:
- Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները, համայնքը և բնակիչները պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ:



Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները շինարարության փուլում կիրականացվեն կապալառուի կողմից՝ համաձայն ԲԿՊ-ում նկարագրված միջոցառումների:

**9.1.12. Հակահրդեհային միջոցառումներ**

Շինարարական աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է՝

- մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,
- հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,
- շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

Շինարարական աշխատանքների ընթացքում կարևորվում է ղեկավարվել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

**9.1.13. Բարեկարգում և կանաչապատում**

Բնապահպանական միջոցառումների նպատակն է նվազեցնել գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և վերականգնել բոլոր այն տեղամասերի նախնական վիճակը, որոնք կենթարկվեն գործունեության ազդեցության:

Կառուցապատման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը բարեկարգել:

Գործունեության իրականացման ընթացքում ծառաթփային բուսականություն չի վնասվելու, քանի որ ծառաթփային բուսականությունը բացակայում է: Սույն



գործունեության իրականացման արդյունքում տարածքի կանաչապատում  
նախատեսված չէ:

## 9.2. Բնապահպանական ազդեցությունները և դրանք մեղմող միջոցառումները կայանի շահագործման փուլում

### 9.2.1. Օդային ավազան.

Շահագործման փուլում օդային ավազանի վրա հնարավոր ազդեցություն չի  
կանխատեսվում:

### 9.2.2. Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների պահպանման համար նախատեսվում է՝

- աշխատողների համար խմելու ջուրը բերել շշերով կամ այլ տարաներով,
- աշխատողների կենցաղային և սանիտարական կարիքները հոգալու նպատակով  
կտեղադրվի սանհանգույց (բիոզուգարան),
- բիոզուգարանի մաքրումը կատարել մասնագիտացված կազմակերպությունների  
կողմից՝ պայմանագրային հիմունքներով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անիվները լվանալ փրփրային եղանակով:  
Փրփրային միջոցը բերվում է հատուկ բալոնների միջոցով, որոնք կահավորված են  
փոշարարներով (распылитель): Փրփուրը պատում է անիվի արտաքին մակերեսը,  
փափկեցնելով կեղտը/ցեխը հոսում է ցած՝ գետնի վրա, իր հետ տանելով այդ  
կեղտը/ցեխը: Փրփրիչը հիմնականում կազմված է ածխաթթու գազից, որը հոսելով ցած  
արագ ցնդում է, իսկ գետնին մնում է խոնավ ցեխը/կեղտը, որը նույն շինհրապարակի  
արտաքին մակերեսից է պատել անիվները:
- արևային կայանի պանելների մաքրումը կկատարվի բերովի տեխնիկական ջրով՝  
պայմանագրային հիմունքներով, որի համար կտեղադրվի համապատասխան  
տարողության փակ բաքեր:

### 9.2.3. Թափոնների կառավարում

Շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, տարեկան 25 -30 մ<sup>3</sup>,  
որը կտեղափոխվի համայնքային աղբավայր:

«Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած  
չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)», դասիչ՝ 9120040001004:

Շահագործման փուլում մոդուլների ծառայման ժամկետը սպառվելուց հետո կամ  
դրանց վնասման դեպքում կկատարվի այդ մոդուլների ապամոնտաժում, որոնք  
կկուտակվեն տարածքում՝ փակ պահեստային շենքում՝ մետաղական վազոն-  
տնակում՝ մինչև համապատասխան կազմակերպություններին հանձնելը: Նշված



մոդուլների թափոնը ներառված չէ ՀՀ բնապահպանության /ներկայում՝ շրջակա միջավայրի/ նախարարի 26.10.2006թ. N342-Ն հրամանով հաստատված ցանկում:

Թափոնների քանակները կարելի է որոշել կայանի շահագործման ընթացքում՝ փաստացի տվյալների հիման վրա: Տվյալների վերլուծության հիման վրա կկազմվի թափոնի անձնագիր և կներկայացվի ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն համաձայնեցման:

Ներկա պահին ՀՀ-ում չկան արևային մոդուլների թափոններ վերամշակող լիցենզավորված կազմակերպություններ: Հաշվի առնելով, որ ՀՀ-ում վտանգավոր թափոնների բնագավառում քաղաքականությունը մշակում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը և այն հանգամանքը, որ ՀՀ տարածքում լայնորեն սկսել են տեղադրել արևային կայաններ, ենթադրվում է, որ մոտ ապագայում կստեղծվեն դրանց օգտահանման հնարավորություններ: Արևային մոդուլները հետագա օգտահանումը/կիրառումը/ուտիլիզացիան կիրականացվի շահագործման ավարտին գործող ՀՀ օրենսդրական կարգավորումների հիման վրա:

#### 9.2.4. Հողային ռեսուրսներ

ՖՎ կայանի շահագործման փուլում Հողային ռեսուրսների պահպանման նպատակով նախատեսվում է հնարավորինս պահպանել գործունեության վայրում՝ ազատ տարածքում խոտածածկ հատվածները:

#### 9.2.5. Կենսաբազմազանություն

##### *Բուսական աշխարհ*

Բուսական աշխարհի վրա էական ազդեցություն չի նախատեսվում, քանի որ տարածքը ամառի է և բուսածածկը հիմնականում բացակայում է: Կայանի շահագործման ժամանակ նոր տարածքներ չեն ներառվի և բուսականությանը վնաս չի նախատեսվում:

##### *Կենդանական աշխարհ*

Արևային կայանի համար տարածքի զարգացումը շոշափելի վնաս չի հասցնի այստեղ ապրող կենդանատեսակների:

Կենդանական աշխարհին չվնասելու համար նախատեսվում է հնարավորինս նվազեցնել տարածքի գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով:

#### 9.2.6. Աղմուկ

Արևային կայանի ազդեցությունը մերձակա բնակավայրերի վրա գնահատվում է



որպես թույլ: Որոշակի աղմուկի ավելացում կնկատվի շինարարական աշխատանքների ընթացքում, սակայն այն կլինի ոչ էական և հատուկ միջոցառումների կարիք չկա:

### 9.3. Տարածքի վերականգնում կայանի շահագործումից հետո.

Արևային կայանը նախատեսվում է շահագործել 20 տարի (եթե շահագործման երկարացման որոշում չկայացվի): Արևային կայանի շահագործումից հետո ապամոնտաժվում են բոլոր ժամանակավոր կառույցները, շինարարական աղբը տեղափոխվում է համայնքի կողմից հատկացված աղբավայր, օգտագործման ենթակա նյութերը տեղափոխվում են ընկերության պահեստներ և/կամ վաճառվում են նմանատիպ գործունեություն իրականացնող կազմակերպություններին: Կայանի այն հատվածները որտեղ հողային աշխատանքներ են իրականացվել շինարարության փուլում, ներառյալ ենթակայանի տարածքը, ծածկվում են սիզամարգով կազմված տեղի բնակլիմայական պայմաններին բնորոշ բուսատեսակներով: Վերականգնվող մակերեսները և իրականացվող աշխատանքների ծախսը կորոշվեն կայանի փակումից 2 տարի առաջ:

### 9.4. Սոցիալական ծրագիր

Շահագործման փուլում գործունեության իրականացումն ունենալու է համայնքի բնակիչների համար դրական սոցիալ-տնտեսական ազդեցություն՝ բացվելու են նոր աշխատատեղեր:

## 10. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՀԱՍՑՎՈՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատումն իրականացվում է ըստ շրջակա միջավայրի բաղադրիչների:

Տնտեսական վնասը հաշվարկվում է համաձայն ՀՀ կառավարության 27.05.2015 N764-Ն որոշման:

Հնարավոր տնտեսական վնասը հաշվարկվում է՝

$$ՎՏ = ՀԱԳ + ՋԱԳ + ՕԱԳ, \text{ որտեղ՝}$$

ՎՏ-ն հնարավոր տնտեսական վնասն է դրամային արտահայտությամբ,

ՀԱԳ-ն հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով (բնական միջավայրի աղտոտում, բնական ռեսուրսների աղքատացում, էկոհամակարգերի քայքայմանը կամ վնասմանը հանգեցնող շրջակա միջավայրի բացասական փոփոխություններ) պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է:



Արևային կայանի կառուցման և շահագործման ընթացքում հողի որոկական փոփոխություն չի նախատեսվում, ուստի հաշվարկներում չի ընգրկվելու:

ՋԱԳ-ը ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության ուղղակի և անուղղակի ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է: Արևային կայանի կառուցման և շահագործման ընթացքում կեղտաջրերի արտահոսք չի առաջանում և ջրային ռեսուրսներին վնաս չի հասցվում:

ՕԱԳ-ն մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է:

Մթնոլորտային օդ

Տնտեսական վնասը շրջակա միջավայրին հասցված վնասի վերացման համար անհրաժեշտ միջոցառումների արժեքն է, արտահայտած դրամական համարժեքով:

Տնտեսական վնասի հաշվարկը կատարված է ըստ ՀՀ կառավարության 2005թ-ի հունվարի 25-ին «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ»-ի:

Արտանետումներ առաջանում են միայն շինարարության ընթացքում

Յուրաքանչյուր արտանետման աղբյուրի համար տնտեսությանը հասցված վնասը գնահատվում է 1-ին բանաձևով՝

$$U = \tau_q \Phi_g \sum \varphi_i \rho_i \quad (1), \text{ որտեղ}$$

U -ն ազդեցությունն է, արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամերով,

$\tau_q$  -ն աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, համաձայն նշված կարգի 9-րդ աղյուսակի արտավայրերի համար՝ 0,1:

$\Phi_g$ -ն փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում է՝ ելնելով բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից: Սույն կարգի համաձայն,  $\Phi_g = 1000$  դրամ:

$\varphi_i$ -ն i-րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է:





Ք<sub>i</sub>-ն (i-րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է, Ք<sub>i</sub> գործակիցը որոշվում է 2-րդ բանաձևով`

$$\text{Ք}_i = q (3 \text{SU}_i - 2 \text{ՍԹԱ}_i), \text{SU}_i > \text{ՍԹԱ}_i \quad (2), \text{ որտեղ`}$$

ՍԹԱ<sub>i</sub> -ն i-րդ նյութի սահմանային թույլատրելի տարեկան արտանետման քանակն է` տոննաներով:

SU<sub>i</sub> -ն i նյութի տարեկան փաստացի արտանետումներն են` տոննաներով:

q = 1` անշարժ աղբյուրների համար,

q = 3` շարժական աղբյուրների համար:

Այն նյութերի համար, որոնց նորմատիվային կոնցենտրացիան պետական ստանդարտով չի սահմանված, ազդեցությունը չի գնահատվում:

Հաշվարկի ժամանակ առանձնացնել են շարժական և անշարժ աղբյուրները: Շինարարության արդյունքում առաջացած տնտեսական վնասի հաշվարկը, ինչպես նաև համախառնային ցուցանիշներով արտանետվող նյութերի անվանումները ներկայացվում են աղյուսակ 20-ում:

Աղյուսակ 20: Շրջակա միջավայրին հասցվող տնտեսական վնասի գնահատման հաշվարկ

| Արտանետվող նյութերի անվանումը | Հաշվարկի համար անհրաժեշտ ցուցանիշները |   |           | Շq  | Փգ   | Վi   | Տնտեսական վնասը ՀՀ դրամ |
|-------------------------------|---------------------------------------|---|-----------|-----|------|------|-------------------------|
|                               | Si                                    | Գ | Քi=Si x q |     |      |      | U = Շq Փգ Σ ՎiՔi        |
| Փոշի անօրգանական              | 0,250                                 | 1 | 0,250     | 0,1 | 1000 | 10   | 250                     |
| Ածխածնի օքսիդ                 | 0,218                                 | 3 | 0,655     | 0,1 | 1000 | 1    | 66                      |
| Ածխաջրածիններ                 | 0,050                                 | 3 | 0,151     | 0,1 | 1000 | 3,16 | 48                      |
| Ազոտի երկօքսիդ                | 0,254                                 | 3 | 0,761     | 0,1 | 1000 | 12,5 | 952                     |
| Պ.Մ. /մուր/                   | 0,026                                 | 3 | 0,077     | 0,1 | 1000 | 41,5 | 321                     |
| Ծծմբային անհիդրիդ             | 0,024                                 | 3 | 0,072     | 0,1 | 1000 | 16,5 | 119                     |
| <b>Ընդամենը</b>               |                                       |   |           |     |      |      | <b>1 755</b>            |

Ըստ կատարված հաշվարկների շինարարական աշխատանքների ժամանակ սպասվող արտանետումների հասցված տնտեսական վնասը գնահատվել է 1 755 ՀՀ դրամ:

## 11. ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ՍՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

Ռիսկերի նվազեցումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում և կազմակերպվել է իրականացվող աշխատանքների



մոնիթորինգ:

ԲԿՊ-ն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների նկարագրությունը, որոնք հնարավոր են ծրագրի իրականացման նախագծման, շինարարության և շահագործման փուլերում և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը:

ԲԿՊ պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիթորինգի գործողություններ՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին: Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ում ներառված միջոցառումների իրականացման համար:

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի կողմից կիրականացվի կանոնավոր մոնիթորինգ, որի շրջանակներում կիրականացվեն մշտադիտարկումների միջոցառումներ և ստուգայցեր՝ երկու շաբաթը մեկ անգամ (մեկ անգամ մեկ ամսվա ընթացքում): ԲԿՊ-ն ներկայացված է Հավելված 1-ում:

## 12.ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նախատեսվող գործունեության վերաբերյալ 1-ին փուլի հանրային ծանուցման հիման վրա 1-ին հանրային քննարկումները կազմակերպվել և իրականացվել են 2024թ-ի օգոստոսի 6-ին ժամը 14:00-ին՝ ՀՀ կառավարության 19.11.2014թ-ի N 1325-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան, ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մեծ մասրիկ վարչական ղեկավարի նստավայրում: Հանրային ծանուցման և քննարկումների մասին պատշաճ կերպով ծանուցվել է հանրությունը (հանրային ծանուցման և քննարկումների մասին հայտարարությունը հրապարակվել է <<Առավոտ>> օրաթերթում, որը կցվում է) և համայնքը (պաշտոնապես՝ էլ-փոստի գրությամբ):

Հանրային ծանուցման և քննարկումների վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն և համայնքի կողմից տրամադրվել է



նախնական համաձայնության մասին պաշտոնական գրություն:

Վերը ներկայացվածի հիմնավորող փաստաթղթերը կցված են սույն ՇՄԱԳ-ի փաթեթին: Հանդիպման տեսաձայնագրությունը ներառված է ՇՄԱԳ-ի փաթեթում՝ սույն հաշվետվությանը կից, էլեկտրոնային կրիչով:



**ՀԱՎԵԼՎԱԾ 1՝ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ. ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

| Հնարավոր բացասական ազդեցություն  | Մեղմացնող միջոցառումներ | Պատասխանատու կազմակերպություն | Մեղմացնող միջոցառումների ժամանակը                             | Վերահսկող կազմակերպություն/պատասխանատու | Մեղմացնող միջոցառումների ծախսերը |
|--|-------------------------|-------------------------------|---|---|----------------------------------|
| <b>ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ</b>  |                         |                               |   |   |                                  |
| <p><b>Օդային ավազան</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- պահել մեքենաները և սարքավորումները համապատասխան տեխնիկական վիճակում՝ ավելորդ արտանետումներից խուսափելու համար.</li> <li>- խուսափել շարժիչների անգործությունից.</li> <li>- միշտ ծածկել շինարարական նյութերով և աղբով բեռնված բեռնատարները.</li> <li>- արևակայանի, ենթակայանի շինարարական աշխատանքների և ճանապարհի շահագործման ընթացքում կատարվել գրունտի խոնավեցում, ճանապարհի ջրցան՝ ըստ անհրաժեշտության.</li> <li>- ջրցանը կատարել ջրցան մեքենայով՝ չոր և շոգ եղանակներին</li> </ul> |                         | Կապալառու                     | Շին.աշխատանքների ժամանակ ըստ անհրաժեշտության և կիրառելիության | «ՄԵԾ ՄԱՍՐԻԿ» ՍՊԸ                        | ընթացիկ ծախսեր                   |
| <p><b>Ջրային ռեսուրսներ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- գործունեության իրականացման ընթացքում աշխատողների համար կմատակարարվի խմելու որակի ջուր՝ բերովի (շերով),</li> <li>- աշխատողների կենցաղային կարիքները հոգալու, ինչպես նաև հրդեհաշիջման նպատակով կդեղադրվեն 2 հատ ջրի բաք</li> <li>- շինհրապարակում կտեղադրվի 3 տոննա տարողությամբ պլաստմասե տարա՝ հոսքաջրերի,</li> </ul>   |                         | Կապալառու                     | Շին.աշխատանքների ժամանակ՝ ըստ պահանջարկի                      | «ՄԵԾ ՄԱՍՐԻԿ» ՍՊԸ                        | ընթացիկ ծախսեր                   |



|  |   |  |  |  |  |
|--|---|--|--|--|--|
|  | <p>անձրևաջրերի հեռացման և հավաքման նպատակով (տարան տեղադրվելու է բիոզուգարանին մոտ հատվածում, հաշվի առնելով նախատեսվող ջրի քանակությունը),</p> <ul style="list-style-type: none"> <li>- ջրցանի և փոշենստեցման, մեքենաների անիվների լվացման համար օգտագործվելու է տեխնիկական որակի ջուր, որը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով,</li> <li>- ճանապարհների ջրցանն իրականացվելու է տարվա չոր եղանակներին՝ ըստ անհրաժեշտության</li> <li>- պարզարանում առաջացած նստվածքը կտեղափոխվի աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով</li> <li>- շինհրապարակում տրանսպորտային միջոցների լվացում չի նախատեսվում</li> <li>- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարել համապատասխան մասնագիտացված կետերում</li> <li>- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում մասնագիտացված կազմակերպությունների մեքենաներով՝ ըստ պահանջի:</li> </ul> <p><b>Կեղտաջրեր</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- շինարարության ընթացքում առաջացած հոսքաջրի հեռացման համար տեղադրել բիոզուգարան:</li> </ul> |  |  |  |  |
|--|---|--|--|--|--|



|  |  |                  |   |                           |                       |
|--|--|------------------|---|---------------------------|-----------------------|
| <p><b>Հողային ռեսուրսներ</b></p>                   | <ul style="list-style-type: none"> <li>- գործունեության տարածքում յուղի, վառելիքի կամ այլ վտանգավոր հեղուկների պահման տեղամասեր չեն նախատեսվելու,</li> <li>- շինարարական նյութերը տեղադրվելու են հատուկ տակդիրների վրա,</li> <li>- ավելցուկային գրունտ չի առաջանա,</li> <li>- հանված հողային զանգվածը կօգտագործվի հետլիցքի և տարածքի բարեկարգման համար</li> </ul>  | <p>Կապալառու</p> | <p>Աշխատանքները սկսելուն պես հողային աշխատանքների ընթացքում</p>   | <p>« ՄԵԾ ՄԱՍՐԻԿ » ՍՊԸ</p> | <p>ընթացիկ ծախսեր</p> |
| <p><b>Ազդեցություն կենսաբազմազանության վրա</b></p> | <ul style="list-style-type: none"> <li>- գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում դադարեցնել շինարարական աշխատանքները և տեղեկացնել «Սևան» ԱՊ-ին,</li> <li>- պահպանության միջոցառումներն իրականացնել 31 հուլիսի 2014 թվականի N 781-Ն որոշման պահանջներին համապատասխան</li> <li>- շինարարական աշխատանքներն իրականացնել ցերեկային ժամերին՝ որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար:</li> <li>- շինարարական աշխատանքների ընթացքում ներգրավել կենսաբազմազանության մասնագետ՝ անձնակազմի վերապատրաստման և աշխատանքների ընթացքում դաշտային ուսումնասիրությունների (ըստ անհրաժեշտության) նպատակով</li> </ul> | <p>Կապալառու</p> | <p>Աշխատանքները սկսելուն պես և հողային աշխատանքների ընթացքում</p> | <p>« ՄԵԾ ՄԱՍՐԻԿ » ՍՊԸ</p> | <p>ընթացիկ ծախսեր</p> |





|  |  |                  |   |                           |  |
|--|--|------------------|---|---------------------------|--|
| <p><b>Թափոնների առաջացում և կառավարում</b></p>                       | <p>- շինհրապարակում առաջացող թափոնները ժամանակավոր կուտակել բնապահպանական տեսանկյունից առավել ընդունելի վայրերում և հեռացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով</p> <p>- կենցաղային թափոնների և շինարարական աղբի տեղադրում աղբավայրերում՝ համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված</p> <p>- արգելել ցանկացած տեսակի թափոնների բացօդյա այրումը</p> <p>- շինանյութերը ձեռք բերել լիցենզավորված մատակարարներից</p> | <p>Կապալառու</p> | <p>Շին.աշխատանքների ընթացքում, հեռացնել կուտակումից հետո 3-5 օրվա ընթացքում</p> | <p>« ՄԵԾ ՄԱՍՐԻԿ » ՍՊԸ</p> | <p>ընթացիկ ծախսեր</p>                            |
| <p><b>Աղմուկ և թրթռում</b></p>                                       | <p>Շինարարության և սարքավորումների աշխատանքի հետևանքով առաջացող փոշու և աղմուկի ազդեցությունը մեղմելու նպատակով հարկավոր է.</p> <p>- աղմկոտ աշխատանքներն իրականացնել ցերեկվա ժամերին,</p> <p>- մեքենաների շարժիչները պարբերաբար ստուգել և անհրաժեշտության դեպքում կարգաբերել</p>   | <p>Կապալառու</p> | <p>Շին. աշխատանքների մեկնարկին զուգընթաց և աշխատանքների ընթացքում</p>           | <p>« ՄԵԾ ՄԱՍՐԻԿ » ՍՊԸ</p> | <p>ընթացիկ ծախսեր<br/>Էրնդհանուր նախահաշվում</p> |
| <p><b>Պատմամշակութային գտածոների հայտնաբերում</b></p>                | <p>- գտածոներ հայտնաբերելու դեպքում դադարեցնել աշխատանքները և այդ մասին հայտնել համապարտասխան մարմիններին</p>  | <p>Կապալառու</p> | <p>-</p>  | <p>« ՄԵԾ ՄԱՍՐԻԿ » ՍՊԸ</p> | <p>-</p>   |
| <p><b>Առողջական խնդիրներ, պատահարներ շինարարական հրապարակում</b></p> | <p>- աշխատանքի անվտանգության ռիսկերը նվազեցնելու կամ դրանցից խուսափելու համար, կկիրառվեն հետևյալ մեղմացնող միջոցառումները.</p> <p>- ապահովել, որ բանվորները և տեղանքի ցանկացած այցելու ապահովված լինի և օգտագործի անձնական պաշտպանիչ արտահագուստ,</p> <p>- ապահովել, որ բանվորները անվտանգության</p>   | <p>Կապալառու</p> | <p>-</p>  | <p>« ՄԵԾ ՄԱՍՐԻԿ » ՍՊԸ</p> | <p>-</p>   |



|                                    |  |                  |                                 |                           |          |
|------------------------------------|--|------------------|---------------------------------|---------------------------|----------|
|                                    | <p>վերապատրաստում անցնեն</p> <ul style="list-style-type: none"> <li>- ապահովել, որ շինարարական սարքավորումները ստուգված և լիցենզավորված լինեն,</li> <li>- ապահովել, որ շինարարական տեխնիկան օգտագործվի խստորեն հետևելով շահագործման հրահանգներին,</li> <li>- ունենալ առաջին օգնության բժշկական փաթեթներ և հակահրդեհային սարքավորումներ,</li> <li>- աշխատանքային ժամերից դուրս արգելել գործունեությունը տեղանքում,</li> </ul>   |                  |                                 |                           |          |
| <p><b>Արտակարգ իրավիճակներ</b></p> | <p>Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> <li>- պահպանել հակահրդեհային նորմերը, նախատեսվող գործունեության վայրն ապահովել հրդեհաշիջման վահանակով, հակահրդեհային կրակմարիչներով,</li> <li>- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են,</li> <li>- շինարարակիան նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:</li> </ul> | <p>Կապալառու</p> | <p>Գործունեության ընթացքում</p> | <p>« ՄԵԾ ՄԱՍՐԻԿ » ՍՊԸ</p> | <p>-</p> |
| <p><b>Սոցիալական</b></p>           | <p>Շինարարության փուլում բացվելու է նոր աշխատատեղեր՝ 30-35 մարդու համար:</p>   | <p>Կապալառու</p> | <p>Գործունեության ընթացքում</p> | <p>« ՄԵԾ ՄԱՍՐԻԿ » ՍՊԸ</p> |          |



|                         |   |           |                          |                    |   |
|-------------------------|---|-----------|--------------------------|--------------------|---|
| Բարեկարգում             | <p>շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքը մաքրվելու է ավելորդ թափոններից և բերվելու է հնարավորինս նախկին տեսքի:</p> <p>-շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են և հեռացվելու են տարածքից, -կատարվելու են գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման աշխատանքներ:</p> | Կապալառու | Գործունեության ընթացքում | « ՄԵԾ ՄԱՍՐԻԿ » ՍՊԸ |   |
| <b>ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ</b> |   |           |                          |                    |   |
| Օդային ավազան           | Շահագործման փուլում օդային ավազանի վրա ազդեցություններ չեն նախատեսվում:   |           |                          |                    |   |
| Զրային ռեսուրսներ       | <p>աշխատողների համար խմելու ջուրը կբերվի պատրաստի վիճակում՝ շշերով,</p> <p>-արևային կայանի պանելների մաքրումը կկատարվի բերովի տեխնիկական ջրով՝ պայմանագրային հիմունքներով, որի համար կտեղադրվի 500լ տարողության փակ բաք:</p>  | Կապալառու | Գործունեության ընթացքում | « ՄԵԾ ՄԱՍՐԻԿ » ՍՊԸ | - |
| Թափոնների կառավարում    | <p>-կենցաղային աղբը հավաքվել պոլիէթիլենային պարկերի մեջ և տեղափոխել աղբավայր՝ համայնքապետարանի համաձայնությամբ,</p> <p>- վնասված ՖՎ վահանակները կուտակել տարածքում՝ փակ շենքում՝ վագոն տնակում՝ մինչև համապատասխան կազմակերպություններին հանձնելը:</p>                                      |           |                          |                    |   |



|  |  |                                    |  |                               |          |
|--|--|------------------------------------|--|-------------------------------|----------|
| <p><b>Արտակարգ Իրավիճակներ</b></p>   | <ul style="list-style-type: none"> <li>- արևային կայանն ապահովվելու է հրդեհաշիջման միջոցներով, տեսահսկման տեսախցիկներով,</li> <li>- ազդանշանային համակարգերով, անվտանգության նշաններով, ենթակայանի տարածքում հակահրդեհային, ծխի և ջերմաստիճանի տվիչներով, իսկ արևային կայանում՝ կրակմարիչներով,</li> <li>- առաջին բուժօգնության անհրաժեշտության դեղարկղիկով,</li> <li>- պարբերաբար ստուգել աղետներին հակազդելու համակարգերի աշխատունակությունը,</li> <li>- տեխնաձին վթարների, աղետների առաջացման դեպքում կիրառել միջոցառումներ՝ ուղղված մարդու առողջության և անվտանգության պահպանմանը, վտանգավոր տարածքից մարդկանց տարահանմանը:</li> <li>- տարերային աղետների (քամու ուժգնացում, փոթորիկ, մրրիկ, երկրաշարժ, սողանք) և վթարների դեպքում անջատել էլեկտրասնուցման, էլեկտրահաղորդակցության սարքերը, ապահովել վտանգավոր տարածքից մարդկանց տարահանումը:</li> </ul> | <p>Կապալառու</p>                   |  | <p>« ՄԵԾ ՄԱՍՐԻԿ »<br/>ՍՊԸ</p> | <p>-</p> |
| <p><b>Աղմուկ և թրթռում</b></p>   | <p>- արևային կայանի տարածքը գտնվում է բնակավայրերից հեռու և աղմուկի մակարդակը չի կարող ազդեցություն ունենալ բնակավայրերի վրա</p>   |                                    |  |                               |          |
| <p><b>Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում և անվտանգություն</b></p> | <p>Տեղադրվելու է .</p> <ul style="list-style-type: none"> <li>- փոխակերպիչներ/ինվենտորներ / տեսահսկման համակարգ, գիշերային տեսանելիության հնարավորությամբ,</li> <li>- արևային կայանի և ենթակայանի տարածքն ապահովված է լինելու հակահրդեհային</li> </ul>   | <p>Շահագործող կազմակերպություն</p> |  | <p>« ՄԵԾ ՄԱՍՐԻԿ »<br/>ՍՊԸ</p> |          |



|                                   |  |                             |  |                  |                |
|-----------------------------------|--|-----------------------------|--|------------------|----------------|
|                                   | կրակմարիչներով, ծխի և ջերմաստիճանի տվիչներով, - ատաջին բուժօգնության անհրաժեշտության դեղարկղիկով:  |                             |  |                  |                |
| <b>Սոցիալական</b>                 | <p>-բացառել գործունեության տարածքից դուրս այլ տարածքների օգտագործումը,</p> <p>-աշխատանքները կազմակերպել ցերեկային ժամերին, նվազագույնի են հասցնել ճանապարհների խցանումներ ատաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,</p> <p>- կարգավորել մեքենաների երթերի հաճախականությունը՝ ճանապարհների ծանրաբեռնվածությունից խուսափելու նպատակով:</p> <p>Շահագործման փուլում ընդգրկվելու են համապատասխան աշխատողներ՝ մոնիթորինգ իրականացնելու նպատակով՝ հերթափոխային գրաֆիկով</p> | Շահագործող կազմակերպություն |  | «ՄԵԾ ՄԱՍՐԻԿ» ՍՊԸ | Ընթացիկ ծախսեր |
| <b>Բարեկարգում և կանաչապատում</b> | <p>-բացառել նախատեսված նախագծից դուրս կառուցապատման այլ աշխատանքները, լանդշաֆտային այլ փոփոխությունները,</p> <p>-հնարավորինս պահպանել ռելիեֆի բնական ձևերը, բնահողի բնական վիճակի պահպանման պահանջները, նվազագույնի հասցնել ռելիեֆի խախտմանը, կանաչ տարածքների վնասմանն, աղտոտմանն ուղղված գործողությունները,</p> <p>-գործունեության տարածքը մաքրվելու է թափոններից, վերականգնվելու է լանդշաֆտը,</p> <p>տարածքի վերականգնման նպատակով,</p> <p>-մաքրվելու են ՖՎ վահանակների մակերևույթները,</p>   | Կապալառու                   |  | «ՄԵԾ ՄԱՍՐԻԿ» ՍՊԸ |                |



|  |  |  |  |  |  |
|--|--|--|--|--|--|
|  | -Կայանի և ենթակայանի տարածքն ամբողջությամբ<br>ցանկապատվելու է 2,0մ բարձրության մետաղական<br>ցանկապատով |  |  |  |  |
|--|--|--|--|--|--|





Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ բնակավայրի տարածքում  
նախատեսվող 5ՄՎտ հզորությամբ արևային կայանի կառուցման

ՇՄԱԳ հաշվետվություն  
2025թ. հունվար

Մշտադիտարկման միջոցառումները



| <i>Որ պարամետրը պետք է մոնիթորինգի ենթարկվի</i> | <i>Ինչու պետք է այդ պարամետրը մոնիթորինգի ենթարկվի</i>  | <i>Որտեղ պետք է պարամետրը մոնիթորինգի ենթարկվի</i>       | <i>Երբ կամ ինչ հաճախականությամբ պարամետրը պետք է մոնիթորինգի ենթարկվի</i> | <i>Ինչպես պետք է պարամետրը մոնիթորինգի ենթարկվի</i> | <i>Մոնիթորինգի արժեքը</i>        | <i>Ով է պատասխանատու մոնիթորինգի համար</i> |
|---|---|--|---|---|----------------------------------|--|
| <b>Պատմական և մշակութային արժեքներ</b>          | Պատմական և մշակութային հուշարձաններին վնաս հասցնելուց խուսափելու համար                                | ՖՎ կայանի տարածք, հենարաններ և նոր մուտքային ճանապարհներ | Նախքան շինարարական աշխատանքները   | Գրառումների ուսումնասիրում                          | Ներառված է նախագծման գնի մեջ     | ԿԿ, ԻԳ, Խորհրդատու,                        |
| <b>Շինարարական նյութերի որակը</b>               | Հավաստիանալ շինարարական նյութերի հուսալիության և մարդկանց առողջության համար դրանց անվտանգ լինելու մեջ | Մատակարարի գրասենյակում կամ պահեստում                    | Մատակարարման պայմանագրի ուսումնասիրման ընթացքում                          | Փաստաթղթերի ստուգում                                | Ներառված է շինարարության գնի մեջ | ՇԿ   |



|   |   |  |   |  |   |           |
|---|---|--|---|--|---|-----------|
| <p><b>Շինարարական նյութերի և թափոնների տեղափոխում</b></p> | <p>- Սահմանափակել արտանետումներից հողի և օդի աղտոտումը,<br/>- Սահմանափակել վիբրացիայի և աղմուկի հետևանքով հանրությանը հասցվող անհանգստությունը,<br/>- Նվազեցնել երթևեկության խափանումը Կանխել հողի, մակերևութային և ստորգետնյա ջրերի աղտոտումը Խուսափել շինհրապարակում աղբի և շինարարական նյութերի մնացորդների հետևանքով հնարավոր պատահարներից Շինհրապարակում և դրա շրջակայքում էսթետիկական տեսքի պահպանման համար</p> | <p>-Շինհրապարակ<br/>- Շինարարական նյութերի և թափոնների տեղափոխման ճանապարհները</p> | <p>Չնախատեսված ստուգումներ աշխատանքային ժամերին եւ դրանից դուրս</p> | <p>Շարժման ուղղությամբ շինարարական օբյեկտի հարևան ճանապարհների գնում</p> | <p>Ներառված է շինարարության գնի մեջ</p> | <p>ՇԿ</p> |
| <p><b>Շինտեխնիկայի տեղաշարժ</b></p>                       | <p>- Խուսափել սարքավորումների շահագործման ընթացքում յուղերով հողի և ջրի աղտոտումից</p>  | <p>Շինարարական ճամբար և ժամանակավոր հրապարակներ</p>                                | <p>Սարքավորումների շահագործման ընթացքում</p>                        | <p>Գործունեության ստուգում</p>   | <p>Ներառված է շինարարության գնի մեջ</p> | <p>ՇԿ</p> |



|                             |   |   |   |   |   |           |
|-----------------------------|---|---|---|---|---|-----------|
| <p><b>Հողի էրոզիա</b></p>   | <p>Էրոզիայի երևույթները կանխելու նպատակով</p> | <p>Ջրային հոսքերի ավամերձ տարածքներ և նյութերի պահեստավորման տեղամաս</p>    | <p>Ամեն շաբաթ, շինարարական աշխատանքների ընթացքում</p> | <p>Էրոզիայի կանխման միջոցառումների և դրանց արդյունավետության ուսումնասիրություն</p> | <p>Ներառված է շինարարության գնի մեջ</p> | <p>ՇԿ</p> |
| <p><b>Հողի աղտոտում</b></p> | <p>Հողի աղտոտումը նվազեցնելու նպատակով</p>    | <p>Բոլոր շինհրապարակներում, ներառյալ շինճամբարը, մոտեցման ճանապարհները,</p> | <p>Ամեն շաբաթ, շինարարական աշխատանքների ընթացքում</p> | <p>Վիզուալ ուսումնասիրություն</p>   | <p>Ներառված է շինարարության գնի մեջ</p> | <p>ՇԿ</p> |
|                             | <p>Հողի աղտոտումը նվազեցնելու նպատակով</p>    | <p>Ավտոկայանատեղեր, մոտեցման ճանապարհներ,</p>                               | <p>Ամսեկան, շահագործման ընթացքում</p>                 | <p>Վիզուալ ուսումնասիրություն</p>   | <p>Ներառված է շահագործման գնի մեջ</p>   | <p>ՇԿ</p> |
| <p><b>Օդի որակ փոշի</b></p> | <p>Օդի աղտոտումը նվազեցնելու նպատակով</p>     | <p>Բոլոր շինհրապարակներում, ներառյալ մոտեցման ճանապարհները,</p>             | <p>Ամեն օր, շինարարական աշխատանքների ընթացքում</p>    | <p>Վիզուալ ուսումնասիրություն</p>   | <p>Ներառված է շահագործման գնի մեջ</p>   | <p>ՇԿ</p> |
| <p><b>Աղմուկ</b></p>        | <p>Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով</p> | <p>Բոլոր շինհրապարակներում, ներառյալ շինճամբարը, մոտեցման ճանապարհները,</p> | <p>Ամեն շաբաթ, շինարարական աշխատանքների ընթացքում</p> | <p>Աղմկաչափ</p>   | <p>80 ԱՄՆ դոլար</p>                     | <p>ՇԿ</p> |
|                             | <p>Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով</p> | <p>Ավտոկայանատեղեր, մոտեցման ճանապարհներ,</p>                               | <p>Շաբաթական</p>                                      | <p>Աղմկաչափ</p>   | <p>80 ԱՄՆ դոլար</p>                     | <p>ՄԿ</p> |



|  |   |  |   |   |                                  |                     |
|--|---|--|---|---|----------------------------------|---------------------|
| Երթևեկության անվտանգություն                | Երթևեկության անվտանգությունն ապահովելու համար   | ՇԿ կողմից օգտագործվող բոլոր ընդհանուր ճանապարհները                   | Ամեն օր, շինարարական աշխատանքների ընթացքում | Վիզուալ ուսումնասիրություն  | Ներառված է շինարարության գնի մեջ | ՇԿ                  |
| Կենցաղային աղբի առաջացում                  | Կանխել հողի, մակերևութային և ստորգետնյա ջրերի աղտոտումը   | ՖՎ կայանի տեղամասը և դրա շրջակայքը                                   | Պարբերաբար, շահագործման ընթացքում           | Վիզուալ ուսումնասիրություն  | Ներառված է շահագործման գնի մեջ   | ՍԿ                  |
| Շինհրապարակի ռեկուլտիվացիա եւ կանաչապատում | ՖՎ կայանի շինարարության հետևանքով հողաձածկի որակի և լանդշաֆտի էսթետիկ տեսքի կորստի նվազեցման նպատակով | Բոլոր շինհրապարակներում, ներառյալ շինձամբարը, մոտեցման ճանապարհները, | Շինարարության ավարտական ժամանակահատվածում   | Վիզուալ ստուգում  | Ներառված է շինարարության գնի մեջ | ՇԿ, ԻԳ, Խորհրդատու, |
| Աշխատողների առողջություն և անվտանգություն  | վնասվածքների եւ վթարների հավանականությունը նվազեցնելու նպատակով                                       | Բոլոր շինհրապարակներում  | Շինարարական աշխատանքների ամբողջ ընթացքում   | Գործունեության գնում, արձանագրությունների և հաշվետվությունների ստուգում | Ներառված է շինարարության գնի մեջ | ՇԿ, ԻԳ, Խորհրդատու  |
|  |   | ՖՎ կայան   | Շահագործման ամբողջ ընթացքում                | Տեխնոլոգիական մատյանների ստուգում                                       | Ներառված է շահագործման գնի մեջ   | ՍԿ, ԻԳ, Խորհրդատու  |
| Պատրաստվածությունը արտակարգ իրավիճակներին  | - Նվազեցնել շինարարության ընթացքում աշխատողների անվտանգության ռիսկերը                                 | Բոլոր շինհրապարակներում  | Շինարարության ամբողջ ընթացքում              | Պարբերական ստուգումներ  | Ներառված է շինարարության գնի մեջ | ՇԿ, ԻԳ              |



|   |   |   |  |  |                                  |                       |
|---|---|---|--|--|----------------------------------|-----------------------|
|   | -նվազեցնել ՖՎ կայանի աշխատակազմի անվտանգության ռիսկերը<br>- Խուսափել ՖՎ կայանի տեխնիկական սպասարկման խափանումից | ՖՎ կայան  | ՖՎ կայանի շահագործման ամբողջ ընթացքում | Պարբերական ստուգումներ   | Ներառված է շահագործման գնի մեջ   | ՍԿ, ԻԳ                |
| <b>Հասարակության իրազեկվածություն</b>         | Նվազեցնել շինհրապարակին մոտ գտնվող բնակավայրերի վրա ազդեցության   | Տեղական համայնքների գրասենյակներ  | Նախքան շինարարական աշխատանքները        | Ծանուցման փաստաթղթերի ստուգում<br>Հարցազրույցներ շինհրապարակի մոտ գտնվող բնակավայրերի բնակիչների հետ | Ներառված է շահագործման գնի մեջ   | ՆԿ,<br>Խորհրդատու     |
| <b>Հանրային առողջություն և անվտանգություն</b> | Ապահովել բնակիչների համապատասխան նախազգուշացումը  | Հիմնական ճանապարհների տեսանելի մասերում, գյուղերին ու բնակավայրերին մոտ գտնվող տեղամասերի մոտ | Ամսեկան                                | Նախազգուշական նշանների ստուգում  | Ներառված է շինարարության գնի մեջ | ՇԿ, ԻԳ,<br>Խորհրդատու |





|  |   |   |   |  |   |                               |
|--|---|---|---|--|---|-------------------------------|
| <p><b>Տեղական բնակչության զբաղվածություն</b></p> | <p>- Մշակել և իրականացնել աշխատողների ընդունման և աշխատավարձերի վճարման անխտրական քաղաքականություն<br/>- Շինարարական աշխատանքների համար աշխատողներ ընդունելիս առաջնահերթությունը պետք է տրվի տեղի բնակչությանը</p>                                  | <p>- Տեղական համայնքներ<br/>- ՖՎ կայանի գրասենյակ</p>                 | <p>Պարբերաբար, շինարարության ընթացքում</p>  | <p>Հարցազրույցներ</p>                                    | <p>Ներառված է շինարարության գնի մեջ</p>               | <p>ՇԿ, Խորհրդատու</p>         |
| <p><b>Գենդերային ասպեկտներ</b></p>               | <p>Ապահովել աշխատանքային վայրում/ աշխատողների ճամբարում սեռական ոտնձգությունների բացարձակ անհանդուժողականություն<br/>Ուժեղացնել տարածքային իշխանությունների ներգրավվածությունը գենդերային խնդիրների հարցում (օր. ստանալ բողոքներ կանանց կումից)</p> | <p>- Բոլոր շինհրպարակները<br/>- ՖՎ կայան<br/>- Տեղական համայնքներ</p> | <p>Ամեն ամիս, շինարարության փուլի ընթացքում<br/>Եռամսյակային, շահագործման փուլի ընթացքում</p> | <p>Հարցազրույցներ կանանց հետ<br/>-Բողոքների ստուգում</p> | <p>Ներառված է շինարարության և շահագործման գնի մեջ</p> | <p>ՇԿ, ՄԿ, Խորհրդատու, ԻԳ</p> |



|  |  |   |                |  |   |                                       |
|--|--|---|----------------|--|---|---------------------------------------|
| <p><b>Բողոքների<br/>լուծման<br/>մեխանիզմ</b></p> | <p>Ապահովել բողոքների<br/>լուծման մեխանիզմի<br/>իրականացումը և դրա<br/>արդյունավետությունը</p> | <ul style="list-style-type: none"> <li>- Տեղական<br/>համայնքներ</li> <li>- ՖՎ կայանի<br/>գրասենյակ</li> </ul> | <p>Ամսական</p> | <ul style="list-style-type: none"> <li>- Բողոքների ստուգում</li> <li>- Հարցազրույց<br/>աշխատողների հետ</li> <li>- Հարցազրույցներ<br/>համայնքների ղեկավարների<br/>և բնակիչների հետ</li> </ul> | <p>Ներառված է<br/>շինարարու-<br/>թյան և<br/>շահագործման<br/>գնի մեջ</p> | <p>ՇԿ, ՄԿ,<br/>Խորհրդատու,<br/>ԻԳ</p> |
|--|--|---|----------------|--|---|---------------------------------------|



## ՀԱՎԵԼՎԱԾ 2՝ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

**ՎԿԱՅԱԿԱՆ**

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 26 մայիսի 2023 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

### 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՄԵԾ ՄԱՍՐԻԿ» ՍՊԸ

### 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Գեղարքունիք, համայնք Վարդենիս գյուղ Մեծ Մասրիկ 1-ին փողոց 12 նրբանցք 2 հողամաս

### 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Առուվաճառքի պայմանագիր

### 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 05-065-0145-0013

Մակերեսի չափը (հա)՝ 6

Նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ էներգետիկայի

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

**ՎԿԱՅԱԿԱՆ N 26052023-05-0082, գաղտնաբառ՝ CTACAFNVZABQ**

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի [www.e-cadastre.am](http://www.e-cadastre.am) կայքէջի միջոցով

Էջ 1/2



### 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/Հ | Կադաստրային ծածկագիր | Տեսակ | Մակերես | Գրանցված իրավունքի տեսակ |
|-----|----------------------|-------|---------|--------------------------|
|     |                      |       |         |                          |
|     |                      |       |         |                          |
|     |                      |       |         |                          |
|     |                      |       |         |                          |
|     |                      |       |         |                          |

### Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ՌՈԲԵՐՏ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 26052023-05-0082, գաղտնաբառ՝ CTACAFNVZABQ

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի [www.e-cadastre.am](http://www.e-cadastre.am) կայքէջի միջոցով

Էջ 2/2





Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ  
բնակավայրի տարածքում նախատեսվող 5ՄՎտ  
հզորությամբ արևային կայանի կառուցման

ՇՄԱԳ հաշվետվություն  
2025թ. հունվար

## ՀԱՎԵԼՎԱԾ 3՝ «ՀԷՑ»ՓԲԸ-Ի ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ

ELECTRIC NETWORKS OF ARMENIA

ЭЛЕКТРИЧЕСКИЕ СЕТИ АРМЕНИИ

№ S-10/0082/1-1-Հ

ՀՀ Երևան, Ա. Արմենակյան փողոց 127


«03» 10 2023թ.

### ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ /ԱՐՏԱԴՐՈՂԻ ՄԻԱՏՈՒՄ/

|                                     |  |
|-------------------------------------|--|
| Տրվում է Պատճենը                    | «Մեծ Մասրիկ» ՍՊ ընկերությանը<br>«Գեղամա» մ/ճ-ի գլխ.ճարտարագետ Հ. Մանուկյանին<br>«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ<br>Գլխավոր ճարտարագետ Գ. Բալյանին<br>Մարզ Գեղարքունիք, հ. Վարդենիս,<br>Գ. Մեծ Մասրիկ 1-ին փողոց 12-րդ նրբանցք 2 հողամաս<br>(կադ. ծածկագիր՝ 05-065-0145-0013) |
| Տեղադրվող կայանի միացման հասցեն     |  |
| Արևային կայանի անվանումը            | «Արև»  |
| Լիցենզիայի համարը                   | ԼԷ N0747   |
| Արևային կայանի հզորությունը (կՎտ)   | 5100   |
| Բաշխման ցանցին միացման կետի լարումը | 10 կՎ  |

- Արևային կայանի տարածքում կառուցել 6300 կՎԱ հզորության 10/0.8 լարման ենթակայան:
- Ենթակայանը միացնել «Վարդենիս» 110/35/10 կՎ ենթակայանի 10 կՎ ԲԱ-ին՝ /տեղադրելով նոր 10 կՎ բջից/ կառուցելով մոտ 7000 մ 10 կՎ լարման էլեկտրահաղորդման գիծ:
- Նախատեսել ուղեկան պաշտպանության սարք և ավտոմատիկա (ՌՊԱ)՝ համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 17-ի N42-Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրատեղակայանների պաշտպանության և ավտոմատիկայի սարքվածքին ներկայացվող պահանջների, տեխնիկական կանոնակարգի, ՌՊԱ սարքվածքների ծավալը և նակցունքները համաձայնեցնելով «ՀԷՏ» ՓԲ և «ԷԷՀՕ» ՓԲ ընկերությունների հետ:
- Վթարային կամ այլ ուժիմային անհրաժեշտության դեպքում, երբ «Վարդենիս» 110/35/10 կՎ ենթակայանը կանալի «Կապուտակ» 110 կՎ ՕԳ-ով արևային կայանը պարտադիր պետք է անջատվի ցանցից համակարգի օպերատորի կամ «ՀԷՏ» ՓԲԸ-ի օրվա դիսպետչերի պահանջով: Տեխնիկական հնարավորության դեպքում նշված անջատումը իրականացնելու համար կայանում անհրաժեշտ է տեղադրել ավտոմատիկա:
- Արևային կայանի էլեկտրական մասի նախագիծը նախապես համաձայնեցնել «ՀԷՏ» ՓԲ ընկերության տեխնիկական տնօրինության, «Հաշվարկային կենտրոն», «ԷԷՀՕ» ՓԲ ընկերությունների և համապատասխան այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ:
- Մահմանազատման կետում՝ «Վարդենիս» 110/35/10 կՎ ենթակայանի 10 կՎ ԲԱ-ում՝ համաձայն ՀՕԿ-ի 25 դեկտեմբերի 2019 թվականի N522-Ն որոշմամբ հաստատված ԷՄԵ կանոնների թիվ 38 գլխի պահանջների, տեղադրել և օրինականացնել երկկողմ հաշվառք իրականացնող (Ресерв) հաշվառքի սարքեր (էլեկտրաէներգիայի հաշվիչ, հոսանքի և լարման չափիչ տրանսֆորմատորների միացությունների համախումբ):
- Արևային կայանի միացումը բաշխման ցանցին կիրականացվի՝ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված գործարկման եզրակացության, «ՀԷՏ» ՓԲ ընկերության կողմից տրված լարման կարգադրության առկայության դեպքում:
  - Բաշխման ցանցին միացման աշխատանքները իրականացնել համաձայն նախագծի՝ շրջնակապիտակ կազմակերպության միջոցով:
  - Տեխնիկական պայմանների կապարման ժամկետը մինչև Արևային կայանի շրջնակապով ամրագրված՝ կայանի տնօրինման ժամանակահատվածը:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԵՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԵՐՈՒՄԻՆԻՍՏՆԵՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀԱՎԵԼՎԱԾ 4՝ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
Հ Ա Ն Ձ Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ



Էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության

**Լ Ի Ց Ե Ն Ձ Ի Ա**

**ԼԷ № 0747** (7 էջից)

Տրվում է «ՄԵԾ ՄԱՍՐԻԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ մինչև 2045 թվականի հուլիսի 20-ը գործողության ժամկետով,

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2023 թվականի հուլիսի 19-ի №238-Ա որոշմամբ

-1997-

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ՝

Գ. Բաղդամյան



« 19 » հուլիսի 2023 թ.

ԵՐԵՎԱՆ - 2023թ.



**Հավելված**

Հաստատված է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2023 թվականի հուլիսի 19-ի N՝238-Ա որոշմամբ

**«ՄԵԾ ՄԱՍՐԻԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ N՝0747 լիցենզիայի**

**ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

**1. ԼԻՑԵՆԶԻԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ (ՎԱՅՐԸ)**

1. Սույն լիցենզիան ուժի մեջ է մտնում 2023 թվականի հուլիսի 20-ից:
2. Սույն լիցենզիան գործում է մինչև 2045 թվականի հուլիսի 20-ը, որից
  - 1) մինչև 2025 թվականի հուլիսի 20-ը կառուցման ժամանակահատվածն է,
  - 2) մինչև 2045 թվականի հուլիսի 20-ը էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության իրականացման ժամանակահատվածը:
3. Սույն լիցենզիայի՝ սոցիալական պատասխանատվությունները կատարելու (ժամկետի) երկարաժամանակյա անհրաժեշտության դեպքում «ՄԵԾ ՄԱՍՐԻԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Լիցենզավորված անձ) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից սահմանված կարգով և ժամկետներում համապատասխան հայտ է ներկայացնում Հանձնաժողով:
4. Լիցենզավորված գործունեության իրականացման աշխարհագրական տարածքը (գործունեության վայրը) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս-համայնքի վարչական տարածքն է (գյուղ Մեծ Մասրիկ):

**2. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄՈՂ ԳՈՐԾԱՈՒՅԹՆԵՐԸ**

5. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է սույն լիցենզիայով սահմանված ժամկետում (ժամանակահատվածում) կառուցել 5100 կՎտ տեղակայվող հզորությամբ «Արև» արևային էլեկտրակայանը (այսուհետ՝ Կայան), ինչպես նաև իրավունք է տրվում արտադրել էլեկտրական էներգիա՝





առանց «Էներգետիկայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված էլեկտրաէներգիայի գնման երաշխիքի:

6. Լիցենզավորված անձին, առանց Օրենքով սահմանված էլեկտրաէներգիայի գնման երաշխիքի, իրավունք է տրվում՝

- 1) մեծածախ շուկայում վաճառել կամ արտահանել իր արտադրած էլեկտրական էներգիան (հզորությունը)՝ շուկայի կանոնների համաձայն,
- 2) էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում գնել էլեկտրական էներգիա (հզորություն), եթե սեփական արտադրության էլեկտրական էներգիայով չի կարողանում կատարել իր պայմանագրային պարտականությունները:

7. Լիցենզավորված անձն էլեկտրական էներգիան կարող է օգտագործել նաև սեփական կարիքների համար՝ շուկայի կանոնների համաձայն:

8. Կայանի կառուցման ավարտից հետո դրա փաստացի ներդրված (դրվածքային) հզորությունը կամրագրվի սույն լիցենզիայում:

9. Կայանի համար հանձնաժողովը սակագին չի սահմանում:

### 3. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

10. Լիցենզավորված անձի գործունեությունը պետք է համապատասխանի Օրենքի, այլ օրենքների, սույն լիցենզիայի, ցանցային կանոնների, առևտրային կանոնների, Հանձնաժողովի կողմից ընդունված և այլ իրավական ակտերի պահանջներին:

11. Լիցենզավորված անձի և էլեկտրաէներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող այլ անձանց, ինչպես նաև սպառողների միջև կնքված պայմանագրերը պետք է համապատասխանեն Հանձնաժողովի սահմանած պայմանագրերի օրինակելի ձևերին և (կամ) պարտադիր պայմաններին:

12. Լիցենզավորված անձը շուկայի օպերատորի հաշվառմանն է ներկայացնում մեծածախ շուկայում կնքված, ինչպես նաև էլեկտրական էներգիայի (հզորության) արտահանում նախատեսող պայմանագրերը՝ համաձայն շուկայի կանոնների:

13. Լիցենզավորված անձի կողմից Կայանի կառուցումը և շահագործումն իրականացվում է համաձայն Կայանի նախագծային փաստաթղթերով նախատեսված սխեմայի՝ բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:



14. Լիցենզավորված անձը ոչ ուշ, քան մինչև 2024 թվականի հուլիսի 20-ը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել Կայանի կառուցման՝ օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով:

15. Լիցենզավորված անձը պարտավոր է մինչև սույն լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածի ավարտը Հանձնաժողով ներկայացնել Կայանի կառուցման ավարտը հավաստող՝ Հանձնաժողովի սահմանած կարգով պահանջվող փաստաթղթերը:

16. Լիցենզավորված անձը (10 ՄՎտ և ավելի հզորակալված հզորությամբ Կայանների դեպքում) պարտավոր է կատարել էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի հրահանգները՝ համաձայն ցանցային կանոնների:

17. Սույն լիցենզիան չի կարող այլ անձանց օգտագործման տրվել, յուրաքանչյուր կամ գրավադրվել, իսկ դրանով ներառված էլեկտրական էներգիայի արտադրության գործառույթը որևէ ձևով փոխանցվել այլ անձի, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

18. Սույն լիցենզիայի գործողությունը չի տարածվում Լիցենզավորված անձի հետ համատեղ, այդ թվում՝ համատեղ գործունեության պայմանագրով գործունեություն իրականացնող այլ անձանց, ինչպես նաև Լիցենզավորված անձի մասնակցությամբ իմնադրված կամ գործող իրավաբանական անձանց վրե:

19. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ և այդ գործունեության մեջ ներգրավված գույքի կասանելիությունը Հանձնաժողովի ներկայացուցիչների համար:

20. Լիցենզավորված անձի կողմից իրականացվող տնտեսական այլ գործունեությունը պետք է վտանգի սույն լիցենզիայի պայմանների պատշաճ կատարումը, իսկ լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը պետք է առանձնացված լինի Լիցենզավորված անձի կողմից իրականացվող այլ գործունեության հաշվապահական հաշվառումից:

21. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգերին և ձևերին համապատասխան լիցենզավորված գործունեության մասին տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնել Հանձնաժողով:

22. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի պահանջով ներկայացնել լիցենզավորված գործունեության վերաբերյալ սպառիչ տեղեկատվություն, ինչպես նաև պատասխանել Հանձնաժողովի



գրավոր հարցադրումներին 10

օրվա ընթացքում, եթե Հանձնաժողովի կողմից այլ ժամկետներ սահմանված չեն:

23. Լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած լիցենզավորված գործունեության մասին հաշվետվությունների և այլ տեղեկատվության հավաստիության համար:

24. Լիցենզավորված անձի և շուկայի մասնակիցների կողմից միմյանց, ինչպես նաև Հանձնաժողով ներկայացվող տեղեկությունը (փաստաթուղթը) հրապարակային է, եթե այն օրենքի համաձայն չի համարվում գաղտնի:

25. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովին անմիջապես հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են սույն լիցենզիայի պայմանների խախտումների կամ կարող են դառնալ սույն լիցենզիայի պայմանների խախտումների անմիջական պատճառ:

26. Սույն լիցենզիայի պայմաններով նախատեսված իրազեկումը՝ այդ թվում փաստաթղթերի հանձնումը, կատարվում է օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

**4. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ**

27. Լիցենզավորված գործունեության վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովը:

28. Հանձնաժողովը օրենքներով և դրանց հիման վրա ընդունված՝ իր իրավական ակտերով սահմանված դեպքերում կարգով, Լիցենզավորված անձի գործունեությունը Օրենքին, Հանձնաժողովի իրավական ակտերին և լիցենզիայի պայմաններին համապատասխանության ստուգման, ինչպես նաև Հանձնաժողով ներկայացվող հաշվետվությունների և տեղեկատվության հավաստիության, գնահատման համար իրականացնում է Լիցենզավորված անձի գործունեության մոնիտորինգ:

29. Հանձնաժողովի ներկայացուցիչներն ունեն պզատ մուտքի իրավունք Լիցենզավորված անձի տարածք: Հանձնաժողովի սահմանած կարգով:

**5. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՐՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

30. Լիցենզավորված անձի կողմից Օրենքի դրույթները, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Հանձնաժողովն իրավասու է կիրառելու Օրենքով նախատեսված





պատասխանատվության միջոցները, վերականգնելու մինչև խախտումը եղած

դրությունը, կատարելու դրանից բխող գործողություններ (այդ թվում՝ հաշվարկ, վերահաշվարկ և այլն), ինչպես նաև տալ դրանց կամ խախտումը վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ՝ հաշվի առնելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով սահմանված առանձնահատկությունները:

31. Լիցենզավորված անձը սույն լիցենզիայի պայմանների 30-րդ կետում նշված խախտումների համար պատասխանատվություն չի կրում, եթե դրանք հետևանք են ֆորս մաժորի:

32. Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ սույն լիցենզիայի գործողությունը դադարեցնելու դեպքում Հանձնաժողովը և Լիցենզավորված անձը ղեկավարվում են Օրենքով և օրենսդրությամբ:

#### 6. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

33. Սույն լիցենզիայում փոփոխություններ կարող են կատարվել Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

34. Հանձնաժողովի նախաձեռնությամբ սույն լիցենզիայի փոփոխությունները կատարվում են Լիցենզավորված անձի համաձայնությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ նախատեսվող փոփոխություններն անհրաժեշտ են օրենքների և նորմատիվ իրավական ակտերի պարզաբնակատարումն ապահովելու համար:

35. Լիցենզավորված անձի վերակազմակերպման կամ նրա անվանման կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած 15 օրյա ժամկետում լիցենզիայի վերաձևակերպման հայտ ներկայացնել Հանձնաժողով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

36. Սույն լիցենզիայի պայմաններում հասկացություններն ունեն Օրենքով և շուկայի կանոններով սահմանված նշանակությունը:






«ՄԵԾ ՄԱՍՐԻԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

(ընկերության անվանումը)

Հայաստանի Հանրապետություն, Արարատի մարզ, գյուղ Մասիս,  
Պ. Պետրոսյան փող., տուն 2

(գտնվելու վայրը)



ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝  Ա. ՍԱՖԱՐՅԱՆ

- 1997 -





## ՀԱՎԵԼՎԱԾ 5՝ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՎԿԱՅԱԿԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅՈՒՑՔ-ՔԱՂՎԱԾՔ առ 2024-05-31

### «ՄԵԾ ՄԱՍՐԻԿ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)

Գրանցման համար 52.110.1312527

Հիմնադրման տարի 2023

Գրանցման ամսաթիվ 2023-04-19

Գործունեության ժամկետ Անժամկետ

Կարգավիճակ

Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ  
գործունեության (գոյության) դադարման մասին պետական  
միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:

Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ) 53999497

Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) 04245421

Սոցիալական վճարների պարտավորությունների  
անձնական հաշվի քարտի համար (Ապահովագրի  
ծածկագիր) 5112527

Էլ. փոստ karen.arabyan@ambekcapital.am

Կայք -

#### Գտնվելու վայրը

Հասցե ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ / 10 / ՏԱՐԱԾՔ 98 ԿԵՆՏՐՈՆ  
0010 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Հեռախոս -

#### Գործադիր մարմնի ղեկավար

Պաշտոն Տնօրեն

Անուն Ազգանուն ԿԱՐԵՆ ԱՐԱԲՅԱՆ ՀԱՅԿԻ

Անձնագրային տվյալներ 015227515 2023-10-19 007

Հասցե ՄԻԿՐՈՇՐԱՆ / Ե / 68 / 10 ԲՆ. ՀՐԱԶԴԱՆ 2301  
ՀՐԱԶԴԱՆ ԿՈՏԱՅՔ ՀԱՅԱՍՏԱՆ



Էջ 2

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՄԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՍՑՄԱՆ ԻՑ ՔԱՂՎԱՆՔ առ 2024-05-31  
«ՄԵԾ ՄԱՍՐԻԿ»  
Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)

Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավանախորդ(ներ) գրառված չեն

Տեղեկությունների կանոնադրական կապիտալի չափի մասին

Կանոնադրական կապիտալի չափը << դրամով՝ 10,000.00

Մասնակիցներ

| Անուն Ազգանուն / Անվանում  | Գրանցամատյանում գրառման ամսաթիվ | Բաժնեմասի չափը | Բաժնեմասի չափը << դրամով |  |
|--|---------------------------------|----------------|--------------------------|--|
| «ՍՈՒՆՍ» ՍՊԸ<br>Գրանցման հ/հ 269.110.954279<br>Հասցե՝ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ Փ. / Շ / 10 / 98<br>տարածք ԿԵՆՏՐՈՆ 0010 ԵՐԵՎԱՆ<br>ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ | 2024-05-23                      | 100 %          | 10000                    |  |

Պետական մյասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

| Գրանցման ամսաթիվ | Փոփոխություններ  |
|------------------|--|
| 2023-10-15       | Իրական սեփականատերերի վերաբերյալ նոր խմբագրությամբ հայտարարագրի ընդունում  |
| 2024-02-09       | Իրական սեփականատերերի վերաբերյալ նոր խմբագրությամբ հայտարարագրի ընդունում  |
| 2024-05-23       | Մասնակիցների փոփոխություն  |
| 2024-05-31       | Իրավաբանական հասցեի փոփոխություն<br>Պաշտոնական կայքի և/կամ էլ.փոստի մասին տվյալների փոփոխություն<br>Կանոնադրության փոփոխություն (նոր խմբագրությամբ կանոնադրություն)<br>Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն |

Քաղվածքը տրամադրող՝ \_\_\_\_\_ Կարինե Պողոսյան  
ստորագրություն

Քաղվածքի տրամադրման ամսաթիվ՝ 2024-05-31





## ՀԱՎԵԼՎԱԾ 6՝ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ գյուղի վարչական սահմաններում «Մեծ Մասրիկ» ՍՊԸ-ի կողմից 5,1 ՄՎՏ հզորությամբ «Արև» արևային ֆոտովոլտային էներգակայանի կառուցման աշխատանքների համար նախատեսված տարածքում ծրագրի իրականացման արդյունքում հնագիտական և պատմամշակութային հուշարձանների վրա հնարավոր ազդեցության գահատակակետերակացություն

Հայաստանը չափազանց հարուստ մշակութային ժառանգություն ունեցող երկիր է, որի ակունքները ձգվում են դեպի հազարամյակների խորքերը: Այստեղ հայտնի են շուրջ 33 000 պատմության և մշակույթի հուշարձաններ, ներկայացված 4500 առանձին համալիրներով, որոնք զբաղեցնում են մոտ 20 000 հեկտար ընդհանուր տարածք: Հայաստանի Հանրապետության տարածքում առկա հուշարձանները պաշտպանված են օրենքով և բաժանվում են տեղական և հանրապետական նշանակության: Դրանց մեջ հատկապես առանձնանում են թվով 80 համալիրներ, որոնք ունեն կարևորագույն պատմական, ճարտարապետական, գիտական, արվեստագիտական և մշակութային բացառիկ արժեք (ընդգրկում են մոտ 400 ճարտարապետական հուշարձաններ): Ոչ վաղ անցյալում դրանք ընդգրկված էին ԽՍՀՄ համամյութենական մշակութային և պատմական արժեք ներկայացնող հուշարձանների ցուցակում: Ներկայումս, ՅՈՒՆԵՍԿՈ-ի համաշխարհային մշակութային ժառանգության ցուցակը, որը, սկսած 1963 թ. համալրվել է առավելքան 630 պատմական հուշարձաններով և բնության տարածքներով ամբողջ աշխարհում, ներառում է նաև Հայաստանի տարածքի որոշ հուշարձաններ: Դրանց շարքում են Հաղպատի վանական համալիրը, Մանահնի վանական համալիրը և միջնադարյան կամուրջը, Էջմիածինն իր բազմաթիվ հուշարձաններով, Զվարթնոցի տաճարը, Գեղարդավանքի համալիրը և Ազատ գետի վերին հատվածը: Հայաստանի տարածքի այլ հուշարձաններ ևս նախապատրաստվում են ընդգրկվելու ՅՈՒՆԵՍԿՈ-ի ցուցակներում, որոնք են՝ Նորավանքի վանական համալիրը, պարսկական Կապույտ մզկիթը և միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Դվինը: Այդ պատճառով մշակութային ժառանգության գնահատումը և կառավարումը նման ծրագրերի իրականացման տարածքի համար գերակա խնդիր է և պահանջում է հնագետի փորձագիտական եզրակացություն:



Հնագիտական փորձագիտության խնդիրներն են.

1. Բացահայտել ծրագրի իրականացման հնարավոր ազդեցությունները նյութական մշակույթի սկզբնաղբյուրների վրա, որոնք են շարժական և անշարժ հուշարձանները, հնավայրերը, կառուցվածքները և լանդշաֆտները, որոնք ունեն, հնագիտական, հնէաբանական, պատմական, ճարտարապետական, կրոնական, գեղագիտական կամ մշակութային նշանակություն;

2. Պատրաստել շրջակա միջավայրի ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հաշվետվության հնագիտական բաղկացուցիչը՝ ներառյալ կառավարման պլանը (ԿՊ-ն), որոնք երկուսն էլ կնախապատրաստվեն ծրագիրը իրականացնող մարմնի (ԻՄ) աջակցությամբ, որն է «Մեծ Մասրիկ» ՍՊԸ -ն:

3. Կազմակերպել նախնական և դաշտային հետազոտություններ նախագծի իրականացման տարածքում առկա հնագիտական հուշարձանների համար, տեղորոշել և բնորոշել հայտնի և նոր հայտնաբերված հնավայրերը, հանդես գալ որոշակի առաջարկներով՝ կապված հուշարձանների վրա ազդեցության մեղմացման միջոցառումների մշակման հետ, որոնք պետք է արտացոլվեն ՇՄԱԳ հաշվետվության մեջ և ԿՊ-ում: Ներկայացվող ՇՄԱԳ հաշվետվության մեջ ուսումնասիրված միավորները պետք է բաժանվեն երկու խմբի՝ հուշարձաններ, որոնք կրում են ծրագրի իրականացման անմիջական ազդեցությունը և հուշարձաններ, որոնք չեն ազդվում ուղղակիորեն կամ ազդվում են անուղղակիորեն: Բոլոր ազդվող հուշարձանների համար ծրագրի իրականացումից առաջ պետք է ներկայացվեն որոշակի եզրակացություններ, որոնք հնարավորություն կտան գնահատել նախագծի բացասական ազդեցությունը մշակութային միավորների և նրանց պատմա-աշխարհագրական միջավայրի վրա:

«Մեծ Մասրիկ» ՍՊԸ-ի կողմից 5,1 մՎտ հզորությամբ «Արև» արևային էներգակայան հիմնելու համար նախատեսված 6 հա ընդհանուր մակերեսով տարածքը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ գյուղի վարչական տարածքում (հողամասի կադաստրային ծածկագիր՝ 05-065-0145-0013)՝ համանուն բնակավայրից 1 կմ արևմուտք (**Քարտեզներ 1 և 1ա**):

Երկրաբանական և երկրաձևաբանական տեսանկյունից ուսումնասիրվող տարածքն իրենից ներկայացնում է Արևելյան Սևանի և Վարդենիսի լեռնաշղթաների



կցակետից արևմուք՝ Մասրիկ գետի հովտում (աջ ափին) տարածվող Մասրիկի սարահարթի մի հատված, որն ունի հիմնականում հարթ ռելիեֆ: Նրան բնորոշ են սևահողային ծածկույթն ու ծովի մակերևույթից միջինում 1933-1935 մ բարձրության վրա գտնվող ալպյան մարգագետինները (**Լուսանկար 3**):

Ծրագրի իրականացման ազդեցության գոտում հայտնվող պատմա-մշակութային միավորների բացահայտման և տեղայնացման համար սկզբնական փուլում օգտվել ենք Հայաստանի Հանրապետության Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակ, Գեղարքունիքի մարզ (տե՛ս Հավելված ՀՀ կառավարության 2002 թ., Հունվարի 9-ի, N80-Ն որոշման) փաստաթղթից, որտեղ Մեծ Մասրիկ բնակավայրում 4.65. դասիչի տակ գրանցված են 12 հուշարձաններ՝ 9-17-րդ դդ. միջնադարյան գերեզմանոց 1-ը (դասիչ՝ 4.65.1), 9-17-րդ դդ. միջնադարյան գերեզմանոց 2-ը (դասիչ՝ 4.65.2), 10-17-րդ դդ. միջնադարյան գերեզմանոց 3-ը (դասիչ՝ 4.65.3), 12-19-րդ դդ. միջնադարյան գերեզմանոց 4-ը (դասիչ՝ 4.65.4), 15-17-րդ դդ. միջնադարյան գերեզմանոց 5-ը կամ Մելիք-Շահնազարյանների տոհմական տապանատունը (դասիչ՝ 4.65.5), 10-17-րդ դդ. «Սըրխանա» կոչվող գյուղատեղին (դասիչ՝ 4.65.6), Ք.ա. 1 հազ. դամբարանը (դասիչ՝ 4.65.7), 13-14-րդ դդ. Ս. Աստվածածին եկեղեցին (դասիչ՝ 4.65.8), 1551 թ. խաչքար 1-ը (դասիչ՝ 4.65.9), 1580 թ. խաչքար 2-ը (դասիչ՝ 4.65.10), 1950-ական թթ. կանգնեցված Երկրորդ աշխարհամարտում զոհվածների հիշատակին նվիրված հուշարձանը (դասիչ՝ 4.65.11) և 1956 թ. կառուցված Մշակույթի տունը (դասիչ՝ 4.65.12): Թվարկված հուշանձանները ծրագրի իրականացման համար հայցվող տարածքից գտնվում են նշանակալի հեռավորության վրա, ուստի որևէ կերպ ազդվել չեն կարող վերջինիս իրականացման արդյունքում: Թվարկված միավորների շարքում ծրագրի իրականացման տարածքին ամենամոտ տեղադրված ունի «Սըրխանա» կոչվող գյուղատեղին, որն ընկնում է տարածքից մոտ 1 կմ արևմուտք:

Բացի ցուցակներում ներառված հուշարձանները, անհրաժեշտ է տեղայնացնել տարբեր արշավախմբերի ուսունասիրության շնորհիվ հայտնաբերված հնավայրերը, որոնք դրևս ընդգրկված չեն հուշարձանների պետական ցանկում, ունեն կամ չունեն նորահայտ հուշարձանի կարգավիճակ, սակայն անկախ դրանից, ենթակա են





պահպանման պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին ՀՀ օրենքի Հոդված 20-ով. Նորահայտ հուշարձանների պահպանության և անվթարության ապահովումը, որը սահմանում է՝ պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող նոր հայտնաբերված կամ նոր արժեքավորված օբյեկտն ստանում է նորահայտ հուշարձանի կարգավիճակ և պահպանվում է մինչև հուշարձանների պետական ցուցակում ընդգրկվելը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով: Նորահայտ հուշարձանը տնօրինող իրավաբանական կամ ֆիզիկական անձը պարտավոր է ապահովել դրա անվթարությունը, իսկ պետության կողմից այն վերցնելու դեպքում սեփականատիրոջ կրած վնասը փոխհատուցվում է օրենսդրությամբ սահմանված կարգով: Հուշարձանի հայտնաբերման փաստը թաքցնող, այն հաշվառելու և ուսումնասիրելու համար արգելքներ ստեղծող, ինչպես նաև գտածոները ոչնչացնող կամ յուրացնող անձը պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Սևանի ավազանում տարբեր տարիներին որոշակի հետազոտություններ և պեղման աշխատանքներ են կատարել ՀՍՍՀ ԳԱ Պատմության, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտների արշավախմբերը, ինչպես նաև հայ-իտալական և հայ-գերմանական համտեղ արշավախմբերը (1994 թ. - առ այսօր), որոնց կողմից կատարված աշխատանքների շնորհիվ փաստագրվել են մեծ քանակի էնեոլիթյան, բրոնզ-երկաթիդարյան և ավելի ուշ հնագիտական դարաշրջաններին վերաբերող նյութեր և հնավայրեր, սակայն ուսումնասիրվող տարածքի հետ առնչվող որևէ փաստագրում առկա չէ հրատարակություններում և դաշտային հաշվետվություններում (տե՛ս Միքայելյան Գ.Հ., 1968; Biscione et al. Eds. 2002):

Եվ վերջապես ս.թ. հուլիսի 17-ին իրականացվել է տարածքի դաշտային-հնագիտական հետազոտություն: Տեղանքի հնագիտական ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ այն ժամանակին ենթարկվել է մելիորացիայի, հարթեցվել, տեղում իրականացվել է քարհավաք և երկար տարիներ այն օգտագործվել է գյուղատնտեսական նպատակներով (որպես ցանքաստարածություն և արոտավայր), որպիսին շարունակում է օգտագործվել է մինչև օրս: Ուստի, եթե այստեղ հնագիտական հուշարձաններ անգամ եղել են, ապա արտաքին նշաններ չեն



պահպանվել (Լուսանկարներ 1-7): Ստուգվել են տարածքում առկա քարակույտերը, որոնք ոչ այլ ինչ են քան ժամանակին իրականացված քարհավաքների մնացորդներ (Լուսանկար 6): Ուսումնասիրության են ենթարկվել նաև տարածքում առկա փորվածքներում երևացող շարտագրական իրավիճակները, որը ներկայացված է ժամանակակից բուսահողի և Սևանա լճի սպիտակադեղնավուն երանգ ունեցող լճային նստվածքների հերթափոխով (վերից վար): Այս հետազոտության արդյունքում պատմա-մշակութային որևէ միավոր կամ դրանց հետքեր, ինչպես նաև հնագիտական նյութեր չեն փաստագրվել (Լուսանկար 8):

Ամփոփելով ներկայացված տեղեկատվությունը կարող ենք նշել, որ Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ գյուղի վարչական սահմաններում «Մեծ Մասրիկ» ՍՊԸ-ի կողմից 5,1 ՄՎտ հզորությամբ «Արև» արևային ֆոտովոլտային էներգակայանը հիմնելու համար նախատեսված, ընդհանուրը՝ 6 հա մակերեսով տարածքը պատմա-մշակութային միավորների վրա հնաարավոր բացասական ազդեցության տեսանկյունից ռիսկեր չունի, քանի որ այստեղ պատմա-մշակութային միավորներ չեն փաստագրվել:

Հայկ Հայդոսյան  
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության  
Ինստիտուտ, Վաղ Հնագիտության բաժնի  
Կրտսեր գիտաշխատող

Անի Ադիգյոզալյան  
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության  
Ինստիտուտ, Վաղ Հնագիտության բաժնի  
Ավագ լաբորանտ

Բորիս Գասպարյան  
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության  
Ինստիտուտ, Վաղ Հնագիտության բաժնի  
Գիտաշխատող

Դմիտրի Առաքելյան  
ՀՀ ԳԱԱ Երկրաբանության ինստիտուտ  
Գիտաշխատող



15.07.2024 թ.


## Օգտագործված գրականության ցանկ

1. Պետական ցուցակ Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների՝ Գեղարքունիքի մարզ, Հավելված ՀՀ կառավարության 2002 թ., Հունվարի 9-ի, N80-Ն որոշման,
2. Միքայելյան Գ.Հ., 1968, Սևանի ավազանի կիկլոպյան ամրոցները, «Հայաստանի հնագիտական հուշարձանները» շարքից, 1, Բրոնզեդարյան հուշարձաններ, Պրակ I, Պրակի խմբագիր՝ Հ.Ա. Մարտիրոսյան, Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Հրատարակչություն, Երևան, 1968, 180 էջ,
3. Геология Армянской ССР, т. I, Геоморфология, Ответственный редактор Н.В. Думитрашко, Издательство Академии Наук Армянской ССР, Ереван, 1962;
4. Геология Армянской ССР, т. II, Стратиграфия, Ответственный редактор К.Н. Паффенгольц, Издательство Академии Наук Армянской ССР, Ереван, 1964;
5. Biscione R., Hamayakyan S., Parmegiani N., (Eds.), With contributions by R. Biscione, A. Gevorkyan, H. Hakobyan, S. Hmayakyan N. Parmegiani, M. Poscolieri, M. Salvini, H. Sanamyan, Y.V. Sayadyan, G. Tumanyan, N. Yengibaryan, The North-Eastern Frontier, Urartians and Non-Urartians in the Sevan Lake Basin, I. The Southern Shores, CNR, Istituto Di Studi Sulle Civiltà Dell'EgeoE Del Vicino Oriente, Roma, 2002, ISBN 88-87345-06-6, 470 pp.



## Քարտեզներ և լուսանկարներ

### Քարտեզ 1



Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ գյուղի վարչական սահմաններում գտնվող «Մեծ Մասրիկ» ՍՊԸ-ի կողմից 5,1 ՄՎՏ հզորությամբ «Արև» արևային ֆոտովոլտային էներգակայանի կառուցման աշխատանքների համար նախատեսված 6 հա ընդհանուր մակերեսով տարածքը





## Քարտեզ 1ա




Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ գյուղի վարչական սահմաններում գտնվող «Մեծ Մասրիկ» ՍՊԸ-ի կողմից 5,1 ՄՎՏ հզորությամբ «Արև» արևային ֆոտովոլտային էներգակայանի կառուցման աշխատանքների համար նախատեսված 6 հա ընդհանուր մակերեսով տարածքը





**Լուսանկար 1.** «Մեծ Մասրիկ» ՍՊԸ-ի կողմից Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ գյուղի սահմաններում արևային կայան կառուցելու համար նախատեսված տարածքը հյուսիս-արևմուտքից (օդալուսանկար)



**Լուսանկար 2.** «Մեծ Մասրիկ» ՍՊԸ-ի կողմից Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ գյուղի սահմաններում արևային կայան կառուցելու համար նախատեսված տարածքի արևմտյան հատվածը (օդալուսանկար)





**Լուսանկար 3.** «Մեծ Մասրիկ» ՍՊԸ-ի կողմից Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ գյուղի սահմաններում արևային կայան կառուցելու համար նախատեսված տարածքի կենտրոնական հատվածը (օդալուսանկար)



**Լուսանկար 4.** «Մեծ Մասրիկ» ՍՊԸ-ի կողմից Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ գյուղի սահմաններում արևային կայան կառուցելու համար նախատեսված տարածքի արևելյան հատվածը (օդալուսանկար)





**Լուսանկար 5.** «Մեծ Մասրիկ» ՍՊԸ-ի կողմից Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ գյուղի սահմաններում արևային կայան կառուցելու համար նախատեսված տարածքի մակերևույթը (օդալուսանկար)



**Լուսանկար 6.** «Մեծ Մասրիկ» ՍՊԸ-ի կողմից Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ գյուղի սահմաններում արևային կայան կառուցելու համար նախատեսված տարածքի մակերևույթը (օդալուսանկար)





**Լուսանկար 7.** «Մեծ Մասրիկ» ՍՊԸ-ի կողմից Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ գյուղի սահմաններում արևային կայան կառուցելու համար նախատեսված տարածքը հարավարևելքից (օդալուսանկար)



**Լուսանկար 8.** «Մեծ Մասրիկ» ՍՊԸ-ի կողմից Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ գյուղի սահմաններում արևային կայան կառուցելու համար նախատեսված տարածքի հարևանությամբ փորված տեղամաս